



Զիաց Մեր Հանապազորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ • ՆՈՅԵՄԲԵՐ • ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019



Նա է Աստվածն իմ ու փրկիչն իմ, ապավենն իմ,
որ չսասանվեմ:

ՍԱՂՄՈՍ 61.7

Հարգելի՛ բարեկամ,

Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած ար-ելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

Մարմաշենի միջնադարյան վանքը Շիրակի մարզի Մարմաշեն գյուղից երկու կմ հյուսիսարևմտյան մասում է՝ Ախուրյան գետի ձախ ափին:

Բաղկացած է երկու խումբ շինություններից՝ Մեծ և Փոքր (կամ Վերին): Վանքի գլխավոր՝ Կաթողիկե եկեղեցին, ըստ հարավային պատին պահպանված արձանագրության, կառուցել է Վահրամ Պահլավունին՝ 988-1029 թթ.: Սելջուկյան արշավանքներից Մարմաշենի վանքը զգալիորն ավերվել է: 1225-ին Վահրամ Պահլավունու թոռները՝ Գրիգոր արքեպիսկոպոսը և նրա եղբայր Ղարիբը վերանորոգել են Կաթողիկեն:

Վանքի երկրորդ եկեղեցին Կաթողիկեից մի փոքր հյուսիս է, հավանաբար միաժամանակ է կառուցված և ասես Կաթողիկեի փոքրացված տարբերակը լինի. թե՛ ճարտարապետական հորինվածքով, և թե՛ հարդարանքով:

Երրորդ եկեղեցին (11-րդ դար) հարավային կողմում է: Կաթողիկեի արևմտյան կողմում է 8-րդ դարի շինությունն երին բնորոշ՝ քառաայուն կենտրոնակազմ հորինվածքով գավիթը, որը ծառայել է որպես տապանատուն: Այստեղ է թաղված Վահրամ Պահլավունին:

Գավթից հարավ-արևմուտք 1954-1956 թթ. պեղումների ժամանակ բացվել է վանքի չորրորդ եկեղեցին: Համալիրի արևելքում և հարավում գերեզմանատունն է: Վանքն ունեցել է իր ջրմուղը: Փոքր Մարմաշենը կամ Վերին վանքը Մեծից հյուսիս է՝ բլրակի վրա: Մարմաշենի վանքը Հայաստանի կրոնական ու մշակութային նշանավոր կենտրոններից է եղել, հայկական հոգևոր և ճարտարապետական արժեքավոր համալիրներից:

**Լուսանկարը՝ Լարա Գայսերեանի
Փենսիլվենիա, ԱՄՆ
Lara Kaiserian, PA, USA**



Ձեռք մեր հանապազորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածուլթյուններ

Լ ՏԱՐԻ

Դ ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible
Class ընկերությունը, որի թուլյութուլթյամբ Our Daily Bread
գրքուլկից թարգմանել ենք հաջորդ էջերի
խորհրդածուլթյունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլիոստ՝ amaa.armenia@amaa.am

Կե՛ր ու կրկնի՛ր

Երբ Քերրին ու Փոլն ամուսնացան, երկուսն էլ ճաշ եփել չգիտեին: Եվ մի օր Քերրին որոշեց շատ մակարոն եփել, որպեսզի հաջորդ օրն էլ ուտեն: Երրորդ օրը Փոլն առաջարկեց, որ ինքը պատրաստի այդ օրվա ճաշը և կրկնապատկեց մակարոնն ու սոուսը՝ հոսալուով, որ այն կբավարարի մինչև շաբաթվա վերջը: Երբ զույգը ընթրիքի նստեց, Քերրին խոստովանեց, որ արդեն ձանձրացել է մակարոն ուտելուց:

Պատկերացրու, որ Իսրայելի ժողովուրդը նույն ճաշն էր ուտում քառասուն տարի: Ամեն առավոտ նրանք հավաքում էին Աստծո տված այդ անուշահամ «ընտիր ճաշը», եփում՝ առանց հաջորդ օրվա համար պահելու, բացի ուրբաթ օրվանից, երբ հաջորդ օրը շաբաթ էր՝ Տիրոջ հանգստյան սուրբ օրը (Ել. 16.23-26): Վստահաբար նրանք փորձեցին իրենց ստեղծագործ միտքը և եփեցին ու թխեցին մանանան (Հմ. 23), բայց շատ էին կարոտում այն լավ ճաշը, որ ունեին եզրիպտոսում (Հմ. 23, Թվեր 11.1-9), չնայած դա ստացել էին իրենց բռնության ու գերության գնով:

Մենք էլ երբեմն նեղվում ենք, որ մեր կյանքը այն չէ, ինչ որ ժամանակին էր, կամ կյանքի «միապաղաղությունն է» դժգոհության առիթ դառնում: Բայց Ելից 16-ը ասում է, թե Իսրայելի ժողովրդի հանդեպ Աստծո նախատեսածը պատճառ էր դարձել, որ նրանք ամեն օր վստահեն իրեն ու իր տված հոգատարությանը: Աստված խոստանում է մեզ տալ այն ամենը, ինչի կարիք որ ունենք: Նա գոհացնում է մեր ցանկությունները և մեր հոգին լցնում «բարությամբ» (Սաղմոս 106. 9):

Աղոթք - Հայ՛ր, շնորհակալ եմ իմ մասին հավատարմորեն հոգալու Քո խոստման և իմ բոլոր կարիքները գոհացնելուդ համար: Ամեն:

Կարիքներ ու ցանկություններ միշտ էլ կունենանք, կարևորը Աստծոն վստահելն է:

Կարդա՛
Ելք 16. 14-18

...Մենք կորչում ենք, մեր աչքերը մանա-
նայից բացի ուրիշ
ոչինչ չեն տեսնում:
Թվեր 11.6

Աղվեսներ բռնել

Երբ առաջին անգամ մեր տունն չղջիկ մտավ, մենք դա պատահականությունն համարեցինք: Բայց երբ դա կրկնվեց, ես համացանցում փնտրեցի ու իմացա, որ չղջիկների ներս մտնելու համար առանձնապես մեծ բացվածքներ պետք չեն: Բավական է մի փոքրիկ, նույնիսկ մետաղադրամի չափ անցք, և դրանք ներս են մտնում: Ու ես վերցրի համապատասխան գործիքը և պտտվելով մեր տան շուրջը՝ բոլոր ճեղքերն ու բացվածքները կուպրով լցրեցի:

Երգ Երգոցի 2.15-ում Սողոմոնը մեկ այլ խնդրահարույց կենդանու մասին է նշում՝ գրելով «փոքրիկ աղվեսների» մասին, որոնք կարող են «ապականել այգիները»: Նրա ասածը խորհրդանշում է այն սպառնալիքները, որոնք կարող են մտնել մարդկային հարաբերությունների մեջ ու փչացնել դրանք: Չեմ ուզում վիրավորել չղջիկ ու աղվես սիրողներին, բայց չղջիկներին մեր տնից և աղվեսներին մեր այգիներից հեռացնելը մի քիչ նման է մեր կյանքում եղած մեղքերի հետ վարվելուն (Եբ.5.3):

Աստծո շնորհիվ մեր մեջ գործում է Սուրբ Հոգին, որպեսզի «մարմնավոր կերպով չվարվենք, այլ հոգևոր» (Հռոմ. 8.4): Փառք Աստծո. Քրիստոսով մենք հիմա «աշխարհի լույսն ենք ու կարող ենք ապրել այնպես, որ Նրան հաճելի լինի (Եփ. 5.14): Հոգին կօգնի մեզ, որ կարողանանք այդ փոքրիկ աղվեսներին բռնել:

Աղոթք - Տե՛ր, գիտեմ իմ տկարությունները: Խնդրում եմ գործածի՛ր զորությունդ ինձ ուժ տալու համար, որպեսզի մեղքի՛ն դիմակայելով՝ կարողանամ չվնասել Քեզ հետ ունեցած իմ հարաբերությունը: Ամեն:

Մեղքի պատճառով մենք բոլորս էլ փոքրիկ աղվեսներ ունենք մեր կյանքում: Սակայն Հոգու զորությամբ կարող ենք դրանց դիմակայել:

Կարդա՛ Եփեսացիներ 5.1-13

Բռնեցե՛ք փոքրիկ աղվեսներին, որ ապականում են այգիները:
Երգ Երգոց 2.15

Սիրո աջակցությունը

Օվկիանոսագետների տվյալներով՝ Մերի Լին 2012-ին Մի-
ացյալ Նահանգների արևելյան ծովափին շրջագայող 16
ոտք հասակով ու 5600 կգ կշռող մեծ, ճերմակ մի շնաձուկ էր,
որի թիկունքին ամրացված արբանյակային հազորգիչ սարքի
միջոցով կարելի էր հետևել նրան, երբ ջրի մակերեսին էր
հայտնվում: Հինգ տարի շարունակ շատերը համացանցի միջո-
ցով շուրջ քառասուն հազար մղոնի
վրա հետևում էին Մերի Լին բոլոր շար-
ժումներին, մինչև որ մի օր նրանից
ստացվող ազդանշանները, հավանա-
բար սարքի մարտկոցի լիցքաթափվելու
պատճառով, դադարեցին:

Մարդկային գիտությունն ու արվես-
տը որոշակի տեղ կարող են հասնել ըն-
դամենը: Մերի Լին հետևողները չկարողացան շարունակել
նրան հետևել, բայց դու և ես մեր ամբողջ կյանքում չենք կա-
րող խուսափել Աստծո աչքից: Դավիթն ազոթեց և ասաց.
«Ու՞ր գնամ ես քո հոգուց, կամ քո դեմքից ու՞ր փախչեմ: Եթե
երկինք ելնեմ, այնտեղ ես դու, եթե դժոխք իջնեմ, դրան էլ մոտ
ես» (Սաղմոս 138.7-8): «Զարմանալի է քո իմացությունն իմ
մասին» (Հմ.6):

Աստված ուզում է մեզ լավ ճանաչել, որովհետև մեզ սիրում
է: Նա հոգում է ոչ միայն մեր կյանքը վերահսկելու, այլև նրա
մեջ մտնելու և այն նորոգելու մասին: Նա մեզ մոտեցավ Տեր
Հիսուսի կյանքով, մահով ու հարությունով, որպեսզի մենք կա-
րողանանք հավիտյան Իրեն ճանաչել ու սիրել:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ միշտ ինձ տեսնում ես:
Օգնիր, որ կարողանամ Քո սիրո ու ներկայության գիտակ-
ցունով աճել: Ամեն:

**Քաջալերվիր, որովհետև Աստված քեզ լավ ճանաչում ու
սիրում է: Ուստի ուրիշներին մոտեցիր Նրա սիրով:**

Կարդա՛

Սաղմոս 139. 1-10

Ո՛վ Աստծու մեծու-
թյան, իմաստության
և գիտության խո-
րություն...:

Հռոմ. 11.33

Նա հանդարտեցնում է փոթորիկը

Զիմը զայրացած խոսում էր գործընկերների հետ ունեցած իր դժվարությունների մասին: Մեկ ժամ համբերությունս նրան լսելուց հետո առաջարկեցի. «Խնդրենք Տեր Հիսուսին և հարցնենք, թե ինքն ի՞նչ կաներ նման պարագայում»: Հինգ րոպե լուռ նստելուց հետո հիանալի մի բան պատահեց: Երկուսս էլ զգացինք մեզ վրա տարածվող Աստվածային խաղաղությունը և հանդարտվեցինք: Ունենալով Աստծո առաջնորդության ու ներկայության փորձառությունը՝ մենք դժվարությունները հաղթահարելու վստահություն ստացանք:

Պետրոսն էլ ունեցավ Աստծո մխիթարող ներկայության կարիքը: Մի գիշեր, երբ ինքն ու մյուս աշակերտները նավարկում էին Գալիլիո ծովի վրա, ուժեղ փոթորիկ սկսվեց: Եվ հանկարծ նրանց երևաց ծովի վրայով քայլող Հիսուսը: Բնականաբար, դա աշակերտների համար անակնկալ էր: Հիսուսը նրանց վստահեցրեց՝ ասելով. «Քաջալերվե՛ք, ես եմ, մի՛ վախեցեք» (Մատթ. 14:27): Պետրոսը երկմտելով հարցրեց Հիսուսին, թե կարո՞ղ է ինքը ջրի վրա քայլելով մոտենալ Իրեն: Նա թույլ տվեց, և Պետրոսը դուրս եկավ նավից ու քայլեց դեպի Հիսուսը: Սակայն շուտով կորցրեց իր կենտրոնացումը և զգալով, որ ընկղմվում է, աղաղակեց. «Տե՛ր, փրկի՛ր ինձ» (Հմ.30): Հիսուսը սիրով ազատեց նրան (Հմ.30-31):

Պետրոսի նման մենք էլ կարող ենք սովորել, որ Հիսուսը մեզ հետ է նույնիսկ կյանքի փոթորիկների մեջ:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ մեր կյանքի փոթորիկները խաղաղեցնելու հեղինակությունն ու զորությունն ունես: Օգնի՛ր մեզ, որ կարողանանք վստահել Քեզ: Ամեն:

Երբ կյանքի փոթորիկները սպառնան քեզ, ուշադրությունդ նրան դարձրու, ով կարող է քեզ փրկել:

Կարդա՛
Մատթեոս 14. 23-33
Հիսուսն իսկույն խոսեց նրանց հետ ու ասաց. «Քաջալերվեցեք, ես եմ, մի՛ վախեցեք»:
Մատթ. 14.27

Ավելի լավ

Երբ որպես երիտասարդ գրող մասնակցում էի գիտաժողով-ներին, անվստահությունն ունեի: Շուրջս հսկաներ էին՝ մարդիկ, որոնք ունեին կանոնավոր կրթությունն ու փորձառություն: Ես ոչ մեկը չունեի: Բայց իմ ականջն էլ ձևավորվել էր Ջեյմս Թագավորի Աստվածաշնչի լեզվի ու կշռույթի ազդեցությամբ: Այս հանգամանքը այն այսպես ասած «զրահն» էր, որը ձևավորում էր իմ ոճն ու հաճելիորեն էր հնչում ինձ և հոստով եմ՝ նաև այլոց համար:

Կարդա՛
Ա Թագ. 17. 34-39

Գնա՛, Տերը քեզ հետ
քող լինի:
Ա Թագ. 17.37

Մենք այն տպավորությունը չենք ստացել, թե երիտասարդ հովիվ Դավիթն ինքնավստահ էր, երբ Գողիաթի դեմ կռվելու համար իրեն տրվեց Սավուղի զրահը (Ա. Թագ.17. 38-39): Նա չկարողացավ դրանով քայլել՝ հասկանալով, որ մեկի զրահը մեկ ուրիշի համար բանտ կարող է լինել և ասաց. «Արանցով չեմ կարող քայլել» (Հմ.39): Հետևաբար նա վստահեց իր իմացածին: Աստված նրան այդ պահի համար պատրաստել էր հարկ եղած բաներով (Հմ.34-35): Պարսատիկն ու քարերն էին Դավիթի զենքն ու զրահը, և Աստված էլ դրանք գործածեց Իսրայելի ժողովրդին ուրախություն պարգևելու համար:

Եղել են պահեր, երբ դու էլ վստահ չես զգացել և մտածել ես. «Եթե միայն ունենայի այն, ինչ մեկ ուրիշն ունի, այն ժամանակ կյանքս բոլորովին այլ կլիներ»:

Նկատի ունեցի՛ր այն պարզեւներն ու փորձառությունը, որ Աստված հենց քեզ է տվել: Վստահի՛ր Աստծո տված զրահին:

Աղոթք - Գերիշխան Աստված, հաճախ վստահ չեմ լինում, հատկապես երբ իմ դիմագրաված մարտահրավերները շատ մեծ են թվում: Օգնի՛ր՝ վստահ լինեմ, որ Դու կտաս այն, ինչի կարիքն ունեմ: Դու՛ ես ձևավորել իմ կյանքը: Ամեն:

Աստված կտա քեզ պետք եղած զենքն ու զրահը՝ կյանքը դիմագրավելու համար:

Արա՛ այն, ինչ նա է ասում

Բրայընը հրավիրված էր եղբոր պսակադրուկթյանը, բայց չեկավ: Հասկանալի էր ընտանիքի հուսախաբուկթյունը, հատկապես քրոջ՝ Ժամսինի, որն այդ առիթով Աստվածաշնչի ընթերցումն էր անելու: Պսակի արարողուկթյան ժամանակ Ժամսինը անթերի կարգաց Ա. Կորնթ. 13-ում սիրո մասին գրված հայտնի հատվածը: Բայց արարողուկթյունից հետո, երբ հայրը նրան խնդրեց, որ Բրայընի տարեդարձին մի նվեր անի, նա կարկամեց: Դժվարացավ սիրո մասին եղած բառերը կարգալուց բացի՝ նաև կիրառել: Օրը չվերջացած, սակայն, նա մտափոխվեց՝ ասելով. «Ձեմ կարող կարգալ սիրո մասին Աստծո խոսքը և գործնականի չվերածել այն»:

Երբևէ դատապարտված եղե՞լ ես այն վիճակին, երբ դժվարացել ես Աստծ՝ քո կարգացած ո խոսքը գործադրել: Դու մենակ չես: Որովհետև ավելի դյուրին է կարգալ ու լսել Աստծո խոսքը, քան նրան հնազանդվել: Ուստի պատշաճ է Հակոբի տված մարտահրավերը. «Բայց խոսքը կատարողներ եղեք և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Հակ.1.22): Նրա բերած հայելու օրինակը մեր ժպիտն է առաջացնում, որովհետև գիտենք՝ ինչ է նշանակում տեսնել մեր մասին մի բան, որն ուղադրուկթյան կարիք ունի: Մենք խաբված կլինենք, եթե մտածենք, որ տեսնելը բավարար է: Երբ Հակոբոսը մեզ հորդորում է ուղադրուկթյամբ նայել Աստծո ճշմարտությանն ու թափանցել ազատության կատարյալ օրենքի մեջ և նրա մեջ մնալ (Հմ.25), նա մեզ քաջալերում է անել այն, ինչ Ժամսինն արեց: Աստծո խոսքը կոչ է անում մեզ նույնը անել:

Աղոթք - Երկնավոր Հայր, օգնի՛ր հասկանալ, թե ինչ է նշանակում նայել Քո խոսքին և ապրել այնպես, ինչպես թելադրում է Քո խոսքը: Ամեն:

Նայի՛ր Աստծո խոսքին ու նրա համաձայն փոխի՛ր քո կյանքը:

Կարդա՛ Յակոբոս 1. 22-25

Երանի նրանց, որ Աստծու խոսքը լսում են ու պահում այն: Դուկաս 11. 28

Աստծո սիրտը կեղծավորների համար

Կրիկեստ խաղացողներից մեկը, ակնարկելով 2016-ի խաղերում խարդախություն արած հարավաֆրիկացի մի մասնակցի, ասել էր. «Կհուսախաբվեմ, եթե մեր խմբից որևէ մեկն անի նման բան»: Սակայն երկու տարի անց այդ խաղացողն ինքը բռնվեց նման ամոթալի խայտառակության մեջ: Կեղծիքների ու խարդախության առիթներ մեր կյանքում պատահում են: Սակայն Ծննդոց գրքի 38-րդ գլխի պատմությունը ցույց է տալիս, որ Հուդայի խարդախությունը գրեթե մահացու հետևանքներ ունեցավ: Թամարի հետ ամուսնացած իր երկու որդիների մահից հետո Հուդան նրան ուղարկեց հոր տուն, մինչև որ կմեծանար իր մյուս որդի Սելոմը (Հմ.8-11): Որոշ ժամանակ անց, տեսնելով, որ Հուդան իրեն կնություն չի տալիս արդեն մեծացած Սելոմին, Թամարը, պոռնիկի քողով ծածկված, նստեց ճանապարհին, և Հուդան անգիտակցաբար կենակցեց նրա հետ (Հմ.15-16): Իմանալով, որ իր հարսը պոռնկանալու պատճառով հղիացել է, Հուդան ասաց. «Դու՛րս հանեցեք նրան, թող ողջ-ողջ այրվի» (Հմ.24): Սակայն Թամարը փաստ ուներ, որ իր որովայնում եղած մանկան հայրը Հուդան է (Հմ.25): Հուդան կարող էր ուրանալ ճշմարտությունը, բայց ընդունեց իր սխալը և ստանձնեց Թամարի նկատմամբ հոգատար լինելու պարտավորությունը՝ ասելով. «Նա ավելի արդար է, քան ես» (Հմ.26): Աստված նույնիսկ Հուդայի ու Թամարի պատմության այս մուլթ մասը հյուսեց մեր փրկության համար եղած իր պատմությանը, որովհետև Թամարի զավակները պիտի լինեին Հիսուսի նախահայրերը (Մատթ. 1.2-3): Ինչո՞ւ է Ծննդոց 38-ը Աստվածաչնչի մեջ: Պատճառներից մեկը մեր մարդկային կեղծավոր սիրտն է և Աստծո՝ սիրո, շնորհի ու ողորմության սիրտը:

Կարդա՛
ՕՆՈՂՈՑ 38.16-26

Նա ավելի արդար է, քան ես:
ՕՆՈ. 38.26

Աղոթք - Հայր, օգնի՛ր, որ տեսնեմ այն իրողությունը, թե մենք բոլորս կեղծավոր ենք և Քո ներումի կարիքն ունենք: Ամեն:

Կեղծավորների ու կեղծիքների կհանդիպենք:
Բայց կարևոր է խորամուխ լինել և ընդունել մեր մեղքը:

Ապաստան փոթորիկից

1763 թվականին երիտասարդ եկեղեցական մի հովիվ ճամփորդում էր Անգլիայի Սոմերսետ շրջանում և տեղատարափ անձրևից ու կայծակից պաշտպանվելու համար մտավ մի քարայր: Դուրս նայելով քարայրից՝ նա մտածում էր Աստծո մեջ ապաստան ու խաղաղություն գտնելու պարզևի մասին և սկսեց գրել «Տարիների ժայռը» երգի առաջին տողերը. «Տարիների ժայռը՝ բացված ինձ համար»:

Մենք չգիտենք՝ Ավգուստոս Թոփլազին այս երգը գրելիս մտածե՞լ է արդյոք ժայռի ծերպի մեջ Մովսեսի ունեցած փորձառության մասին (Ել. 33.22), բայց հավանաբար մտածել է: «Ելք» գրքում նկարագրված այդ դեպքը ցույց է տալիս, թե ինչպես է Մովսեսը փնտրում Աստծո երաշխիքն ու պատասխանը: Երբ նա Աստծոն ասաց, որ ցույց տա իր փառքը, Տերը պատասխանեց. «Դու չես կարող տեսնել իմ երեսը, որովհետև մարդ չի կարող տեսնել իմ երեսն ու ողջ մնալ» (Հմ.20): Նա Մովսեսին ծածկեց ժայռերի մեջ, մինչև որ ինքը անցնի այդտեղով՝ թույլ տալով, որ Մովսեսն իրեն միայն թիկունքից տեսնի: Եվ Մովսեսն իմացավ, որ Աստված իր հետ է:

Կարող ենք վստահ լինել, որ ինչպես Աստված Մովսեսին ասաց. «Ես ինքս պիտի գնամ քո առջևից», մենք էլ ապաստան կգտնենք Իր մեջ: Մեր կյանքում շատ փոթորիկներ ու փորձություններ կարող են լինել, բայց մենք կարող ենք Իրեն կանչել և Նա մեզ կպարզևի Իր ներկայության խաղաղությունը:

Կարող ենք վստահ լինել, որ ինչպես Աստված Մովսեսին ասաց. «Ես ինքս պիտի գնամ քո առջևից», մենք էլ ապաստան կգտնենք Իր մեջ: Մեր կյանքում շատ փոթորիկներ ու փորձություններ կարող են լինել, բայց մենք կարող ենք Իրեն կանչել և Նա մեզ կպարզևի Իր ներկայության խաղաղությունը:

Աղոթք - Հայր, օգնիր՝ կարողանամ վստահել, որ Դու ինձ հետ ես նույնիսկ կյանքիս փոթորիկների մեջ: Ամեն:

Կյանքի փոթորիկներ կունենանք, վստահ լինենք, որ Աստված միշտ մեզ հետ է::

Կարդա՛ Ելք 33. 12-23

Երբ ես անցնեմ իմ փառքով, քեզ կդնեմ ժայռի ծերպի մեջ և իմ ձեռքով կծածկեմ քեզ, մինչև որ անցնեմ: Ելք 33.22

Համբերի՛ր

Վերջերս լրացավ աներոջս յոթանասունութ տարին, և նրա մեծարման ընտանեկան հավաքույթի ժամանակ մեկը հարցրեց հոբելյարին. «Ո՞րն է այն ամենակարևոր բանը, որ սովորեցիր քո կյանքում»: Աներս պատասխանեց՝ համբերելը:

Համբերել:

Մխալ է այս բառն անտեսելը կամ շատ պարզ մի բան համարելը: Եվ աներս հենց այդպես էջր ասում այդ բառը կամ լավատեսություն առաջացնում: Նա շատ դժվարություններ էր հաղթահարել իր կյանքում, և հարատեկու հաստատակամությունը հիմնված էր ոչ թե ինչ-որ անորոշ հույսի վրա, թե ամեն ինչ լավ է լինելու, այլ իր կյանքում Քրիստոսի արած գործի:

«Համբերությունը» Աստվածաշնչում հաստատակամ առաջ գնալ է նշանակում, որը միայն կամքի ուժով հնարավոր է: Մենք հաստատակամ առաջ ենք ընթանում, որովհետև Աստված խոստացել է, որ Ինքը մեզ հետ է, մեզ ուժ է պարգևում և իրագործում է Իր նպատակները մեր կյանքում: Դա էր այն պատգամը, որ Նա Եսայի մարգարեի միջոցով տվեց Իսրայելի ժողովրդին. «Դու մի՛ վախեցիր, քանզի ես քեզ հետ եմ, մի՛ խաբվիր, քանզի ես եմ քո Աստվածը, ես, որ զորացրի քեզ, օգնեցի քեզ ու պահպանեցի քեզ իմ արդար աջով» (Ես. 41.10): Ըստ Եսայի մարգարեի՝ հույսի հիմքը Աստծո նկարագիրն է: Աստծո բարությունն իմանալը մեզ թույլ է տալիս, որ մենք կարողանանք անվախ կառչել Իր խոստմանը:

Աղոթք - Հայր, սերդ մեզ տալիս է «համբերելու» համար անհրաժեշտ բոլոր բաները: Օգնի՛ր, որ հիշենք զորություն տալու Քո խոստումն ու ամեն օր վստահենք նրան: Ամեն:

Մեր կյանքում վախեր կունենանք, բայց վստահ լինենք, որ Աստված մեզ համար նախատեսություններ ունի:

Կարդա՛ր
Եսայի 41. 8-13

Ես եմ քո Աստվածը, ես, որ զորացրի քեզ, օգնեցի քեզ ու պահպանեցի քեզ իմ արդար աջով: Ես. 41.10

Մի՛ մոռանա

Քրոշս աղջիկը, իր չորս տարեկան աղջնակը՝ Քայլինը և ես շատ լավ երեկո անցկացրինք: Զվարճացանք. պղպղակի փուչիկներ փչեցինք, ներկելու գրքի մեջ ներկեցինք ու սենդվիչներ կերանք: Երբ նրանք մեքենա նստեցին, որ վերադառնան, Քայլինը բաց պատուհանից քնքշորեն ասաց. «Ինձ չմոռանա՛ս, հորաքույր է՛նն»: «Ես քեզ չեմ կարող մոռանալ, խոստանում եմ՝ շուտով դարձյալ տեսնվել», - շշնջացի ես:

Գործքի առաջին գլխում աշակերտները վերև նայեցին, և Հիսուսը նրանց նայելու ժամանակ համբարձվեց (Հմ.9): Խորհում եմ, թե նրանք էլ մտածեցի՞ն արդյոք, որ Տերը իրենց պիտի մոռանա:

Ձէ՞ որ մի քանի օր առաջ Նա խոստացել էր իր Հոգին ուղարկել, որպեսզի նրանց մեջ բնակվի ու զորացնի՝ դիմադրավելու համար այն հալածանքներին, որ պիտի լինեն (Հմ.8): Նա ասաց իր աշակերտներին. «Երբ ես գնամ ու ձեզ համար տեղ պատրաստեմ, նորից կգամ ու ձեզ ինձ մոտ կվերցնեմ, որպեսզի ուր որ ես եմ, դուք էլ լինեք» (Հովհ. 14:3): Բայց նրանք անհանգիստ էին, թե դեռ որքան են սպասելու: Եվ ուզում էին ասել. «Հիսու՛ս, մեզ մի՛ մոռացիր»:

Նրանք, ովքեր հավատում են Հիսուսին, գիտեն, որ Նա մեր մեջ է բնակվում Սուրբ Հոգու միջոցով: Այնուամենայնիվ մտածում ենք, թե ե՞րբ է գալու և մեզ ու իր ստեղծագործութունը ազատի: Նա մեզ չի մոռանա: Այդ խոստման մասին է ասում Պողոս առաքյալը. «Իրար քաջալերե՛ք և իրար շինություն տվեք, ինչպես որ անում էլ եք» (Ա. Թես. 5. 10-11):

Աղոթք - Տե՛ր, ուրախ ենք, որ հիմա Քեզ հետ ենք քայլում, բայց ուզում ենք առաջ նայել, այն օրվան, երբ ամեն ինչ ամբողջովին նորոգվելու է: Տե՛ր Յիսուս, շու՛տ արի: Ամեն:

Աստված ներկա է մեր կյանքում, բայց մենք առաջ ենք նայում՝ հավիտենապես իր հետ լինելու համար:

Կարդա՛
Գործք Առ. 1. 1-11

Յամբարծվեց, և մի ամպ նրան վերցրեց նրանց աչքերից: Գործք Առ. 1.9

Հիմնական դերակատարը

Լսել էի մի աշակերտի մասին, որը աստվածաբանական հոգևոր կազմի ճեմարանում քարոզաբանություն էր սովորում: Մի օր երիտասարդ սանը ճարտասանական հմտություններ ու եռանդով իր քարոզը մատուցեց և ինքնագոհ նստեց: Դասախոսը մի պահ լուռ մնաց, ապա ասաց. «Շատ լավ ծրագրված ու խնամքով պատրաստված քարոզ էր: Բայց Աստծո անունը որևէ նախադասություն մեջ նշված չէր»:

Դասախոսը մատնանշեց մի հարց, որը հաճախ է մեզանից շատերին հանդիպում: Շեշտելով մեր գործողությունները՝ մենք խոսում ենք այնպես, ասես մենք ենք հիմնական դերակատարը: Այն դեպքում, երբ մեր կյանքի գլխավոր դերակատարը Աստված էինքն է: Մենք հաճախ ընդունում ենք, թե Աստված է «իշխում», բայց վարվում ենք այնպես, ասես ամեն ինչ մեզանից է կախված:

Խոսքը պնդում է, որ Աստված է իսկական նյութը և մեր կյանքի մղիչ ուժը: Նույնիսկ մեր հավատքով անհրաժեշտ գործը կատարվում է «Տիրոջ անվամբ» և Աստծո զորություններով (Սաղմոս 117.10-11): Աստված հաստատում է մեր փրկությունները, ազատում է մեզ և հոգում մեր կարիքները: «Տիրոջից եղավ այս բանը» (Հմ. 23):

Հետևաբար ճշտումը վերացված է: Կարիք չկա զայրանալու, համեմատելու, պարտադրանքով գործելու կամ մեր ցանկությունները բավարարելու:

Աստված է գերիշխանը:

Մենք միայն հնազանդորեն պետք է վստահենք ու հետևենք իրեն:

Աղոթք - Հայր, միայն բերանով եմ խոստովանում, որ իշխանությունը Քոնն է: Այլևս չեմ ուզում այդպես անել: Օգնիր, որ կարողանամ վստահել Քեզ: Ամեն:

Մեր կյանքի հիմնական դերակատարը մենք չենք, այլ Տերն է՝ մեր մեծ ու հզոր Աստվածը:

Կարդա՛ր
Սաղմոս 117. 23

Տիրոջից եղավ այս բանը: Սաղմոս 117.23

Անունդ դի՛ր

«Միրո նամակներ Աստծուն» գրքում հեղինակը՝ Քլեյնիս Նե-լիստը մանուկներին հրավիրում է անձամբ հաղորդակցվել Տի-րոջ հետ: Մանուկների համար գրված այդ գրքի յուրաքանչ-յուր էջում Աստծո մասին մի պատմությունից հետո առաջարկ-վում է ազատ տողում գրել կարդացող մանուկի անունը: Սուրբգրային ճշմարտությունները անձ-նականացնելը մանուկ ընթերցողներին կօգնի հասկանալ, որ Սուրբ Գիրքը պարզապես պատմության գիրք է: Նրանք կիմանան, որ Աստված ուզում է հարաբերվել իրենց հետ և որ Իր շատ սիրելի մանուկների հետ Նա շփվում է Իր խոսքի միջոցով:

Այդ գրքից գնեցի զարմիկիս համար և յուրաքանչյուր էջի բաց թողնված տեղում գրեցի իր անունը: Նա շատ ուրախացավ և ասաց. «Աստված ինձ էլ է սիրում»:

Երբ Աստված Եսայի մարգարեի միջոցով ուղղակի խոսեց իս-րայելցիների հետ, նրանց ուշադրությունը դեպի երկինք հրա-վիրեց: Նա հաստատեց, որ աստղազարդ երկնքում Ինքն է իշ-խում՝ յուրաքանչյուր աստղին տալով հատուկ արժեք և սիրով ուղղելով դրանք: Նա վստահեցնում Իր ժողովրդին, որ չի կորցնելու որևէ աստղ կամ սիրելի զավակ, որոնց պատրաստել է կանխամտածված ու անսահման սիրով:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ հաստատելուդ համար, որ Քո սերը մեզանից յուրաքանչյուրի համար անձնական պարզ է: Շնորհակալ եմք, որ վստահեցնում ես, թե գիտես մեզանից յուրաքանչյուրի անունը: Ամեն:

Կարդա՛ր Եսայի 40. 25-31

...Ո՞վ ստեղծեց
նրա համակարգու-
թյունը՝ մեծ փառ-
քով և անհնարին
ուժով ամեն ինչի
տալով իր անունը:
Ես. 40.26

**Վստահի՛ր, որ Տերը քեզ էլ է սիրում և խոստացել է
քեզ պահել:**

Արժե սպասելը

Տովիոյի Շիրույա կայարանամերձ հրապարակում մի արձան կա՝ ի հիշատակ Հատիկո անունով շան: Այդ կենդանին հավերժացվել է համալսարանի դասախոս տիրոջ հանդեպ ունեցած անսովոր հավատարմութեան համար: Նա ամեն առավոտ տիրոջն ուղեկցում էր այդ կայարան, որտեղից նա գնում էր աշխատանքի և երեկոյան էլ դիմավորում էր: Մի օր, սակայն, դասախոսը չվերադարձավ, որովհետև աշխատավայրում մահացել էր սրտի կաթվածից: Բայց շունը իր կյանքի մնացած ինը տարիներին շարունակեց ամեն օր նույն ժամին գալ կայարան ու սպասել տիրոջ վերադարձին:

**Կարդա՛ր
Ա թես. 1.1 - 10**

Այնտեղից էլ սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին: Փիլ. 3.20

Պողոսը գովեց թեսաղոնիկեցիների հավատարմությունը՝ նշելով նրանց «հավատի գործը», «սիրո աշխատանքը» և «Տեր Հիսուս Քրիստոսի հույսի համբերությունը» (Ա. Թես.1.3):

Հակառակ սաստիկ հալածանքներին՝ նրանք հրաժարվեցին իրենց հին սովորություններից՝ «որպեսզի կենդանի ու ճշմարիտ Աստծուն ծառայեն և երկնքից սպասեն Նրա Որդուն» (Հմ. 9-10):

Այս հավատացյալների՝ Փրկչի հանդեպ ունեցած կենդանի հույսն ու իրենց հանդեպ Նրա սերը ներշնչեց, որ նրանք տեսնեն դժվարություններից այն կողմ եղած բաները և իրենց հավատը խանդավառութեամբ բաժնեկցեն ուրիշների հետ: Նրանք վստահություն էին ստացել, որ չկա ավելի լավ բան, քան Հիսուսի համար ապրելը:

Աղոթք - Հիանալի՛ Տեր, օգնիր ինձ, որ «քաջալերվեմ, սիրտս անրապնդվի ու Տիրոջն սպասեմ» (Սաղմոս 26.14) Ամեն:

Հիսուսի հետ լինելը լավագույն բանն է, որ մեզ հույս է ներշնչում համբերությամբ Նրան սպասելու:

Երգով զորացած

Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին, երբ Ֆրանսիացի գյուղացիները նացիստներից պաշտպանելու համար օգնում էին հրեա գաղթականներին, նրանցից ոմանք խիտ անտառների մեջ երգում էին՝ իմաց տալու համար, որ ապահով է, կարող են դուրս գալ թաքստոցներից: Տեղացի հովիվ Անդրե Տրոքմեի ու նրա տիկնոջ՝ Մադդայի առաջարկին ի պատասխան՝ Լը Շամբոնայուղ Լիգոն քաղաքի գյուղի բնակիչները հրեաների համար ապաստան ճարեցին շրջանի Լա Մոնտանյը Պրոտեստանտ անունով հայտնի բլուրի վրա: Նրանց երաժշտական ազդանշանը իրենց քաջության ցուցանիչն եղավ, որը շուրջ 3000 հրեայի փրկեց ստույգ մահից:

Մեկ այլ վտանգավոր իրավիճակում Դավիթը երգեց, երբ իր թշնամի Սավուղը գիշերով մարդասպանին ուղարկել էր իր տուն: Երաժշտության օգտագործումը սակայն Դավիթի համար ոչ թե նշանաբան էր, այլ երախտագիտության արտահայտություն իրեն պահպանող Աստծուն: Դավիթը հրճվանքով երգեց. «Ես պիտի օրհնաբանեմ Քեզ, Տե՛ր, պիտի ցնծամ առավոտյան Քո ողորմությունը, քանզի Դու եղար իմ պաշտպանն ու ապաստանը և նեղության օրերի օգնականը» (Սաղմոս 58.17):

Նման երգեցողությունը պարզապես վտանգի պահին «խավարի մեջ սուլել է՛ք»: Ընդհակառակը, Դավիթի երգելը ցույց տվեց նրա վստահությունը ամենակարող Աստծո հանդեպ: Օրհնենք Աստծոն մեր երգեցողությամբ: Նրա սիրո ներկայությունը կգորացնի մեր սրտերը:

Աղոթք - Սիրելի՛ Տե՛ր, զորացրու՛ սիրտս և լցրու՛ երգով, որպեսզի վախերս ու մտահոգություններս երգի վերածեն: Ամեն:

**Երգի՛ր քո նախասիրած փառաբանության երգերը
և զորություն կստանես:**

Կարդա՛

Սաղմոս 58.1, 14 -17

Ես պիտի օրհնաբանեմ քեզ, Տե՛ր, պիտի ցնծամ առավոտյան քո ողորմությամբ, քանզի դու՛ եղար իմ պաշտպանն ու ապաստանը:

Սաղմ. 58.17-18

Խոտի դեզերի աղոթքներ

Մասնուել Միլան ու իր չորս ընկերները հաճախ էին հավաքվում Աստծոն աղոթելու՝ խնդրելով, որ ավելի շատ մարդկանց ուղարկի Հիսուսի բարի լուրը տարածելու համար: 1806-ի մի օր աղոթքից վերադառնալիս փոթորիկ սկսվեց, և նրանք պատասպարվեցին խոտի դեզերի մեջ: Այս դեպքից հետո իրենց շաբաթական աղոթքի պահը կոչեցին «Խոտի դեզերի աղոթքի հանդիպումներ», որը շուտով վերածվեց համաշխարհային միասնության շարժման: Այժմ նույնիսկ Միացյալ Նահանգների Ուիլյամս քոլեջի բակում «Խոտի դեզերի աղոթք» անունով քանդակ կա՝ որպես հիշեցում այն բանի, թե Աստված ինչ կարող է անել աղոթքի միջոցով: Մեր երկնավոր Հայրը ուրախ կլինի, երբ իր զավակները իրեն մոտենան միասնական խնդրանքով: Պողոս առաքյալն ընդունում է, որ ծանր նեղություն պահին Աստված իրեն օգնել է ուրիշների աղոթքների միջոցով. «Նա այնպիսի մահից փրկեց մեզ ու փրկում է: Նրա վրա հույս ունենք, որ դեռ կփրկի էլ՝ մեզ համար ձեր արած աղոթքի օգնությամբ» (Բ. Կորնթ. 1.10-11): Աստված աշխարհում իր ծրագիրն իրականացնելու համար օգտագործում է մեր աղոթքները, հատկապես մեր միասին բարձրացրած աղոթքները: Զարմանալի չէ, որ հատվածն այսպես է շարունակվում. «Որպեսզի մեր հանդեպ շատ մարդկանց ցույց տված շնորհով շատերի կողմից գոհություն մատուցվի մեզ համար»: Միասին՝ աղոթենք, որպեսզի կարողանանք միասին էլ ուրախանալ Աստծո արած բարություններով: Մեր սիրող Հայրը սպասում է, որ մոտենանք իրեն, որպեսզի կարողանա մեր միջոցով գործել և շատ հեռու տեղեր հասնել:

Կարդա՛ր
Բ Կորնթ. 1. 8-11

Նրա վրա հույս ունենք, որ դեռ կփրկի էլ՝ մեզ համար ձեր արած աղոթքի օգնությամբ:
Բ Կորնթ 1.11

Աղոթք - Երկնավոր Հայր, մեզ պատրաստակամությամբ տո՛ւր միասին մեր աղերսը Քեզ հասցնելու, որպեսզի տեսնենք մեր աղոթքների պատասխանը: Ամեն:

Երբ միասին ենք աղոթում, միասնական էլ գործում ենք:

Լուռ կյանք գտնել

Բոլորս էլ մանուկ կամ նույնիսկ արդեն չափահաս տարիքում լսել ենք «Ի՞նչ կուզես դառնալ, երբ մեծանաս» հարցը: Տարիների ընթացքում այս հարցին իմ պատասխանը շատ է փոխվել, սկզբում ուզում էի դառնալ կովարած, վարորդ, զինվոր, բայց ընդունվեցի համալսարան՝ բժշկություն ուսանելու: Ու չեմ հիշում, որ մասնագիտական ընտրություն մասին հարցին որևէ մեկը պատասխանած լինի՝ լուռ կյանք:

Պողոսը հենց այս բանն էր ասում թե՛ սաղոնիկեցիներին: Նախ խրախուսեց նրանց, որ սիրեն իրար ու Աստծո ընտանիքը՝ շատ ավելի (Ա. Թես. 4.10): Ապա հորդորեց. «Եվ ջանաք հանդարտ լինել» (Հմ.11): Պողոսը ի՞նչ էր ուզում ասել դրանով: Նա բացատրեց այսպես. «Եվ ամեն մեկն իր գործն անի, ու ձեր ձեռքով աշխատեցեք, դրսիների հետ պարկեշտությունամբ վարվեք ու ոչ մի բանի կարոտ չլինեք» (Հմ.11-12):

Մենք չենք ուզում հուսահատեցնել մեր զավակներին իրենց երազանքներին, շնորհներին ու բաղձանքներին հետևելու ճանապարհին: Այլ քաջալերում ենք, թելադրելով, որ իրենց ընտրած գործն անեն լուռությամբ:

Նկատի առնելով մեր աշխարհը՝ «բաղձանք» և «լուռ» բառերը չեն կարող իրարից ավելի հեռու լինել: Սակայն Աստծո խոսքը միշտ էլ համապատասխան է, ուստի թերևս նկատի առնենք, թե ինչի նման կլինի լուռ ապրելը:

Աղոթք - Տե՛ր Բիսուս, լուռ կյանք ապրելը շատ խրախուսիչ է, սակայն գիտեմ, որ դյուրին չէ: Իմ գործով զբաղվելու շնորհ եմ խնդրում, ոչ թե ինքս իմ մեջ ամփոփվելու, այլ եղած աղմուկի վրա այլ աղմուկ չավելացնելու համար: Ամեն:

Մեզ շրջապատող ինքնագովության աշխարհում կարևոր է երբեմն հանդարտ մնալ և մեր գործը շարունակել:

Կարդա՛
Ա Թես. 4. 9-12

Եվ ջանաք հանդարտ
լինել: Ա Թես. 4.11

Դառը կամ քաղցր ճշմարտություն

Մի տարի, քթիս վրա մի կետ նշմարելով, բժշկի գնացի: Մի քանի օր անց եկավ հետազոտություն արդյունքը, որը բուրրովին չէի ուզենա լսել՝ մաշկի քաղցկեղ: Թեև այն մահացու չէր ու կարելի էր վիրահատություն մանկացնել, բայց այդ լուրը դառը դեղահաբի ազդեցություն ունեցավ:

Աստված հրամայեց Եզեկիելին վերցնել և ուտել իր տված մագաղաթը, որի վրա գրված էին ողբեր, աղաղակներ ու վայեր (Եզ. 2.9): Նա պետք է ուտեր այն և ապա խոսեր Իսրայելի «պնդերես ու խստասիրտ» ժողովրդի հետ (Հմ. 2.4 3.1-2): Սպասելի էր, որ այդ մագաղաթը դառն էր լինելու, որովհետև լի էր Աստծո տված ծանր խոսքերով, բայց Եզեկիելն այն նկարագրում է որպես «բերանին մեղրի քաղցրություն տվող» (3.3):

Կարդա՛
Եզեկիել 2.4 - 3.3

Կերա այն, և բերանիս մեղրի քաղցրություն տվեց: Եզ. 3.3

Թվում է, թե Եզեկիելը Աստծո ծանր խոսքերի համը գիտեր: Սակայն փոխանակ Աստծո տված ծանր խոսքերից փախչելու, նա մտածեց, թե ինչ որ հոգու համար բարի է, «քաղցր է»: Աստված ցույց է տալիս ու մեզ սրբագրում է սիրով, որպեսզի մենք ապրենք այնպիսի կյանք, որ պատիվ կբերի և հաճելի կլինի Իրեն:

Մի շարք ճշմարտություններ դառը դեղահաբի նման են, կան նաև քաղցրները: Եթե հիշենք, թե Աստված որքան է սիրում մեզ, Նրա տված ճշմարիտ խոսքերը մեղրի նման կլինեն: Նրա խոսքերը մեզ են տրված մեր բարիքի համար, դրանք իմաստություն և զորություն են տալիս, որպեսզի ներենք ուրիշներին, դադարենք բամբասել ու դիմանալ վատ վերաբերմունքին:

Աղոթք - Հայր, օգնի՛ր մեզ, որ Քո իմաստությունը կարողանանք տեսնել որպես քաղցր խորհուրդ: Ամեն:

Աստծո ճշմարտությունը միշտ էլ քաղցր է:

Երբ փառավորենք

Երբ 2014-ին ինը տարեկան Ուայլին իրենց տան դիմացից առևանգվեց, երեք ժամ շարունակ, անտեսելով առևանգիչի՝ լուռ մնալու հրամանը, երգում էր իր սիրած «Ամեն փառաբանութիւն» հոգևոր երգը: Ի վերջո առևանգողը ստիպված եղավ թույլ տալ, որ Ուայլին անվնաս դուրս գա մեքենայից: Հետո Ուայլին պատմում էր, որ իր վախը հավատի էր փոխվել, և իրեն փախցնողը շատ էր զայրացել իր երգած երգից:

Դժվարին պարագայում Ուայլիի պատասխանը մեզ հիշեցնում է Պողոսի և Շիղայի փորձառութիւնը: Ծեծվելուց ու բանտ նետվելուց հետո նրանք «աղոթելով օրհնեցան էին Աստծուն, բանտարկյալներն էլ նրանց ականջ էին դնում: Եվ հանկարծ մեծ շարժ եղավ, այնպես, որ բանտի հիմքերն էլ էին շարժվում, և իսկույն բոլոր դռները բացվեցին ու բոլորի կապանքներն արձակվեցին» (Գործք. 16. 25-26): Տեսնելով զորութեան այս հիանալի դրսևորումը՝ բանտապահը հավատաց Պողոսի և Շիղայի Աստծուն և իր ամբողջ ընտանիքի հետ մկրտվեց (Հմ. 27-34): Այդ գիշեր փառաբանության ճանապարհով արձակվեցին թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր շղթաները:

Մենք Պողոսի ու Շիղայի կամ էլ Ուայլիի ազատման նման դրամատիկ փորձառութիւն կարող ենք չունենալ, բայց գիտենք, որ Աստված պատասխանում է Իր ժողովրդի բարձրացրած փառաբանությանը: Երբ նա շարժվում է, շղթաներն արձակվում են:

Աղոթք - Մենք էլ Սաղմոսերգուի հետ աղոթենք՝ ասելով. «Դու ապրում ես սրբերի մեջ և գովերգվում Իսրայելում» (Սաղմոս. 21.4): Ամեն:

Եթե կյանքի տագնապալի պայմանների մեջ ես, փառավորի՛ր Պողոսի ու Շիղայի Աստծուն:

Կարդա՛
Գործք Առ. 16. 25-34

...Իսկույն բոլոր դռները բացվեցին ու բոլորի կապանքներն արձակվեցին:

Գործք 16.26

Երկաթ ու թավիչ

Բանաստեղծ Կարլ Սենդբուրգը Ամերիկայի Միացյալ Նահանգների նախկին նախագահ Աբրահամ Լինքոլնի մասին գրել է. «Մարդկության պատմության մեջ շատ չեն այն մարդիկ, որոնց մասին միաժամանակ կարելի է ասել երկաթյա ու թավչյա կերպար ունեցողներ: Մարդիկ, որոնց սրտում ձուլված լինեն սաստիկ փոթորիկն ու կատարյալ խաղաղությունը»: «Երկաթ ու թավիչ» բնորոշումը նկարագրում է, թե ինչպես Լինքոլնը հավասարակշռեց պաշտոնի բերումով իր ունեցած ուժը և ազատատենչ մարդկանց մտահոգությունները:

Ամբողջ պատմության մեջ միայն մեկ անձ կարողացավ հավասարակշռել ուժն ու մեղմությունը, գորությունն ու կարեկցությունը: Այդ մարդը Հիսուս Քրիստոսն է: Հովհաննու 8-ում Հիսուսը, հակադրվելով կրոնական առաջնորդներին, որոնք դատապարտում էին մեղավոր կնոջը, երկաթյա ու թավչյա կեցվածք դրսևորեց: Երկաթ էր, երբ դիմակայելով այդ արյունարբու մարդկանց խմբի պահանջը՝ Նա ասաց. «Ձեզանից ով որ անմեղ է, թող առաջ նա՛քար գցի դրա վրա» (Հմ.7): Ապա թավչյա կարեկցությամբ դառնալով այդ կնոջը՝ ասաց. «Ես էլ չեմ դատապարտում քեզ. գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր» (Հմ.11):

Ուրիշներին մեր տված պատասխանների մեջ արտացոլելով Նրա «երկաթն ու թավիչը»՝ մենք կարող ենք հայտնաբերել մեզ Հիսուսի նման ձևակերպող Հոր կատարած գործը: Կարող ենք իր կատարած գործը ցույց տալ աշխարհին, որը կարոտ է թե՛ ողորմության թավիչին, և թե՛ արդարության երկաթին:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Որդուդ համար, որի ուժն ու մեղմությունը կատարելապես բացահայտում են Քո սիրտը այս կորուսյալ աշխարհի համար: Ամեն:

Կոտրված աշխարհում ենք ապրում և միայն Քրիստոսի սերը կարող է հավասարակշռել ողորմությունն ու արդարությունը:

Կարդա՛
Հովհաննես 8. 1-11

Ձեզանից ով որ անմեղ է, թող առաջ նա՛քար գցի դրա վրա:
Հովհ. 8.7

Ոչ երկրորդ մակարդակի

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը աշխարհի հզորագույն առաջնորդներից մեկը ճանաչվեց: Սակայն քչերն էին տեղյակ, որ 1919-ին ստացած կաթվածից հետո նրա կինն էր տնօրինում բոլոր գործերը՝ որոշելով, թե որ հարցերը հանձնվեն նրա ուշադրությանը: Պատմաբանները հավաստում են, որ իրականում որոշ ժամանակ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի պարտականությունները էդիթ Վիլսոնն է կատարել:

Եթե մեզ հարցնեն նշել առաջին դարի եկեղեցու առաջնորդների անունները, մեզանից շատերը պիտի նշեն Պետրոսին, Պողոսին ու Տիմոթեոսին՝ որպես պարզեցնող օժտված առաքյալներ: Սակայն Հռոմ.16-ում Պողոսը տարբեր վայրերից եկած մոտ քառասուն մարդու (կին, տղամարդ, գերի, հրեա, հեթանոս) անուն է նշում, որոնք տարբեր ձևերով նպաստել են եկեղեցու կյանքին: Պողոսը այդ ծառաներին երկրորդ մակարդակի համարվածներից շատ ավելի բարձր է դասում: Բարձր գնահատելով նրանց մատուցած ծառայությունը՝ այսպես է նկարագրում այդ մարդկանց. «որոնք առաքյալների մեջ երևելի են և որոնք ինձանից առաջ են Քրիստոսի մեջ եղել» (Հմ.7):

Մեզանից շատերը մտածում են, թե իրենք շատ սովորական մարդիկ են եկեղեցում առաջնորդ լինելու համար: Բայց ճշմարտությունն այն է, որ մեզանից յուրաքանչյուրն ունի հատուկ շնորհներ, որոնք կարելի է օգտագործել ծառայելու և ուրիշներին օգնելու համար:

Աղոթք - Տե՛ր, օգնի՛ր ինձ հիշել, որ Քրիստոսի մարմնի մեջ ես կարևոր անդամ եմ: Ամեն:

Մենք կարող ենք ծառայել մարդկանց՝ որպես Քրիստոսի մարմնի մեկ անդամը:

Կարդա՛

Հռոմ. 16. 3-13

Բարևեք Անդրոնիկոսին և Հունիայի իմ ազգականներին և գերության ընկերներին, որոնք առաքյալների մեջ երևելի են:

Հռոմ. 16.7

Սիրո տոնախմբություն

Դանիական «Բաբելոնի խնջույքը» օսկարակիր ֆիլմում ֆրանսիացի գաղթական Բաբելոն հայտնվում է ծովափնյա մի գյուղում: Երկու տարեց քույրեր, որոնք համայնքի կրոնական առաջնորդներն էին, ապաստան են տալիս նրան, և նա տասնչորս տարի աշխատում է որպես նրանց տան խնամատար: Երբ Բաբելոն ձեռք է բերում մի մեծ գումար, տասներկու հոգու հրավիրում է խնջույքի ու նրանց հյուրասիրում խավիարով, լորամարգով և ֆրանսիական զանազան այլ ուտեստներով: Վայելելով ֆրանսիական համադամ ճաշատեսակները՝ նրանցից ոմանք ներումի զգացում ունեցան, ոմանք՝ վերանորոգված սիրո, իսկ

Կարդա՛
Յովհ. 6. 47-59

Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջել: Յովհ. 6.51

ուրշներն էլ հիշեցին իրենց վայելած հրաշքներն ու մանկության տարիներին սովորած ճշմարտությունները: Եվ ասացին. «Հիշե՛ք՝ ինչ ենք սովորել. երեխանե՛ր, սիրեցե՛ք միմյանց»: Խնջույքի ավարտին Բաբելոն քույրերին ասաց, որ իր ունեցած ողջ գումարը ծախսել է այդ հյուրասիրության համար: Թեև նա նպատակ ուներ իր նախկին կյանքին վերադառնալ ու դարձյալ Փարիզի նշանավոր խոհարարը լինել, բայց ամեն ինչ ծախսեց, որպեսզի իր բարեկամները, մասնակցելով այդ ճաշին, բացեն իրենց սրտերը:

Հիսուսը աշխարհ եկավ որպես օտարական ու սպասավոր ու տվեց ամեն ինչ, որպեսզի մեր հոգևոր քաղցը գոհացում գտնի: Հովհաննու գրքում Նա հիշեցնում է իր ունկնդիրներին, որ երբ իրենց նախահայրերը քաղցած թափառում էին անապատում, Աստված երկնքից տվեց լորամարգ և հաց (Ել.16): Այդ ճաշը որոշ ժամանակ հագեցրեց, բայց Հիսուսը նրանց խոստացավ. «Ես եմ կյանքի հացը, կենդանի հացը, որ երկնքից է իջել: Եթե մեկն այս հացից ուտի, հավիտյան կապրի» (Հովհ. 6. 48. 51):

Աղոթք - Տե՛ր, Դու աշխարհ եկար մեզ կշտացնելու ու հավիտենական կյանք շնորհելու համար: Խնդում եմք՝ տու՛ր մեզ այդ կենարար հացից: Ամեն:

Չիսուսն Իր մարմինն ու արյունը տվեց՝ որպես մեր նոր ու հավիտենական կյանքի ուտելիքն ու խմելիքը:

Բարի լուր ոտքերի համար

«**Հավագույն հանգստավետ գուլպան ոտքի պատմություն մեջ**» գովազդը ժպիտ է առաջացնում: Սակայն բարի լուրը շարունակվում է՝ գուլպան ներկայացնելով որպես անտունների պատասպարաններում ամենամեծ պահանջարկն ունեցող: Եվ հայտարարվում է, որ յուրաքանչյուր գուլպայի վաճառքի դիմաց ընկերությունը մի գուլպ գուլպա է նվիրելու որևէ կարիքավորի:

Պատկերացրեք Հիսուսի դեմքին երևացող ժպիտը, երբ Նա բուժեց երեսուներեք տարի չքայլած մարդուն (Հովհ. 5 2-8): Հիմա պատկերացրեք տաճարի այն մարդկանց հայացքը, որոնք ուրախ չէին հիվանդի նկատմամբ Հիսուսի ցուցաբերած կարեկցության համար: Նրանք այդ մարդուն և Հիսուսին մեղադրեցին կրոնական օրենքը խախտելու համար (Հմ. 9-10, 16-17):

Նրանք միայն կանոնները տեսան, մինչդեռ Հիսուսը ողորմությունը կարևորեց:

Այդ պահին մարդը չգիտեր, թե ով էր իրեն ոտքի հանողը: Միայն հետո էր իմանալու և ուրիշներին էլ հայտնելու, որ իրեն Հիսուսն է առողջացրել (Հմ.13-15):

Նույն Հիսուսը, որ պիտի թողներ իր ոտքերը գամել խաչի վրա, որպեսզի կարողանար այդ մարդուն ու մեզ տալ լավագույն լուրը կոտորված մարմինների, մտքերի և սրտերի պատմության մեջ:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, մեր շուրջը տեսնում ենք զանազան կարիքներով մարդկանց: Օգնի՛ր՝ հոգատար լինել նրանց հանդեպ, ինչպես որ Դու եղար մեզ համար: Ամեն:

Այսօր ուրիշներին պատմի՛ր, թե ինչպես է Հիսուսը քեզ բուժել:

Կարդա՛ր Հովհաննես 5.1-9

Որովհետև դու իմ անձը փրկեցիր մահվանից... Ես պիտի ընթանամ Տիրոջ առջև ողջերի երկրում:
Սաղմ.116. 8-9

Սա ես եմ

«Սա ես եմ» հզոր երգը անմոռանալի երաժշտական հատված է «Մեծ շոունենը» կինոնկարից, որը հիմնված է Բ. Թ. Բարնըմի և նրա հետ ճամփորդող կրկեսի կյանքի պատմության վրա: Ճիլմի հերոսների կատարած երգը խմբի անդամների՝ հասարակական սովորություններից հրաժարվելու պատճառով կրած հարձակումների ու հալածանքների մասին է, որոնք դաշույնի հետքերի նման սպիներ են թողնում: Երգի ժողովրդականությունը ցույց է տալիս, որ այդ անտեսանելի, բայց խոսքի զենքով հասցված իրական վերքերը շատ մարդիկ են կրել:

Հակոբը հասկացել էր մարդկային խոսքի վտանգը, որը ավերիչ վնասներ է տալիս և լեզուն կոչել էր «անզուսպ չար՝ մահաբեր թուլյնով լցված» (Հակ. 3.8): Կատարելով այսպիսի համեմատություն՝ նա շեշտում է, որ հավատացյալները շտապ պետք է անդրադառնան իրենց խոսքերի ունեցած հսկայական ուժին: Ավելին, նա մատնանշում է այն անհամապատասխանությունը, որ գոյություն ունի. «Նրանով Աստծուն և Հորն ենք օրհնում, նրանով նաև անիծում ենք մարդկանց, որ Աստծու նմանությունը են ստեղծված: Միևնույն բերանից դուրս են գալիս օրհնություն և անեծք» (Հմ.9-10):

«Սա ես եմ» երգը նույնպես խոսքով մարդկանց վիրավորելու գաղափարն է քննադատում և շեշտում է, որ մենք բոլորս էլ օրհնված ենք: Մի ճշմարտություն, որ Աստվածաշունչն էլ է հաստատում:

Աղոթք - Արարի՛չ Աստված, շնորհակալ եմք, որ մեզ ստեղծել ես հատուկ կերպով: Օգնիր, որ մեր բառերը գործածենք թե՛ քեզ փառաբանելու և թե՛ մարդկանց քաջալերելու համար: Ամեն:

Աստված մեզ լեզու է տվել խոսելու համար: Օգտագործենք այն օրհնաբանության և ոչ անեծքի համար:

Կարդա՛ր Չակորոս 3. 7-12

Միևնույն բերանից դուրս են գալիս օրհնություն և անեծք: Պետք չէ, եղբայրներ, որ սա այդպես լինի:
Չակ. 3.10

Միայն մեկ հպում

Ընդամենը մեկ հպումը Քոլինի համար նկատելի տարբերություն բերեց: Իրենց խումբը պատրաստվում էր բարեսիրական մի գործ ձեռնարկել Հիսուսին հավատացողներին հակառակվողների շրջանում, և Քոլինը շատ լարված էր: Երբ նա իր մտահոգությունը հայտնեց, խմբի անդամներից մեկը ձեռքը դրեց նրա ուսին և քաջալերող մի քանի խոսք ասաց: Հիմա Քոլինը այդ պահը իր կյանքի շրջադարձային կետն է համարում և յուրատեսակ հիշեցում, որ Աստված իր հետ է:

Երբ Հիսուսի մոտ բարեկամ ու աշակերտ Հովհաննեսը Ավետարանը քարոզելու համար հեռացվել էր Պատմոս ամայի կղզի, մի մեծ ձայն լսեց, ինչպես փողի ձայն (Հայտն.1.10): Ապա այդ զարմանալի դեպքին հաջորդում է տեսիլքը, երբ նա տեսնում է Տիրոջը և «մեռածի պես ընկնում նրա ոտքերի առաջ»: Բայց այդ սարսափազդու պահին նա, ստանալով քաջություն և մխիթարություն, գրում է. «Նա իր աջ ձեռքն ինձ վրա դրեց ու ինձ ասաց. «Մի՛ վախեցիր, ես եմ Առաջինն ու Վերջինը» (Հմ.1. 17):

Աստված մեզ մեր ապահով շրջանից դուրս է հանում՝ նոր բաներ ցույց տալու և օգնում է, որ մենք աճենք: Նա նաև քաջություն և վստահություն է տալիս մեզ, որպեսզի կարողանանք ամեն տեսակ վիճակներից դուրս գալ ապահով ու հանգիստ: Նա մեզ մենակ չի թողնում փորձությունների մեջ: Ամեն բան նրա հսկողությունից ներքո է: Նա մեզ պահում է իր ձեռքերի մեջ:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, օգնի՛ր, որ Քո ներկայությունն ու հպումը զգամ, երբ վախի ու տվայտանքի մեջ եմ: Ամեն:

Երբ Աստված մեզ մեր հանգիստ վիճակից դուրս է հանում, մեզ գործընկերներ ու աջակիցներ է տալիս:

Կարդա՛ Հայտնություն 1. 9-18

Նա իր աջ ձեռքն ինձ վրա դրեց ու ինձ ասաց. «Մի՛ վախեցիր, ես եմ Առաջինն ու Վերջինը»:
Հայտն. 1. 17

Միահյուսված

Ընկերուհիներիցս մեկը իր տանը քառասուն տարուց ավելի պահած բույսն ինձ տվեց: Այն իմ հասակին էր և երեք բարակ բների վրա ուներ մեծ տերևներ: Ժամանակի ընթացքում դրանց ծանրությունից երեք ցողունները ներքև էին թեքվել: Ես թաղարը դրեցի պատուհանի մոտ, որպեսզի արևի ճառագայթները տերևները դեպի վերև ուղղեն:

Մի քանի շաբաթ անց մի տեղ այս նույն բույսից տեսա: Այն նույնպես երեք ճյուղ ուներ, բայց դրանք միահյուսված էին ու ավելի զորավոր բուն էին ստեղծել, ինչի շնորհիվ բույսը առանց որևէ օգնություն ուղիղ կանգնած էր:

Կարդա՛
ժողովող 4. 9-12

Երեքտակ թելն էլ
հեշտ չի կտրվում:
Ժող. 4.12

Երկու մարդ էլ կարող են նույն «թաղարի» մեջ լինել, բայց ապրել առանձին և չունենալ Աստծո տված բարիքներից օգտվելու ուրախությունը: Սակայն երբ նրանց կյանքը հյուսված լինի Աստծո հետ, կայունություն ու մտերմության հնարավորությունն ավելի մեծ կլինի: Նրանց հարաբերություններն իրար հետ կաճեն ու կամրանան: «Երեքտակ թելն էլ հեշտ չի կտրվում» (Ժող.4.12):

Տեսալին բույսերի նման ամուսնություններն ու բարեկամություններն էլ սնուցման կարիք ունեն: Այդ հարաբերությունները պահանջում են հոգեպես միաձուլվել, որպեսզի Աստված ներկա լինի յուրաքանչյուր կարևոր կապի մեջ: Նա անսպառ մատակարարն է սիրո ու շնորհքի՝ այն բաների, ինչի կարիքը շատ ունենք միմյանց հետ ուրախությամբ մնալու համար:

Աղոթք - Հայր, հաճույքով Քեզ ընդունում եմ իմ ամենամտերիմ հարաբերությունների մեջ, որպեսզի Քեզ միահյուսվելով՝ կարողանամ աներեր մնալ: Ամեն:

**Միայնակ դժվար է լինելու ամուր մնալը:
Կարիք ունենք Աստծու ու մարդկանց հետ կապվելու:**

Շնորհքի սերմեր

Հնդկաստանում ապրող մի մարդ շուրջ չորս տասնամյակ կործնում էր չորացած ու կիզված ավազոտ անապատները կյանքի կոչել: Տեսնելով, որ իր սիրելի կղզին քանդվել էր երաշտներից ու հարափոփոխ բնությունից, նա սկսեց մեկ առ մեկ ծառեր տնկել, սկզբում հնդկեղեգ, ապա նաև բամբակ:

Այդ 5000 քմ տարածքը այժմ դարձել է բազմազան կենդանական աշխարհով խիտ անտառային գոտի: Այդ մարդը, սակայն, պնդում է, որ բնության այդ վերածնունդի հեղինակն ինքը չէ, որ բնական աշխարհն արդեն իսկ ծրագրված է: Նա հիանում է, թե ինչպես է քամին սերմերը տանում, լցնում բարեբեր հողերի մեջ: Ծառերի ու ծաղիկների աճին շատ են օգնում նաև թռչունները, կենդանիներն ու գետերը:

Հիսուսի համաձայն՝ այս նույն սկզբունքն է գործում նաև Աստծո թագավորության մեջ: «Աստծո արքայությունն այսպես է, ասես մի մարդ հողի մեջ սերմ դրի:... սերմը կբուսնի ու կաճի, այնպես, որ ինքը չիմանա» (Մարկ.4 .26-27): Աստված աշխարհում կյանք ու բժշկություն է բերում իր դրած բնության օրենքներով: Մենք անում ենք այն, ինչ Աստված է կամենում, և հետո տեսնում ենք, թե ինչպես է կյանքն առաջանում: Գիտենք, որ ամեն բան իր շնորհքից է բխում:

Միայլ է մտածել, որ մենք պատասխանատու ենք ինչ-որ մեկի սրտի փոփոխության համար: Աստված է աճեցնում մեր բոլոր սերմերը: Բոլորն ի՛ր շնորհքն է:

Աղոթք - Հայր, երբ մտածեմ, որ իմ պարտականությունն է ամեն ինչ անել, հիշեցրու՝ ինձ, որ Դ՛ու ես ամեն բանի տերն ու տիրակաճը: Ամեն:

Կարդա՛
Մարկոս 4. 26-29

Սերմը կբուսնի ու կաճի, այնպես, որ ինքը չիմանա: Մարկ. 4.27

**Աստված շարունակում է իր շնորհքով
իր թագավորությունն աճեցնել:**

Միացի՛ր փողոցի խմբին

Ման Ֆրանցիսկոյի առողջապահության պատասխանատուները բժշկական օգնություն են ցուցաբերում փողոցներում ապրող այն թափառաշրջիկներին, որոնք թմրամոլությունամբ են տառապում: Ծրագիրը հատկապես այն մարդկանց համար է, ովքեր թմրամիջոցները ներարկիչներով են ընդունում: Միշտ ընդունված է եղել, որ բժիշկներն սպասում էին, որ հիվանդներն իրենց մոտ գան: Հոգատարության նոր դրսևորումը հիվանդներին ազատում է երթևեկության դժվարություններից և իրենց ժամադրությունները փոխելուց:

Առողջապահության գործիչների գրնալը հիվանդների մոտ ինձ հիշեցնում է Հիսուսի գալը մեզ մոտ մեր կարիքների ժամանակ: Իր ծառայության ժամանակ Հիսուսը կենտրոնացավ կրոնական առաջնորդների անտեսած մարդկանց վրա: Նա սեղան նստեց «մաքսավորների ու մեղավորների հետ» (Մարկ. 2.16): Եվ երբ հարցրին, թե ինչո՞ւ է այդպես վարվում, նա պատասխանեց. «Առողջներին բժիշկ պետք է, այլ հիվանդներին: Ես եկել եմ ոչ թե արդարներին, այլ մեղավորներին ապաշխարության կոչելու» (Հմ.17):

Եթե նկատի ունենանք, որ բոլորս էլ «հիվանդ ենք» ու բժշկի կարիք ունենք (Հմ. 3.10) ավելի լավ կգնահատենք «մեղավորներին ու մաքսավորներին» և մեզ հետ սեղան նստելու Հիսուսի կամեցողությունը: Ման Ֆրանցիսկոյի բժիշկների հոգատարության նման Հիսուսը մեզ նշանակել է որպես փողոցի իր գործիչներ, որպեսզի իր փրկության պատգամը տանենք նրանց, ովքեր ունեն դրա կարիքը:

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ ինձ հանդիպում ես իմ գտնված վիճակում: Ամեն:

Կարդա՛ր Մարկոս 2. 13-17

Ես եկել եմ ոչ թե արդարներին, այլ մեղավորներին ապաշխարության կոչելու: Մարկ. 2.7

Հիսուսը բժշկության միջոց է տվել: Պատրա՞ստ ենք տանելու նրանց, որոնք դրա կարիքն ունեն:

Պատերազմողի պես քայլի՛ր

Տասնութ տարեկան էմման սոցիալական ցանցերում համար-
ձակորեն արտահայտվում է Հիսուսի մասին՝ չնայած շա-
տերն են քննադատում Հիսուսի հանդեպ նրա ունեցած ջերմե-
ռանդ սերն ու ուրախությունը: Ոմանք ակնարկներ են արել
նրա արտաքին տվյալների մասին, ոմանք էլ հայտարարել են,
թե Աստծո հանդեպ իր նվիրումի պատճառով բավականաչափ
իմաստնություն չունի: Թեև այդ խոս-
քերն ու տգեղ արտահայտությունները
վիրավորել են էմմայի սիրտը, սակայն
նա հավատքով շարունակում է տարա-
ծել Ավետարանի բարի լուրը: Նա հա-
վատում է, որ ուրիշների քննադատու-
թյամբ սրբազրվում են իր ինքնությունն
ու արժեքը: Յուրաքանչյուր քննադա-
տությունից հետո նա դիմում է Աստծո օգնությանը, աղոթում
իրեն վիրավորողների համար, մտածում Աստծո խոսքերի մա-
սին և հարատևում Հոգու զորությունը:

Գեղեճնը դիմազրավեց կատաղի տանջարար մադիամացիներ-
բին (Դատ. 6. 1-10): Թեև Աստված նրան կոչեց «զորավոր կտ-
րիճ», բայց Գեղեճնը շատ պայքարեց իր կասկածներից, ինքնա-
հաստատման սահմանափակումներից և անհանգստության
զգացումներից ազատվելու համար (Հմ. 11-15): Մի քանի ան-
գամ նա կասկածեց Աստծո ներկայության ու նրա գործած
հրաշքների իսկությունը, բայց ի վերջո հավատքով հանձնվեց
Աստծուն: Աստված հաստատում է, որ մենք նույնպես կարող
ենք քայլել զորավոր կտրիճների նման՝ գինված իր սիրով ու
վստահելի ճշմարտություններով:

Աղոթք - Տե՛ր, օգնի՛ր, որ հիշենք քո սերը և շնորհքով հա-
կադարձենք ամեն անգամ, երբ կփորձեն կասկած առաջաց-
նել մեր ունեցած արժեքների հանդեպ: Ամեն:

**Քո կարողությունների հանդեպ կասկածներ
ունենալիս Աստծո խոսքի՛ն դիմիր ու աղոթի՛ր:**

Կարդա՛
Դատ. 6.1, 11-16

Տիրոջ հրեշտակը
երևաց նրան և
ասաց. «Տերը քեզ
հետ է, ով զորաւոր
կտրիճ»: Դատ. 6.12

Անծանոթ ճանապարհ

Մարդիկ ինձ հարցնում են, թե ունե՞մ արդյոք առաջիկա հինգ տարիների ծրագրերը: Սակայն ինչպե՞ս կարելի է ծրագրել հինգ տարիները, երբ դեռ այդ ճանապարհը չեմ անցել:

Ես մտաբերում եմ 1960 թվականը, երբ Սթենֆորդի համալսարանի աշակերտների հովիվը դարձա: Մասնագիտությունս մարմնակրթությունն էր, և ես սիրում էի իմ գործը: Բայց ինձ հանձնարարվեց մի նոր պարտականություն, որի համար ոչ

հարմարություն և ոչ էլ պատրաստվածություն չունեի: Ամեն օր թափառում էի համալսարանի տարածքում և կույրի պես խարխափում էի խավարում՝ Աստուծոց խնդրելով ցույց տալ իմ անցնելիք ուղին: Մի օր էլ աշակերտներից մեկը խնդրեց, որ Աստվածաշնչի սերտողության մի հատված անցկացնեմ: Դա եղավ սկիզբը: Աստված կանգնած չէ խաչմերուկում, որ ցույց տա անցնելիք ճանապարհի ուղղու-

թյունը: Նա առաջնորդ է, քայլում է մեզ հետ և առաջնորդում այն շավիղներով, որտեղով բնավ չենք անցել: Մեզ մնում է պարզապես քայլել Իր կողքին: Ճանապարհը հեշտ չի լինելու, «դժվար տեղեր» են լինելու, բայց Աստված խոստացել է «...խավարը լույս դարձնել, դժվարանցանելին՝ դյուրին և չլքել նրանց» (Յս. 42:16): Պողոսն ասաց, թե Աստված «կարող է առատություն բանից ավելին անել» (Եփ.3:20): Մենք կարող ենք ծրագրել ու կանխատեսել շատ բաներ, բայց մեր Տիրոջ երևակայությունը գերազանցում է մեր ծրագրերը: Ունենանք մեր ծրագրերը, սակայն տեսնենք, թե Աստված ինչեր է նախատեսել մեզ համար:

Աղոթք - Տեր Դիսուս, շնորհակալ եմ, որ ինձ համար հատուկ ծրագրեր ունես, որոնք իմ պատկերացումից դուրս են: Օգնի՛ր, որ կարողանամ վստահել Քո առաջնորդությամբ: Ամեն:

Երբ դու քեզ խավարում զգաս, դիմի՛ր Աստծուն, և Նա քեզ կառաջնորդի:

Կարդա՛ Եսայի 42. 10-17

Կույրերին պիտի առաջնորդեմ մի ճանապարհով, որ նրանք չգիտեն, պիտի քայլել տամ այնպիսի շավիղներով, որոնք ծանոթ չեն նրանց: Ես. 42:16

Լույս խավարի մեջ

«Մրանք են սերունդները» գրքում պրն. Բեին նկարագրում է, թե ինչպես են Աստծո հավատարմությունն ու ավետարանի գորությունը թափանցում խավարի մեջ: Իր պապը, ծնողներն ու ընտանիքը հալածվել էին Քրիստոսի հանդեպ իրենց ունեցած հավատն ուրիշների հետ բաժնեկցելու պատճառով: Պարոն Բեին ինքն էլ է բանտարկվում, բայց նրա հավատն ավելի է աճում, երբ սկսում է իր մի բարեկամին պատմել Աստծո մասին: Նույնն էլ պատահել էր իր ծնողների հետ, երբ նրանք, լինելով համակենտրոնացման ճամբարում, Քրիստոսի հանդեպ իրենց սիրո մասին շարունակել են խոսել նույնիսկ այնտեղ: Պարոն Բեին տեսնում է, որ Հովհ. 1.5-ում Հիսուսի տված խոստումը ճիշտ է. «Եվ լույսը խավարում լույս է տալիս, իսկ խավարը նրան չճանաչեց»: Իր ձերբակալությունից ու խաչելությունից առաջ Հիսուսը զգուշացրեց իր աշակերտներին իրենց դիմագրավելիք դժվարությունների մասին: Նրանք մերժվելու էին այն մարդկանց կողմից, որոնք «ոչ Հորը ճանաչեցին, ոչ էլ ինձ» (Հմ. 16.3): Բայց Հիսուսը մխիթարական խոսքեր է առաջարկում՝ ասելով. «Աշխարհում նեղություն կունենաք, բայց քաջացե՛ք, ես հաղթել եմ աշխարհին» (Հմ.33):

Թեև Հիսուսին հավատացողներից շատերը չեն ունեցել հալածանքի այն փորձառությունը, ինչ պրն. Բեին ու իր ընտանիքը, սակայն մենք էլ կարող ենք ակնկալել հալածանքներ: Հուսահատությունից չմատնվենք ու տեղի չտանք, որովհետև օգնական ունենք՝ Հիսուսի խոստացած Սուրբ Հոգին: Կարող ենք դառնալ նրան՝ առաջնորդության և քաջալերանքի համար (Հմ.7):

Աղոթք - Երկնավոր Զայր, խնդրում եմք՝ պաշտպանի՛ր գավակներիդ, որոնք հալածվում են: Ամեն:

Մեր հավատի համար նեղություններ ու հալածանքներ ենք կրելու: Սակայն ո՞րն է լինելու մեր հակադարձությունը:

Կարդա՛

Յովհ. 1.5, 16. 1-11,33

Աշխարհում նեղություն կունենաք, բայց քաջացե՛ք, ես հաղթել եմ աշխարհին:

Յովհ. 16.33

Սպիների պատմություններ

Թիթեռնիկը ճախրում էր հիրիկների շուրջ և ես, ինչպես ցանկացած երեխա, ուզում էի բռնել նրան: Դրա համար վազեցի խոհանոց, հախճապակե մի սափոր վերցրի ու դուրս գալու ճանապարհին շտապելուց ընկա բակի կրածույլ գետնին: Սափորը փշրվելով մի մեծ վերք բացեց դաստակիս վրա, որը բուժելու համար տասնութ կար դրեցին: Այսօր այդ սպին քառասուն ոտք ունեցող միջատի նման սողում է դաստակիս վրայով՝ հիշեցնելով վիրավորվելուս և բուժվելուս պատմությունը:

Երբ Հիսուսը իր մահից հետո երևաց աշակերտներին, իր հետ բերեց իր սպինները: Հովհաննեսը տեղեկացնում է, որ Թովմասը թերահավատ էր, ուզում էր տեսնել «մեխերի նշանը նրա ձեռքերին»: Եվ Հիսուսը հրավիրելով նրան՝ ասում է. «Քո մատն այստեղ բեր ու տե՛ս իմ ձեռքերը, և քո ձեռքը բե՛ր ու իմ կողը խրի՛ր» (Հովհ. 20.25-27):

Իր կրած տառապանքի վերքերի սպիններով նա ցույց տվեց, որ Ինքը նույն Հիսուսն է, որ հարություն է առել մեռելներից:

Հիսուսի սպինները փաստում են իր Տեր լինելը և պատմում են փրկության պատմությունը: Իր ձեռքերի և ոտքերի վրա եղած մեխերի նշանները, ինչպես նաև իր կողի վրայի բացվածքը մեզ համար իր կրած ցավերի ու դրանց բուժման վկայություններն են: Նա այդ ամենն արեց, որպեսզի մենք կարողանանք վերանորոգվել:

Աղոթք -Տե՛ր, որքա՛ն եմ սիրում քո սպիների պատմությունը՝ ուղղված ինձ ու աշխարհին: Թող որ սովորեմ օրեցօր ավելի ու ավելի սիրել քեզ: Ամեն:

Կարդա՛ր
Հովհ. 20. 24-27
Քո մատն այստեղ բեր ու տե՛ս իմ ձեռքերը, և քո ձեռքը բեր ու իմ կողը խրի՛ր:
Հովհ. 20.27

**Տիրոջ սպիները բուժում են խոստանում մեր վերքերին:
Ուստի իր առաջ դնենք մեր վիրավոր մարմինները:**

Հաշտության դուռը

Իռլանդիայի Դուբլին քաղաքի Սբ. Պատրիկ տաճարում կա մի դուռ, որը հինավուրց մի պատմության մասին է վկայում: Երկու ընտանիքներ՝ Բաթլերներն ու Ֆիցջերալդները պայքարում էին մի շատ բարձր պաշտոնի համար: Նրանց կռիվը սաստկացավ, ու Բաթլերներն ապաստանեցին տաճարում: Երբ Ֆիցջերալդները եկան հաշտություն խնդրելու, Բաթլերները վախեցան դուռը բանալ: Եվ Ֆիցջերալդները դռան վրա մի անցք բացեցին, որտեղից իրենց առաջնորդը հաշտության ձեռք մեկնեց: Հետո երկու ընտանիքները հաշտվեցին ու հակառակորդները բարեկամացան:

Աստված հաշտության մի դուռ ունի, որի մասին Պողոս առաքյալը մեծ սիրով գրել է կորնթացիներին ուղղված նամակում: Աստված Իր նախաձեռնությամբ, մարդկության հանդեպ ունեցած մեծ սիրով և խաչված Քրիստոսի մահով վերահաստատեց մարդկության հետ խզված հարաբերությունը: Մենք Աստծուց հեռացել էինք, սակայն Իր ողորմությամբ Նա մեզ չթողեց: «Որովհետև Աստված էր Քրիստոսի մեջ, որ աշխարհն իր հետ հաշտեցրեց և նրանց հանցանքներն իրենց ներեց և հաշտության խոսքը մեր մեջ դրեց» (Բ. Կորնթ. 5.19): Արդարությունը իրագործված էր այն ժամանակ, երբ «Աստված նրան, ով մեղք չգիտեր, մեզ համար մեղք արեց, որպեսզի մենք նրա մեջ Աստծո արդարները լինենք» (Հմ. 21):

Երբ խաղաղությամբ Աստծո ձեռքը ընդունենք, այդ պատգամը ուրիշներին տանելու պարտականությունը մեզ կտրվի:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ չես ձգում Քեզանից հեռու, հուսահատության մեջ: Շնորհակալ եմ, որ Որդուդ զոհողությամբ ինձ տվել ես Քեզ մոտենալու հնարավորություն: Ամեն:

Աստված տալիս է հաշտության հնարավորություն:

Այս բարի լուրը տանք ուրիշներին:

Կարդա՛ր
Բ Կորնթ. 5. 14-21

Բայց Աստծուց է այն ամենը, որ մեզ Հիսուս Քրիստոսի միջոցով իր հետ հաշտեցրեց ու մեզ հաշտության ծառայությունը տվեց:

Բ Կորնթ. 5.18

Ամենաապահով տեղը

Աղջիկս պատրաստվում էր տնից դուրս գալ, իսկ Ֆլորենս փոթորիկը դեռ մեծ ուժով մոտենում էր Հյուսիսային Կարոլինայի Ուիլմինգտոն քաղաքին: Նա մինչև վերջին վայրկյանը սպասում էր, որ փոթորիկը հանդարտվի, հետո սկսեց շտապելով առանձնացել այն կարևոր փաստաթղթերը, լուսանկարներն ու այլ արժեքավոր իրեր, որ վերցնելու էր հետը: «Ձէի կարծում, թե այսքան դժվար պիտի լինի որևէ բան թողնելը, բայց ես այս պահին չգիտեմ՝ վերադառնալուց հետո ինչ-որ բան մնացած պիտի լինի, թե ոչ», - վերջում ասաց ինձ: Կյանքի փոթորիկները տարբեր ձևերով են գալիս. մրրիկներ, երկրաշարժեր, ջրհեղեղներ, ամուսինների ու զավակների միջև անակնկալ խնդիրներ, առողջության կամ նյութական կորուստ; Եվ մեր արժեքավոր համարած շատ բաներ կորոզ են կորչել մեկ րոպեում:

Կարդա՛
Սաղմոս 45. 1-11

Աստված ապավենն ու զորությունն է մեր:
Սաղմ. 45.2

Փոթորիկների ժամանակ Աստվածաշունչը մեզ ցույց է տալիս ամենաապահով տեղը: «Աստված ապավենն ու զորությունն է մեր և մեր օգնականը մեզ հասած խիստ նեղությունների մեջ: Ուստի մենք չենք վախենա, երբ երկիրը ցնցվի , և լեռները ծովի խորքը տեղափոխվեն» (Սաղմոս 45.1-2):

Այս սաղմոսի հեղինակները մի մարդու որդիներն էին, որը սերունդներ առաջ ծառայեց Աստծուն, բայց հետո Նրա դեմ ապստամբեց ու մեռավ փոթորկի մեջ (Թվեր 26. 9-11): Նրանց՝ մեզ հետ բաժնեկցածը ցույց է տալիս խոնարհություն և Աստծո մեծություն, կարեկցություն և ազատող սիրո խորությունը: Խնդիրներ ու նեղություններ կլինեն, սակայն հաղթում է Աստված:

Աղոթք - Ո՛վ փոթորիկներից մեծ Աստված, օգնի՛ր, որ կարողանամ բոլոր վախերս այսօր դնել Քո ձեռքերի մեջ ու հանգստանամ Քո հաստատ սիրո մեջ: Ամեն:

Մեր կյանքի փոթորիկների մեջ Աստված պատրաստ է մեզ խաղաղություն տալու:

Նոր մարդկություն

Լոնդոնի Թեյթ Մոդերն ցուցասրահ այցելության ընթացքում Լարվեստի մի գործ գրավեց ուշադրությունս: Դա բրազիլացի արվեստագետ Սիդո Մեյրելեսի աշխատանքն էր՝ հարյուրավոր հին ռադիոների հավաքածու մի աշտարակ, որի վրա յուրաքանչյուր ռադիո դրված էր տարբեր կայանների վրա՝ ստեղծելով ձայնային խառնաշփոթ և անհասկանալի խոսակցության պատրանք: Մեյրելեսն իր այդ քանդակն անվանել է Բաբելոն: Շատ հարմար անուն: Բաբելոնի աշտարակաշինության ժամանակ Աստված արգելեց մարդկանց՝ երկինք հասնելու փորձը՝ խառնելով նրանց լեզուները (ՄՆ. 11.1-9): Այլևս չկարողանալով միմյանց հետ հաղորդակցվել, մարդկությունը բաժանվեց տարբեր լեզուներով խոսող ցեղերի (Հմ. 11.10-26): Այդ օրվանից ի վեր մենք պայքարում ենք միմյանց լեզու հասկանալու համար: Պատմության երկրորդ մասն էլ կա:

Երբ Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգին իջավ առաջին քրիստոնյաների վրա, «Բոլորը Սուրբ Հոգով լցվեցին ու սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ նրանց խոսել էր տալիս Հոգին», նրանց հնարավորություն տրվեց Աստծուն պաշտել Երուսաղեմ այցելող ժողովրդի խոսած տարբեր լեզուներով (ործք 2.1-12): Այս հրաշքի միջոցով յուրաքանչյուր մարդ, անկախ իր ազգությունից ու լեզվից, լսեց նույն պատգամը: Բաբելոնյան խառնակությունը ետ դարձավ: Հիսուսի միջոցով Աստված մի նոր մարդկություն է ստեղծում՝ ամեն ազգից, ցեղերից ու լեզուներից (Հայտն. 7.9):

Աղոթք - Երկնքում եղող Աստված, խնդրում եմ օգնիր, որ կարողանամ հավատքս բաժնեկցել տարբեր ազգի ու ցեղի մարդկանց հետ՝ Քո Հոգու տված զորությամբ ստեղծելով ներդաշնակություն: Ամեն:

Հակառակ մեր տարբերություններին՝ Աստված վերացնում է բոլոր արգելքները՝ մի նոր մարդկություն ստեղծելու համար:

Կարդա՛ Գործք Առ. 2.1-12

Եվ երբ այն ձայնը հնչեց, բազմությունը մեկտեղ եկավ ու հավաքվեց, որովհետև ամեն մեկը լսում էր նրանց, որ իր լեզվով էին խոսում:

Գործք 2.6

Այլևս վախ չկա

Երբ եթովպիացի ոստիկանները առևանգումից մեկ շաբաթ անց գտան աղջկան, երեք առյուծները հսկում էին նրան: Յոթ անձինք առևանգել էին տասներկու տարեկան աղջկան, տարել անտառ ու ծեծել: Սակայն մի անբացատրելի հրաշքով, լսելով աղջկա աղաղակը, նրան օգնություն էր հասել առյուծների խումբը:

Ոստիկանապետ Ուոնդիմոն լրագրողներին ասել էր. «Առյուծները պահակ էին կանգնել, մինչև որ մենք գտանք աղջկան: Դրանից հետո թողեցին, հեռացան անտառ»:

Լինում է, որ վայրագությունն ու չարը, այդ աղջկա վրա հարձակվողների նման, սարսափեցնում, թուլացնում ու հուսահատություն են մատնում մեզ: Հին ժամանակներում Հուդայի ժողովուրդն է ունեցել նման փորձառություն: Նրանք ենթարկվում էին կատաղի բանակների ավարառություններին և անկարող էին փրկության որևէ միջոց գտնել: Վախը սպառել էր նրանց, բայց Աստված միշտ էլ խոստանում էր Իր ժողովրդի հետ լինել. «Իսրայելի թագավորը՝ Տերը, քո մեջ է, և դու այլևս չարիք չես տեսնի» (Սոփ. 3.15): Նույնիսկ երբ մեզ պատուհասած աղետները մեր ապստամբությունների պատճառով են լինում, դարձյալ Աստված մեզ օգնության է հասնում. «Հզորը՝ Տեր Աստված, քո մեջ է և կփրկի քեզ» (Հմ.17):

Հոգ չէ, թե ինչ վախեր են մեզ կլանում, մեր Աստվածը մեզ վստահեցնում է, որ մեր կողքին է:

Աղոթք - Հոգի՛ր, պայքարող Աստված, Քո կարիքն ունեմ: Քեզ նման մեկի կարիքն ունեմ, որը կողքիս կլինի ու ինձ կազատի իմ վախերից: Քեզ եմ վստահում: Ամեն:

Անկասկած, վախեր միշտ էլ կուներանք: Սակայն Աստված խոստանում է մեզ հետ ու մեր կողքին լինել:

Կարդա՛ր
Սոփոնյա 3. 9-17

...որովհետև
ճրանք կարածն և
կմակաղեն, և ոչ
մեկը չի լինի, որ
վախեցնի ճրանց:
Սոփ. 3.13

Չաջորդ բա՛նն արա

Վերջին անգամ ե՞րբ ես պարտադրված եղել մեկին օգնելու և ցանկացել ես, որ այդ պահն անցնի անպատասխան: «Օրենքի տասը ակնթարթ»-ում Քլեբ դը Քրաֆֆը մեր ամենօրյա տպավորությունները համարում է Աստծո միջոցներից, որոնցով Նա մեզ կոչում է ավելի խոր ընթացքի ու հնազանդ կյանքի, որը ծնվում է Աստծո հանդեպ մեր ունեցած սիրուց: «Օրենքի տասը ակնթարթ»-ը քաջալերում է քեզ «քանի դեռ միտքդ չես փոխել», անել այն հաջորդ բանը, որը հաճո կլինի Աստծուն:

Կարդա՛

Յովիաննես 14. 15-21

Եթե ինձ սիրում եք, իմ պատվիրանները պահեցե՛ք: Յովի. 14. 15

Հիսուսն ասում է. «Եթե ինձ սիրում եք, իմ պատվիրանները պահեցե՛ք» (Հովհ. 14.15): Մենք կարող ենք մտածել. «Ես սիրում եմ իրեն, բայց ինչպե՞ս կարող եմ վստահ լինել իր կամքին ու հետևել իրեն»: Հիսուսն իր իմաստությամբ մեզ տվել է ամեն անհրաժեշտ բան, ավելի լավ հասկանալու և հետևելու աստվածաշնչյան իմաստություններին: Նա ասել է. «Եվ ես Հորը կաղաչեմ, և ձեզ ուրիշ Մխիթարիչ կտա, որպեսզի հավիտյան ձեզ հետ լինի ճշմարտության Հոգին» (Հմ.16-17): Մեզ հետ եզոդ ու մեր մեջ բնակվող Հոգու միջոցով է, որ մենք կարող ենք սովորել հնազանդվել Հիսուսին ու «Իր պատվիրանները պահել» (Հմ.15)՝ պատասխանելով մեր կյանքում փորձառություններ ունեցած մեր հիշեցումներին (Հմ.17):

Մեծ ու փոքր գործերի մեջ Հոգին մեզ մղում է վստահությանբ ու հավատքով անելու այն, ինչը պատվաբեր է Աստծուն և ցուցաբերելու իր և ուրիշների հանդեպ մեր սերը:

Աղոթք - Չայր, խնդրում եմ՝ հիշեցնես ինձ՝ հետևել քեզ և հնազանդությամբ Քո պատվիրանները պահել: Ամեն:

**Սուրբ Յոզիմ հայթայթում է այն, ինչի կարիքն ունենք
հնազանդորեն Յիսուսին հետևելու համար:**

Բնավ մի՛ հուսահատվիր

Երբ բարեկամիս մոտ քաղցկեղ ախտորոշվեց, նրա բժիշկը խորհուրդ էր տվել կարգավորել գործերը: Նա զանգահարեց ինձ ու հեկեկալով ասաց, որ հատկապես մտահոգվում է ամուսնու ու զավակների համար: Մեր մյուս բարեկամներին խնդրեցի, որ աղոթեն իր համար: Շատ ուրախացանք, երբ մեկ այլ բժիշկ քաջալերել էր նրան չհուսահատվել՝ սասելով, որ ինքն ու իր գործընկերները ամեն բան կանեն փրկելու նրա կյանքը: Թեև օրերը մեկը մյուսից դժվար էին, սակայն նա դրանցից չվհատվեց, այլ կենտրոնացավ Աստծո վրա:

Ընկերուհուս հաստատուն հավատքը ինձ հիշեցրեց Ղուկասի Ավետարանում նշված այն կնոջը, որը, հոգնած տասներկու տարվա ցավից, հուսախաբությունից ու մեկուսացումից, Հիսուսի հետևից մոտեցավ ու նրա հագուստի քղանցքին դիպավ և անմիջապես բուժվեց: Այդ կնոջ բուժումը արդյունքն էր այն հավատի, թե Հիսուսը կարող է անել այն, ինչ ուրիշները չեն կարող (Ղուկ. 8.43-44):

Մենք էլ կարող ենք ցավի, նեղության, անհույս սպասելու անտանելի ու անվերջ թվացող փորձառությունն ունենալ, բայց մեր ցանկալի բուժումը չստանալ, քանի դեռ չենք վստահում Քրիստոսին: Բայց նույնիսկ այդ պահին Հիսուսը հրավիրում է, որ շարունակենք Իրեն մոտենալ, վստահել, չհուսահատվել ու հավատալ, որ Նա կարող է, միշտ վստահելի է ու հասանելի:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ մեզ հիշեցնելու համար, որ բնավ Քեզանից հեռու կամ անհույս չենք: Դու կարող ես անել այն, ինչ ուրիշները չեն կարող: Ամեն:

Հակառակ մեր շուրջը եղող մարտահրավերներին՝ մենք կարող ենք վստահել Իրեն:

Կարդա՛ր
Ղուկաս 8. 40 - 48

Հիսուսն էլ ասաց նրան. «Քաջացիր, դու՛ստր, քո հավատը քեզ բժշկեց, գնա՛ խաղաղությամբ: Ղուկ. 8. 48

«Սիրում եմ քեզ աշխարհի չափ»

Քրոնյա երեք տարեկան աղջնակը՝ Ժեննան, մի արտահայտություն ունի, որը միշտ ջերմացնում է սիրտս: Երբ մի բան շատ է սիրում, հայտարարում է. «Սիրում եմ աշխարհի չափ» ու թատերական ձևով պարզում է թեկերը: Երբեմն խորհում եմ, թե ե՞րբ եմ ես էլ այդպես անմնացորդ ու համարձակ սիրել:

Հովհաննեսը մի քանի անգամ կրկնեց. «Աստված սեր է» (Ա.Հովհ.4.8.16) թերևս հաստատելու համար, որ Աստծո սերը և ոչ թե մեր բարկությունն ու ամոթն են ճշմարտության այն խորը հիմքը, որը դժվար հասկանալի է մեզ համար:

**Կարդա՛ր
Ա Յովհ. 4. 7 - 19**

Աստված սեր է, և ով որ սիրո մեջ է մնում, Աստծու մեջ է մնում, ու Աստված՝ նրա մեջ: Ա Յովհ. 4.16

Աշխարհը մեզ բաժանում է՝ հիմնվելով մեր վախերի վրա, բայց մենք հաճախ միանում ենք՝ անտեսելով կամ հերոսացնելով այդ ձայները, որոնք մարտահրավերներ են մեր իսկ ճշմարտության համար:

Խաբեությունն ու զորությունների պայքարի մեջ (հմ. 5-6) Աստծո հանդեպ սիրո ճշմարտությունը մնում է որպես խավարի մեջ շողացող լույս՝ հրավիրելով մեզ, որ սովորենք խոնարհության ուղին, վստահությունն ու սեր (1.7-9,3.18): Հոգ չէ, թե ինչ ցավալի ճշմարտություն երևան կհանի, կարող ենք իմանալ, որ մենք կսիրվենք (4.10, Հռոմ.8.1):

Երբ Ժեննին խոնարհվում ու ականջիս փսփսում է. «Քեզ սիրում եմ ամբողջ աշխարհի չափ», ես էլ իրեն եմ նույնը շնջում: Ու ես շնորհակալ եմ այն ազնիվ հիշեցման համար, թե ամեն բոլակ պարուրված եմ սիրով:

Աղոթք - Սիրող Յայր, շնորհակալ եմ Քո սիրո համար: Օգնի՛ր, որ Քեզ վստահենք ու հետևենք Քո լույսին ու սիրենք, եթե նույնիսկ ճանապարհը խավարով պատված լինի: Ամեն:

Երբ ստիպված կլինես հավատալու, թե վախը սիրուց ավելի մեծ է, հիշի՛ր, որ այդ վախի կարիքը չկա:

Դա հիանալի է

Յոթերորդ դասարանի աշակերտը առաջին անգամ պետք է վազքի մրցումներին մասնակցեր, պատրաստվել էր, բայց չէր ուզում վազել, որովհետև վախենում էր, թե չի կարողանա: Նա սկսեց մրցումը մյուսների հետ, ապա երբ բոլորը մեկ առ մեկ ավարտեցին երկու մղոն վազքի մրցումը և անցան վերջնագիծը, այս դժկամ վազորդը դեռ ուշանում էր: Մայրը, որ հետևում էր աղջկան ու սպասում էր, որ նա էլ ավարտի, մոտեցավ վերջից վազող հուզված դստերը: Տեսնելով մորը՝ աղջիկը բացականչեց. «Դա հիանալի է»:

Ի՞նչ հիանալի բան կա վերջին տեղը զբաղեցնելու մեջ: Պատասխանը պարզ է. «Ավարտելը»:

Աղջիկը փորձել էր դժվար բան անել ու կարողացել էր ավարտել այն: Աստուծո խոսքը պատվում է ծանր աշխատանքն ու ջանասիրությունը: Սա մի հայեցակետ է, որին վարժվել ենք մարզանքի, երաժշտության կամ որևէ այլ ոլորտում, որոնք ջանք ու եռանդ են պահանջում:

Առակաց 12. 24-ում ասվում է. «Ընտրյալների ձեռքը պիտի հեշտ հաղթի, բայց նենգավորները պիտի գերության մատնվեն»: Այնուհետև կարդում ենք. «Իմաստությունն է, որ մարդ աշխատում և մի բան է ավելացնում, բայց անհոգ դատարկապորտը միշտ կարիքի մեջ պիտի լինի» (14.23): Այս իմաստուն սկզբունքները և ո՛չ խոստումները կօգնեն, որ մենք ավելի լավ ծառայենք Աստուծուն:

Աստուծո գրած ծրագիրը մեզ համար միշտ էլ երթագրում է գործ ու աշխատանք: Եկե՛ք գործենք՝ մեզ իր տված գործությամբ և արդյունքներն էլ իրեն թողնենք:

Աղոթք - Երկնավոր Զայր, օգնի՛ր, որ կարողանամ անել այն, ինչ որ խնդրել ես ինձնից:

Սովորի՛ր փութաջան լինել ու հարատել և Տիրոջը պատիվ արած կլինես:

Կարդա՛
Առ. 12. 12, 24-28

Ընտրյալների ձեռքը պիտի հեշտ հաղթի, բայց նենգավորները պիտի գերության մատնվեն: Առ. 12.24

Մնայուն աղոթքներ

«Աղոթքներն անմահ են» - այս ուշագրավ բառերի հեղինակը էդվարդ Բոնդան է, մարդ, որի դասական բնորոշումներն աղոթքի մասին սերունդների են ոգեշնչել: Մեր աղոթքի զորութեան ու տեսականության մասին նա ասել է. «Այն արտասանող շուրթերը կարող են լռել մահվամբ, այն զգացող սիրտը կարող է դադարել տրոփելուց, սակայն աղոթքներն ապրում են Աստծո առաջ: Աստծո սիրտը կենտրոնացած է դրանց վրա, ու այդ աղոթքները կյանքի են վերածվում դրանք արտասանողների համար: Դրանք ապրում են մեկ սերունդ, մեկ դար ու մեկ աշխարհ»: Երբևէ մտածե՞լ ես, թե քո աղոթքները, հատկապես ցավից, նեղութիւնից ու տառապանքից ծնվածները հասնու՞մ են Աստծուն: Բոնդասի ներշնչումով բառերը մեզ հիշեցնում են մեր աղոթքների, ինչպես նաև Հայտնության 8.1-5-ի նշանակությունը: Նկարագրված է երկինքը (Հմ.1), որ Աստծո գահի վրա է և տիեզերքի հսկողության կենտրոնը: «Եվ տեսա այն յոթ հրեշտակներին, որ կանգնած էին Աստծո առաջ» (Հմ.2): «Մի ուրիշ հրեշտակ եկավ, սեղանի առաջ կանգնեց և ոսկի խնկաման ուներ: Նրան շատ խունկ տրվեց, որ բոլոր սրբերի աղոթքների հետ մատուցի այն ոսկի սեղանի վրա, որ աթոռի առաջ էր» (Հմ. 3): Որքա՛ն քաջալերող ու ակնահաճո պատկեր է հաջորդ նկարագրությունը. «Եվ խնկերի ծուխը սրբերի աղոթքների հետ հրեշտակի ձեռքից Աստծո առաջ բարձրացավ» (Հմ.4): Երբ մտածենք, թե մեր աղոթքները կարող են կորսված կամ մոռացված լինել, հիշենք, որ մեր աղոթքները արժեքավոր են Աստծո համար:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ մեր իմացածից շատ ավելի ես հոգում: Օգնի՛ր իմանալ, որ Դու տեսնում ես արդարներիս և լսում ես մեր աղոթքները: Ամեն:

Հարատևիր աղոթքի մեջ, վստահ լինելով, որ Աստված լսում է և պատասխանում:

Կարդա՛ր
Հայտն. 8.1-5

Տե՛ր թող աղոոթքս քեզ ուղղվի որպես խունկ, ձեռքերիս կարկառումն՝ իբրև երեկոյան պատարագ: Սաղմ. 140.2

Կրակի հոսք դրախտում

Լուսթյան մեջ միայն հոսող կրակի սոււրոցն ու ճարճատյունն էր Լավում: Շրջանի բնակիչները տխուր և զարմացած էին: Ընդհանրապես նրանք այս տեսարանը «դրախտ» էին անվանում, սակայն այդ օրը Հառուայի Պուժմա շրջանի հրեղեն հոսանքը բոլորին հիշեցրեց, որ Աստված այս կղզին հրաբխային մեծ ուժով է ստեղծել: Իսրայելի ժողովուրդն էլ հանդիպեց նման խիստ ուժի: Երբ Դավիթ թագավորը վերագրավեց Ուխտի տապանակը (Բ. Թագ. 6.1-4), մեծ տոնախմբություն սկսեց (Հմ.5): Այդ պահին մի մարդ «իր ձեռքը դրեց Աստծու տապանակին, որ այն բռնի: Նա այն բռնեց, որովհետև լծկան զվարակն այն շարժել էր տեղից: Տեղը բարկացավ Օզայի վրա և նրա հանդուժյան համար հարվածեց նրան այնտեղ, և նա մեռավ» (Հմ.6-7): Այս դեպքը սովորեցնում է խորհել, որ Աստված անկանխատեսելի է: Նա ինչպես կարողանում է ստեղծել, այդպես էլ քանդել: Հիշենք, որ Աստված Իր ժողովրդին հատուկ ցուցմունքներ էր տվել, թե ինչպես էին վարվելու պաշտամունքի համար Իր տված իրերի հետ (տե՛ս Թվոց 4): Իսրայելն Աստծուն մոտենալու առանձնաշնորհ ուներ, բայց Նրա ներկայությունը ավելի շատ ճնշում էր, որ հանկարծ անուշադրությամբ չմոտենան Իրեն: Եբր. 12-ում հիշատակվում է «կրակով վառված» մի լեռ, որտեղ Աստված Մովսեսին տվեց տասը պատվիրանները: Լեռը սարսափեցրեց բոլորին. (Հմ.18-21): Հեղինակը այդ պատկերը համեմատում է սրա հետ. «Դուք մոտեցել եք... Նոր Կտակարանի միջնորդ Հիսուսին» (Հմ.22-24): Հիսուսը՝ Աստծո Որդին, մեզ համար ճամփա բացեց, որպեսզի կարողանանք մոտենալ Աստծուն:

Աղոթք - Տե՛ր, ների՛ր մեզ, երբ կփորձենք մտածել միայն Քո սիրո մասին՝ մոռանալով Քո ուժի մասին: Սովորեցրո՛ւ մեզ, որ խստությունն էլ Քո նկարագրի մի կարևոր մասն է: Ամեն:

Մեր հզոր ու զորեղ Աստվածը մեզ նաև սիրում է:

Կարդա՛

Բ Թագ. 6.1-9

Ուրեմն շնորհի աթոռին համարձակությամբ մոտենանք, որ ողորմություն ընդունենք ու շնորհ գտնենք պատշաճ ժամանակին մեզ օգնելու: Եբր. 4.16

Կախված է Աստծուց

Նյու Յորք այցելելիս Նեյթն ու Շերլինը հաճույքով օգտվեցին «օմակասե» անունով ճաշարանից: «Օմակասե»-ն ճապոներեն բառ է, որը նշանակում է «թողնում եմ քեզ»: Նման ճաշարաններում այցելուն թողնում է, որ խոհարարն ընտրի այդ օրվա իրենց ուտելիքը: Թեև նրանք առաջին անգամ էին այդտեղ լինում, սակայն շատ հավանեցին խոհարարի ընտրած ու պատրաստած ճաշը:

Այս միտքը կարելի է նմանեցնել մեր աղոթքի խնդրանքներին ու Աստծո հանդեպ մեր ունեցած կեցվածքին՝ «Թողնում եմ Քեզ»: Աշակերտները տեսան, որ Հիսուսը «անապատ տեղեր էր քաշվում և աղոթք էր անում» (Ղուկ. 5.16), և մի օր խնդրեցին Նրան, որ իրենց աղոթել սովորեցնի: Նա նրանց ասաց, որ խնդրեն իրենց ամենօրյա կարիքները՝ ներում և փորձությունից ազատում ստանալու համար: Իր պատասխանի մի մասն էլ թելադրում էր ունենալ հանձնվելու կեցվածք. «Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա» (Մատթ. 6.10):

Կարող ենք մեր կարիքները հայտնել Աստծուն, որովհետև Նա ուզում է լսել մեր սրտում եղածը: Նա ուրախանում է՝ մեր խնդրածը մեզ տալով: Սակայն, լինելով մարդկային ու սահմանափակ, մենք չգիտենք, թե որն է մեզ համար լավագույնը, հետևաբար տրամաբանական է հանձնվել ու հեզորեն խնդրել: Մեր աղոթքների պատասխանը կարող ենք թողնել իրեն՝ վստահ լինելով, որ Ինքը լավագույնն է ընտրելու մեզ համար:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ես ու իմ կարիքները սրտամոտ եմք Քեզ: Կյանքս ու բոլոր սիրելիներիս հանձնում եմ Քո հոգատարությանը: Ամեն:

Ամբողջովին հանձնվի՛ր Աստծուն և թույլ տուր, որ Նա ամեն բան անի քեզ համար:

Կարդա՛ր
Մատթեոս 6.5-15

Քո կամքը լինի:
Մատթ. 6.10

Մեր օրհնություններն ու իր սերը

2015-ին մի կին իր մահացած ամուսնու համակարգիչը հանձնեց Չվերանորոգման կենտրոն: Համակարգիչը 1976-ին էր արտադրվել: Սակայն ավելի կարևորը ոչ թե այդ տարեթիվն էր, այլ այն պատրաստողի անձը: «Էփրլ» ընկերության հիմնադիր Սթիվ Ջոբսի ձեռքով պատրաստված 200 համակարգիչներից մեկն էր դա և արժեքը մոտավորապես քառորդ միլիոն դոլար: Երբեմն որևէ բանի արժեքն իմանալը նշանակում է իմանալ, թե ով է այն պատրաստել:

Իմանալ, որ Աստված է մեզ ստեղծել, նշանակում է գնահատել այն արժեքը, որ մենք ունենք իր համար (Ծն. 1.27): 135-րդ Սաղմոսում նկարագրվում են իր ժողովրդի պատմության կարևոր պահերը, թե ինչպես նրանք ազատվեցին Եգիպտոսի գերությունից (Հմ.11-12), «իր ժողովրդին հանեց դեպի անապատ» (Հմ.16) և «Նրանց երկիրը որպես ժառանգություն տրվեց» (Հմ.21-22): Եվ ամեն անգամ, երբ Իսրայելի պատմությունից որևէ պահ է ներկայացվում, հետևում է նույն կրկներգը. «Քանզի հավերժ է նրա ողորմությունը»: Այս կրկներգը Իսրայելի ժողովրդին հիշեցնում է, որ իրենց փորձառությունները ուղղակի պատահական պատմական դեպքեր չեն: Այդ պահերից յուրաքանչյուրը ծրագրված էր Աստծո կողմից և իր ստեղծածների հանդեպ իր հավիտենական սիրո արտացոլումն էր:

Հաճախ են լինում պահեր, որոնք ցույց են տալիս, որ Աստված ներկա է, բայց Նրա ազնիվ ձևերն անցնելուց հետո մենք մոռանում ենք, որ «Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում, լույսի Հորից» (Հակ.1.17), որը մեզ ստեղծեց ու սիրեց:

Աղոթք - Երկնավոր Հայր, խնդրում եմ՝ մի՛ թող, որ գեթ մեկ օրհնություն անցնի ու ես չանդրադառնամ, որ դա Քեզանից է եկել: Ամեն:

**Մեր բոլոր օրհնությունների աղբյուրը Ինքը՝
մեր Աստվածն է:**

Կարդա՛ր
Սաղմ. 135. 1-3, 10-26

Իր ժողովրդին հանեց դեպի անապատ, քանզի հավերժ է նրա ողորմությունը: Սաղմ. 135.16

Իսկական բարեկամներ

Միջնակարգ դպրոցում մեկը կար, որի հետ երբեմն էի շփվում: Մենք մտերիմ էինք միայն մեր փոքր եկեղեցում, որտեղ ես իրեն տարեկից միակ աղջիկն էի, և մի քանի առիթով էլ միասին ժամանակ ենք անցկացրել դպրոցից դուրս: Իսկ դպրոցում մեր բարեկամությունը այլ էր: Եթե ինձ առանձին հանդիպեր, թերևս բարևեր, բայց միայն եթե ուրիշ մեկը չկար այդտեղ: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ես դպրոցում խոսափում էի նրանից: Գիտեինք մեր բարեկամության սահմանները:

Հավանաբար բոլորիս էլ ծանոթ է միակողմանի ու սահմանափակ բարեկամության ցավը: Սակայն մեկ այլ տեսակի բարեկամություն էլ կա, որն անցնում է բոլոր տեսակի սահմանափակումները: Դա մանկական հոգով եղած բարեկամության մի տեսակ է, որի հանձնառությունը կյանքի ճամփորդությունը մեզ հետ բաժնեկցելն է: Դավիթն ու Հովնաթանը այդպիսի բարեկամներ էին: «Հովնաթանը հոգով կապվեց Դավիթին և նրան իր անձի պես սիրեց» (Ա.Թագ.18. 1-3): Թեև Հովնաթանը կարող էր իր հոր՝ Սավուղի մահից հետո թագավոր դառնալ, բայց նա հավատարիմ մնաց Դավիթին, որին Աստված ընտրել էր որպես Սավուղ թագավորին հաջորդող: Հովնաթանը նույնիսկ օգնեց Դավիթին՝ ազատելով նրան իր հոր նյութած դավերից ու սպանության երկու փորձերից (19.1-6, 20.1-42):

Հակառակ ամեն ինչի՝ Հովնաթանն ու Դավիթը բարեկամներ մնացին, և նրանց բարեկամության միջոցով Աստծո հանդեպ մեր սիրո զգացողությունն ավելի է խորանում:

Աղոթք - Երկնավոր Հայր, շատ ենք ուզում բարեկամներ ունենալ: Խնդրում ենք՝ մեր առջև բաց ճիշտ, մնայուն և Աստվածակենտրոն բարեկամության դռներ: Ամեն:

**Ուզում եք ունենալ իսկական բարեկամներ,
բայց լավագույն բարեկամը Աստված է:**

Կարդա՛
Ա Թագ. 18.1-4, 19.1-6
Բարկամներ
կարող ես ունենալ
ամեն ժամանակ:
Առ. 17.17

Զգուշութեան շրջանակներ

Աֆրիկայան եղնիկները զարմանալի բնագղով դաշտում իրենց հանգստանալու ժամանակ այսպես կոչված «զգուշութեան շրջանակներ» են կազմում: Նրանք ամբողջ խմբով շրջան են կազմում, բայց այնպես, որ յուրաքանչյուրը դեմքով դեպի դուրս է նայում: Այս ձևով նրանց տեսադաշտում է լինում ամբողջ հորիզոնը, և նրանք կարողանում են անմիջապես նկատել մոտեցող վտանգը:

Կարդա՛
Երբ. 1. 19-25

...Քաջալերեցե՛ք և իրար շինություն տվե՛ք: Ա. Թես. 5.11

Փոխանակ միայն իրենց անձի մասին մտածելու՝ խմբի անդամները միմյանց մասին են հոգ տանում: Այս է նաև Տեր Հիսուսին հետևողներին Աստծո տված իմաստութիւնը: Աստվածաշունչը մեզ քաջալերում է՝ ասելով. «Իրար նկատմամբ զգուշ լինենք՝ իրար սիրո և բարի գործերի մղելով: Եվ մեր հավաքույթիները չթողնենք» (Եբր. 10.24-25):

Երբայեցիներին ուղղված նամակի հեղինակը բացատրում է, որ քրիստոնյաները երբեք միայնակ չեն ընթանալու: Միասին մենք ավելի զորավոր ենք, մենք կարող ենք «իրար հորդորել» (Հմ.25), «մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղութեան մեջ են, ա՛յն մխիթարութեամբ, որով մենք մխիթարվում ենք Աստծուց» (Բ. Կորնթ.1.4) և օգնել իրար, որպեսզի զգուշ լինենք մեր ոսոխ՝ սատանայի ջանքերից, «որը մոռացող առյուծի պես ման է գալիս և փնտրում է, թե ում կուլ տա» (Ա. Պետ. 5.8): Իրար նկատմամբ հոգատար լինելը շատ ավելին է, քան պարզապես գոյատևելը: Դա մեզ Հիսուսի նման է դարձնում: Բոլորս էլ քաջալերանքի կարիք ունենք: Աստված էլ պիտի օգնի մեզ, որպեսզի կարողանանք միմյանց օգնել, երբ սիրով մոտենում ենք իրեն:

Աղոթք - Սիրող Աստված, շնորհակալ եմ հավատարմութեանդ համար: Օգնի՛ր ինձ՝ կարողանամ ուրիշներին քաջալերել, որ նայեն Քեզ: Ամեն:

Ուրիշների քաջալերանքի կարիքն ունենք, բայց մենք էլ այլոց պետք է քաջալերենք:

Դեպի մրցանակ

1994-ին նկարահանված «Ֆորեստ Գամփ» հայտնի ֆիլմի հե-
րոսը հռչակվում է իր վազքով: Սկզբում որպես սոսկ մար-
զանք սկսած փոքրիկ նպատակակետը գնալով մեծացավ, ծա-
վալվեց, շարունակվեց երեք տարի, երկու ամիս, տասնչորս օր
ու տասնվեց ժամ: Ֆորեսթը վազել էր ԱՄՆ-ի ողջ տարածքով
մեկ, արժանացել ամբողջ երկրի հե-
տաքրքրություններ, ուներ հետևորդներ, և
մի օր, ինչպես հանկարծակի սկսել էր
վազել, այդպես հանկարծ էլ դադարեց
վազելուց: Իսկ իր վազքի սկիզբը նա
այսպես էր նկարագրում. «Այդ օրը,
առանց որևէ հատուկ պատճառի, որոշեցի վազելով անցնել մի
կարճ ճանապարհ»:

Որպես Ֆորեսթի քմահաճ վազքի հակապատկեր՝ Պողոսն իր
ընթերցողներին խնդրում է հետևել իր օրինակին և ասում է.
«Բոլորն են վազում, բայց մեկն է մրցանակը ստանում. դուք
այնպես՝ վազեցեք, որ հասնեք» (Ա.Կորնթ. 9.24): Որպես կար-
գապահ աշակերտներ՝ մեր վազքը կարող է մեր կենսակերպի
ցուցանիշ լինել, ոչ թե քմահաճույքների շարք: Մեր իրավունք-
ներից հրաժարվելու կամքը կարող է մեզ օգնել, որ մեզքից ու
մահից մեր ազատումի բարի լուրով հասնենք ուրիշներին:

Մեր սրտերի ու հոգիների մարզումով ուրիշներին մեր կող-
քին վազքի հրավիրելը մեզ վստահություն է տալիս, որ ար-
ժանի պիտի լինենք հավիտյան Աստծո հետ հաղորդակցության
գերագույն մրցանակին: Աստծո տված հաղթողի պսակը հա-
վերժ է, և այն կշահենք մեր կյանքի ընթացքը վազելով ու իր
զորությունը վստահելով:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, օգնի՛ր, որ կարողանամ կենտրոնա-
նալ վազելու իմ պատճառի՝ շուրջս եղողների հետ Քո մասին
բաժնեկցելու վրա: Ամեն:

**Պողոսի համար վազքի նպատակը հստակ էր:
Ո՞րն է մե՛ր վազքի նպատակը:**

Կարդա՛
Ա Կորնթ. 9. 19-27

...Այնպե՛ս վազեցեք,
որ հասնեք:
Ա Կորնթ. 9.24

Յա՛յր, որտե՞ղ ես

Արդեն մոտենում էի մեր տանը, երբ աղջիկս զանգահարեց ու սարսափած հարցրեց. «Հայրի՛կ, ու՞ր ես»: Ես խոստացել էի ժամը վեցին տուն հասնել, որ իր հետ խաղ էի խաղալու: Թեև չէի ուշացել. բայց նրա ճայնի մեջ արդեն հուսախաբույթյուն ու անվստահություն կար: Պատասխանեցի, որ այստեղ եմ և ինքը իզուր ինձ չի վստահում:

Կարդա՛ր
Բ Օրինաց 31. 1-8

Քո առջևից գնացող Տերը չի լքելու ու չի անտեսելու քեզ: Մի՛ երկնչիր ու մի՛ վախեցիր: Բ Օր. 31.8

Այդ բառերն ասելիս մտածում էի, թե մեր երկնավոր Տերը որքան հաճախ է առիթ ունենում այդպես մտածելու: Ճնշող պայմանների ու պահերի մեջ ես էլ եմ անհամբեր դառնում, անվստահություն ունենում, թե Նա պիտի կատարի իր խոստումները, ես էլ եմ բացականչում.«Հա՛յր, որտե՞ղ ես»:

Անորոշության ու նեղության մեջ հաճախ եմ կասկածում Աստծո ներկայության, իր բարության և իմ հանդեպ իր ունեցած նպատակների մասին: Իսրայելի ժողովուրդն էլ նույնը արեց: Բ օրինաց 31-ն ասում է, որ նրանք պատրաստվում էին մտնելու խոստացյալ երկիրը և գիտեին, որ իրենց առաջնորդ Մովսեսը ետ էր մնալու: Մովսեսը վստահեցրեց ժողովրդին՝ հիշեցնելով. «Քո առջևից գնացող Տերը չի լքելու ու չի անտեսելու քեզ: Մի՛ երկնչիր ու մի՛ վախեցիր» (Հմ.8):

Այս խոստումը, թե Աստված միշտ մեզ հետ է, մեր հավատքի անկյունաքարն է (Մատթ.1.23, Եբր. 13.5):

Աղոթք - Յա՛յր, օգնիր մեզ տեսնելու, թե որքան ես սիրում մեզ: Ամեն:

Մի՛ հարցրու. «Ու՞ր է Աստված»: Որովհետև Նա այստեղ է, հենց հիմա մեզ հետ է և միշտ պատրաստ է լսելու մեր աղոթքները:

ԴՅՈՒՐԻՆ Է ԽՃՃՎԵԼՐ

Տարիներ առաջ, երբ մի խումբ զինվորներ կռվում էին շոգ ու հեղձուցիչ անտառում, մի լայնատարած փշոտ վայրի որթատունկ կապվ նրանց հազուստներին՝ պատճառ դառնալով, որ նրանք իսկական թակարդում հայտնվին: Զինվորները ձգտում էին ազատվել մացառներից, սակայն նորանոր ճյուղեր էին կաչում: Զինվորներն այդ որթատունկն անվանեցին «Մի ըոպե սպասիր», որովհետև եթե այդ վայրի բույսը մի անգամ կաչում է քեզ, այլևս անհնար է առաջ գնալը: Նրանք ստիպված էին իրենց խմբին ասելու. «Հե՛յ, մի բույս սպասեք, ես բռնված եմ»:

Կարդա՛
Եբր. 2.17-18, 12.1-2

Դե՛ն զգենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը: Եբր. 12.1

Նույն կերպ էլ Հիսուսի հետևորդների համար է դժվար առաջ գնալ, եթե նրանք բռնավորված են մեղքով: Եբրայեցիների ռեզոլված նամակում ասվում է. «Դե՛ն զգենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը և համբերությամբ վազենք մեր առաջ դրած ասպարեզի ընթացքը» (Եբր. 12.1): Բայց ինչպե՞ս կարելի է մեզ ճնշող մեղքը թոթափել:

Հիսուսը միակն է, որ կարող է մեզ ազատել մեր կյանքի մեջ թափանցող մեղքից: Սովորենք մեր հայացքը կենտրոնացնել իր՝ մեր Փրկչի վրա (12.2): Որովհետև Աստծո՞ Որդին «ամբողջովին մարդ եղավ», «ամեն բանով փորձված է մեզ նման, բայց առանց մեղքի» (2.17-18, 4.15): Մենք կարող ենք մեղքերի մեջ թաղված լինել, սակայն Աստված ուզում է, որ հաղթահարենք այդ փորձությունները: Մեր ուժերով դա հնարավոր չէ, միայն իր միջոցով կարող ենք թոթափել մեր մեղքերը:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, ինձ զորություն տու՛ր, որ կարողանամ իմ կյանքում եղած մեղքից ազատվել: Օգնի՛ր, որ վստահեմ Քո զորությանը և առաջնորդի՛ր ինձ ուղիղ ճանապարհով: Ամեն:

Մեղքերը մեզ կարող են հեշտությամբ կլանել, սակայն Տիրոջ շնորհքով կարելի է դրանցից ազատվել:

Սիրել օտարականին

Երբ ընտանիքիս անդամներից մեկը այլ կրոնի սկսեց հա-
րել, քրիստոնյա ընկերներս խնդրեցին նրան «համոզել»,
որ դարձի գա: Ու ես սկսեցի իմ ընտանիքի անդամին ավելի սի-
րել, ինչպես որ Քրիստոսը պիտի վարվեր, ներառյալ հանրա-
յին տեղերում, որտեղ նրան ու իր հագուկապը չէին ընդու-
նում, կոպիտ ակնարկներ էին անում:

Մեկը նույնիսկ իր մեքենայից գոռալով
ասաց. «Տուն գնա՛»՝ առանց իմանալու,
որ նա արդեն իսկ իր «տանն էր»:

Մովսեսը շատ ավելի ազնիվ վարվե-
լաձև է սովորեցնում այն մարդկանց
հանդեպ, ում հագուկապն ու հավատ-
քը տարբերվում են: Արդարությունն ու
ողորմությունն մասին օրենքները հիշեց-
նելով՝ նա Իսրայելի որդիներին ասաց. «

Պանդուխտին մի՛ ճնշիր, դուք գիտեք պանդուխտ մարդկանց
վիճակը, որովհետև դուք ևս պանդուխտ էիք եգիպտացիների
երկրում» (Ել. 23.9): Այս պատվիրանը, որ կրկնվում է Ել. 22.
21-ում և Ղևտական 19.33-ում, արտահայտում է Աստծո հո-
գատարությունը բոլոր օտարականների և անարդարության ու
չարաչահությունն ենթարկված մարդկանց հանդեպ: Հետևաբար,
երբ իմ ընտանիքի այս անդամի հետ ժամանակ եմ անցկաց-
նում, փորձում եմ նույն ազնվությունն ու հարգանքը ցուցա-
բերել, որ ես կուզենամ ստանալ ուրիշներից: Հիսուսի քաղցր
սիրո մասին նրան հիշեցնելու լավագույն ձևը ոչ թե նախա-
տելն է Հիսուսին մերժելու համար, այլ նրան սիրելը, ինչպես որ
Հիսուսն է մեզ սիրում:

Աղոթք - Շնորհքի Հայր, բա՛ց սիրտս իմ երկիր եկած օտա-
րականի կամ գաղթականի առաջ, որպեսզի կարողանամ օգ-
նել նրան՝ հանդիպելու Քեզ: Ամեն:

**Օտարական կամ մեզանից տարբեր մարդկանց կհանդիպենք, ուստի
կարևոր է, որ կատարենք նրանց չնեղելու և չտանջելու պատվիրանը:**

Կարդա՛ Ելք 23. 1-9

Պանդուխտին մի՛
չարչարեք, մի՛
նեղեք նրան,
որովհետև դուք ևս
պանդուխտ էիք
եգիպտացիների
երկրում: Ելք 22.21

Ճշմարիտ խոր փափագ

Քես Լյուիսի «Նարնիի քրոնիկները» մանկական վեպի Քամենախիզախ հերոսը Ռիփիչիփ մուկն է, որը չվախենալով ոչ մի բանից՝ պատերազմի մեջ մտավ և, շարժելով իր փոքրիկ սուրը՝ հալածեց հակառակորդին Նավարի կղզի: Ո՞րն էր մկնիկի քաջության գաղտնիքը - Ասլանի երկիր հասնելու մեծ ցանկությունը: «Դա է իմ սրտի փափագը»,- ասաց նա՝ լավ իմանալով՝ ինչ է ուզում, և դա նրան օգնեց հասնելու իր արքային:

Երիբովցի կույր Բարտիմեոսը սովորականի պես նստած էր իր տեղում և անցորդներից դրամ էր մուրում, երբ լսեց, որ Հիսուսն է մոտենում մեծ ամբոխի ուղեկցությունը: Նա բարձրաձայն կանչեց. «Հիսու՛ս, Դավթի՛ որդի, ողորմի՛ր ինձ» (Մարկ. 10.47): Ամբոխը փորձեց լուեցնել նրան, բայց հնարավոր չեղավ:

Մարկոսն ասում է. «Եվ Հիսուսը կանգնեց» (Հմ. 49): Այդ աղմուկի մեջ Հիսուսն ուզեց լսել Բարտիմեոսին և հարցրեց. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ համար անեմ» (Հմ.51): Պատասխանը ակնհայտ էր ու վստահաբար Հիսուսը գիտեր: Սակայն այն սպավորությունն էր, որ Բարտիմեոսին ուժ էր պետք ասելու իր ցանկության մասին: «Բաբունի՛, որ տեսնեմ»,-ասաց նա (Հմ.51): Եվ Հիսուսը նրան տուն ուղարկեց, և նա առաջին անգամ գուլյներ տեսավ, գեղեցկություն ու իր բարեկամներին:

Ամեն փափագ է, որ անմիջապես կատարվում է: Բայց այստեղ շատ կարևոր է, որ Բարտիմեոսը հստակ գիտեր իր ցանկությունը և այն ներկայացրեց Տեր Հիսուսին:

Աղոթք - Հիսու՛ս, օգնի՛ր, որ ցանկություններս հայտնեմ քեզ: Իմ փափագների գոհացումը միայն Դու կարող ես տալ: Ամեն:

Ցանկություններ միշտ կունենանք: Կարևորն այն է, որ դրանք Իրեն ներկայացնենք:

Կարդա՛
Մարկոս 10. 46-52

Հիսուսը հարցրեց
«Ի՞նչ ես ուզում, որ
քեզ համար անեմ»:
Մարկ.10.51

Պտղաբեր մինչև վերջ

Թեև Լենոր Դանլոփը իննսուունչորս տարեկան էր, բայց միտքը շատ սուր էր, ժպիտը փայլուն, իսկ Հիսուսի հանդեպ նրա ունեցած սերը շատերն էին զգացել: Ու ամենեկին անսովոր էր նրան եկեղեցու երիտասարդների ընկերակցությամբ տեսնել: Նրա ներկայութիւնն ու մասնակցութիւնը շատերին էին ուրախացնում ու ոգևորում: Լենորի կյանքն այնքան բուռն էր, որ նրա մահը անակնկալ թվաց բոլորիս: Ուժեղ վազորդի նման նա շատ արագ վազեց և հասավ կյանքի վերջնագծին: Նա այնքան կենսունակ ու առույգ էր, որ իր մահից քիչ առաջ ավարտեց տասնվեց շաբաթվա հատուկ դասընթացը՝ Հիսուսի պատգամը աշխարհում տարածելու մասին: Լենորի արգասաբեր ու Աստվածահաճո կյանքը Սաղմոս 91-ի 11-15-ում նկարագրվածի արտահայտութիւնն է: Այդտեղ նկարագրված է այն մարդկանց ծլելը, ծաղկելն ու պտղաբերութիւնը, որոնց բազմափորձ կյանքը արմատավորված է Աստծո հետ ունեցած հարաբերութիւններում (Հմ.12-13): Այդտեղ պատկերված ծառերը արժևորելով իրենց պտղի և փայտի համար՝ սաղմոսերգուն ներկայացնում է կենսունակության, բարգավաճման ու օգտակարության զգացումը: Երբ մեր կյանքում տեսնում ենք սիրելու, բաժնեկցելու, օգնելու և այլոց դեպի Քրիստոսն առաջնորդելու պտուղները, պետք է ուրախանանք: Նույնիսկ նրանք, ովքեր արդեն «տարիքով» են կամ «ծեր», երբեք ուշ չէ արմատ նետել ու պտուղ տալ. «Դրանք պտղաբեր կլինեն նաև ծերության ժամանակ» (Հմ.15): Մերն էլ նույնը կարող է լինել:

Կարդա՛ր
Սաղմոս 91. 12-15

Դրանք կտնկվեն
Տիրոջ տանը, ու
կծաղկեն մեր Աստծու
գավիթներում:
Սաղմ. 91.14

Աղոթք - Գալոր, ինձ տու՛ր պտղաբերելու զորութիւն, որպեսզի ցույց տամ, որ իմ կյանքը արմատացած է Քո Որդու՝ Զիսուսի կյանքի մեջ: Ամեն:

Եթե մեր կյանքերը արմատացած են Տեր Զիսուսի մեջ, մենք էլ պտուղ կտանք և կփառավորենք Աստծուն:

Գեղեցկորեն բեռնավորված

Արթնացա, երբ ընդամենը կես ժամ էլ չէի քնել ու այլևս քունը մոտ չեկավ աչքերիս: Ընկերուհուս ամուսինը հիվանդանոցում էր, քաղցկեղը կրկնվել էր՝ ախտահարելով ուղեղն ու տարածվելով մինչև ողնաշարը: Ամբողջ էությամբ ցավում էի բարեկամներիս համար: Ի՛նչ սարսափելի ծանրություն է: Բայց իմ հոգին մի փոքր թեթևացավ աղոթքներիս շնորհիվ: Նույնիսկ կարելի է ասել՝ ես իրենց ցավերի համար գեղեցկորեն բեռնավորված զգացի ինձ: Ինչպե՞ս կարելի էր այդպիսի զգացողություն ունենալ:

Կարդա՛

Մատթեոս 11.28 - 30

Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև: Մատթ. 11.30

Մատթեոսի Ավետարանի 11. 28-30-ում Հիսուսը հանգիստ է խոստանում մեր հոգնած հոգիներին: Կարող է տարօրինակ հնչել, բայց Նրա խոստացած հանգիստը գալիս է, երբ կքում ենք Իր լծի տակ և վերցնում ենք Իր բեռը: 30-ում պարզաբանվում է այդ երևույթը. «Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև»: Երբ թողնում ենք, որ Հիսուսը վերցնի մեր բեռը և ապա մտնում ենք Իր լծի տակ, մենք կապվում ենք Իր հետ, քայլում ենք Իր հետ ու լինում ենք Իր հետ: Երբ կքում ենք Իր բեռան տակ, «ինչպես որ Քրիստոսի չարչարանքները մեր մեջ ավելանում են, այնպես էլ Քրիստոսի միջոցով մեր մխիթարությունը շատանում է» (Բ.Կորնթ. 1.5):

Բարեկամիս համար իմ մտահոգությունը ծանր բեռ էր, բայց երախտապարտ զգացի, որ Աստված արտոնում է այն կրել աղոթքի միջոցով: Աստիճանաբար քունս տարավ ու երբ արթնացա, զգացի, որ դարձյալ գեղեցկորեն բեռնավորված եմ: Բայց հիմա լուծս ավելի թեթև է, ու ես թեթև բեռով քայլում եմ Հիսուսի հետ:

Աղոթք - Սիրելի՛ Յիսուս, խնդրում եմ՝ վերցրու՛ իմ ծանր բեռը և ինձ վրա դի՛ր Քո գեղեցիկ լուծը: Ամեն:

Ծանր բեռնե՞ր ունես ուսիդ, աղոթքով դրանք հանձնի՛ր Յիսուսին:

Ավագ եղբայրը

Հենրի Նոուենը հիշում է իր այցելությունը Սանկտ Պետեր-բուրգի էրմիտաժ, որտեղ ժամեր անցկացրեց Ռեմբրանդտի «Անառակ որդու վերադարձը» կտավի առաջ: Ժամերն անցնում էին, և պատուհանից ներս ընկած բնական լույսի փոփոխությունը Նոուենի վրա այնպիսի տպավորություն թողեց, ասես կտավի գծագրությունները փոխվում էին՝ ցույց տալով որդիների հանդեպ հոր ունեցած սիրո արտահայտությունները:

Ժամը 4-ին մոտ կտավի վրայի երեք պատկերները Նոուենի աչքին երևում են մի տեսակ «առաջ եկած»: Մեկը ավագ որդին էր, որը դժգոհում էր իր կրտսեր եղբոր համար «կարմիր գորգ» փռելու հոր պատրաստակամություն համար: Մինչդեռ այդ անառակ որդին մսխել էր ընտանիքի հարստությունը՝ իրենց պատճառելով ցավ ու ամոթ (Ղուկ. 15:28-30):

Մյուս երկու պատկերները Նոուենին հիշեցնում էին այն կրոնական առաջնորդներին, որոնք ներկա էին, երբ Հիսուսն այս առակը պատմում էր: Նրանք փարիսեցիներն ու դպիրներն էին, որոնք «տրտնջում էին ու ասում. «Սա մեղավորներին ընդունում է և նրանց հետ ուտում» (Հմ.1-2):

Նոուենը նրանց բոլորի մեջ տեսավ իրեն. թե՛ կյանքը մսխած կրտսեր որդու, թե՛ նրան դատապարտող ավագ որդու և թե՛ Հոր սրտի մեջ, որ այնքան մեծ է, որ կբավարարի բոլորին և ամեն մեկին:

Մենք էլ կարող ենք Ռեմբրանդտի կտավի ինչ-որ մի տեղում մեզ տեսնել, որովհետև Հիսուսի պատմած պատմությունը մե՛ր մասին է նաև:

Աղոթք - Գա՛յր, օգնիր, որ տեսնեմ, թե որքա՛ն շատ ես սիրում մեզ: Ամեն:

Մտածի՛ր Գիսուսի պատմած այս առակի մասին և մինչև լույսը կփոխվի, փորձի՛ր տեսնել, թե որտեղ ես դու:

Կարդա՛ Ղուկաս
15.11-13, 17-30

Սա մեղավորներին ընդունում է և նրանց հետ ուտում: Ղուկ. 15.2

Մեկի հաստատումը

Հռչակավոր կոմպոզիտոր Ջուզեպպե Վերդիի կենսագրությունը հաստատում է, որ նրան հաջողութուն է մղել նաև իր դժվարին կյանքը: Ամերիկացի աստվածաբան Ուորեն Ուերաբին գրում է. «Երբ Ֆլորենցիայում ներկայացվում էր Վերդիի առաջին օպերան, երգահանը ստվերում նստած սևեռուն հետևում էր մի մարդու՝ երաժշտության երևելի վարպետ Ռոսինիի արձագանքին: Վերդիի համար կարևոր չէին սրահում հավաքվածների ծափերն ու քաջալերանքը: Նա վարպետի դեմքին էր ուզում տեսնել հաստատումի ժպիտը:

Կարդա՛
Ա Թես. 2. 1 - 4

Ոչ թե որպես մարդկանց հաճո եղողներ, այլ Աստծուն, որ մեր սրտերը քննում է: Ա Թես. 2.4

Ու՞մ հաստատումն ենք փնտրում մենք. մեր ծնողների^օ, գործատիրո՞ջ, բարեկամի^օ: Պողոսը մեկ պատասխան ուներ, երբ գրում էր. «Ինչպես մենք Աստծուց ընտրվեցինք, որ Ավետարանը մեզ վստահվի, այնպես էլ խոսում ենք ոչ թե որպես մարդկանց հաճո եղողներ, այլ Աստծուն, որ մեր սրտերը քննում է» (Ա.Թես. 2.4):

Ի՞նչ է նշանակում Աստծո հաստատումը: Առնվազն երկու բան. հրաժարվել ուրիշների ծափը փափագելուց և ցանկանալ, որ Իր Հոգին մեզ ավելի նմանեցի Հիսուսին, Նրան, որ սիրեց մեզ և Իր անձը տվեց մեզ համար: Հարելով Նրա կատարյալ նպատակներին, որ ունի մեր մեջ ու մեր միջոցով, կկարողանանք ակնկալել այն օրը, երբ կվայելենք Իր հաստատումի ժպիտը, որն ամենակարևորն է:

Աղոթք - Սիրո՛ւ Գայր, շատ դյուրին է շուրջս եղող մարդկանց ծափերն ու փառքը փափագել: Սակայն օգնի՛ր, որ կարողանամ հայացքս Քեզ դարձնել: Ամեն:

Մարդկանց գնահատանքը լավ է, սակայն ավելի կարևոր է Աստծո՛ գնահատանքը:

Աստվածային խոսակցություն

Բարձա խմբի կատարած ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ամերիկացիներից շատերը չեն ուզում խոսել Աստծո մասին: Նրանց միայն յոթ տոկոսն է ասել, որ կանոնավոր կերպով զրույցներ են ունենում հոգևոր թեմաներով և Հիսուսին հավատացողներն էլ շատ չեն տարբերվում նրանցից: Եկեղեցի հաճախողների միայն տասներեք տոկոսն է ասել, որ շաբաթական մեկ անգամ հոգևոր զրույց են ունենում:

Թերևս զարմանալի չէ, որ հոգևոր զրույցները պակասում են: Որովհետև Աստծո մասին խոսելը կարող է վտանգավոր թվալ: Ինչպես քաղաքական իրավիճակը, կամ որևէ անհամաձայնություն, այնպես էլ հոգևոր խոսակցությունը կարող է պատճառ դառնալ, որ դու մտածես քո կյանքում փոփոխություն անելու մասին: Ինչ էլ լինեն պատճառները, Աստծո մասին խոսակցելը դժվար է թվում:

Սակայն Բ. Օրինաց զբքում Աստծո ժողովրդին տրված պատվիրանների համաձայն՝ Աստծո մասին խոսելը կարող է առօրյա կյանքի սովորական մաս լինել:

Աստծո ժողովուրդը սովորելու էր Իր խոսքը և ցուցադրելու էր այն բոլոր տեսանելի տեղերում: Օրենքն ասում է. «Դուք զբանք սովորեցրե՛ք ձեր որդիներին և զբանք մասին խոսեցե՛ք տանը նստելիս ու ճանապարհ գնալիս, պառկելիս ու վեր կենալիս» (11.19):

Աղոթք - Միրելի Յայր, շատ բան կա, որ կարող եմ իմ կյանքում կիսել այլոց հետ: Օգնի՛ր ինձ ուրիշների հետ խոսելիս: Ամեն:

Աստծո մասին խոսելը օգտակար է: Եկե՛ք սա վարժություն դարձնենք:

Կարդա՛

Բ Օրենք 11. 13-21

Այս խոսքերը ի պահ դե՛ք ձեր մտքում ու ձեր հոգում: Դրանք որպես նշան կապեցե՛ք ձեր ձեռքերին, որ մշտապես մնան ձեր աչքերի առջև: Բ. Օր.11.18

Աստծո սեփականությունը

Պատկերացրեք արքայական մի սրահ: Գահի վրա նստած է թագավորը՝ շրջապատված լավագույն հյուրերով: Հիմա պատկերացրեք, որ թագավորի ոտքերի մոտ դրված է մի տուփ: Արքան ժամանակ առ ժամանակ մեկնում է ձեռքը և խառնում տուփի մեջ դրվածները: Իսկ ի՞նչ կա այնտեղ: Ոսկի, գոհարեղեն ու թագավորի ճաշակով արժեքավոր այլ քարեր: Դրանք տիրակալի գանձերն են, որոնք ուրախացնում են նրան: Կարո՞ղ եք ձեր մտքի աչքերով տեսնել այդ պատկերը:

Եբրայերեն այդ գանձերն անվանում են սեքյուլա, որը նշանակում է «հատուկ սեփականություն»: Այդ բառը կա Ելից 19.5-ում, Բ Օրինաց 7. 6-ում և Սաղմոս 134-ի 4-ում և վերաբերում է Իսրայելի ժողովրդին: Իսկ այդ նույն բառը Նոր կտակարանում բնորոշվում է Պետրոս առաքյալի գրչով: Նա նկարագրում է «Աստծո ժողովրդին, որ ողորմություն չէիք գտել, բայց հիմա արժանացել եք ողորմության» (Ա. Պետ. 2.10): Նա խոսում է Հիսուսին հավատացողների մասին և գրում է. «Դուք ընտիր սերունդ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ» (Հմ.9):

Դուք այս բա՛նը պատկերացրեք: Երկնքի մեծ ու հզոր թագավորը իր հատուկ սեփականության մեջ քե՛զ նկատի ունի: Նա քեզ ազատել է մեղքից ու մահից, քեզ համարում է Իր սեփականը: Թագավորի ձայնը բարբառում է. «Այս մեկի՛ն եմ սիրում, այս մեկը իմն է»:

Աղոթք - Երկնային մեծ արքա, ինքնությունս ամբողջովին Քո մեջ է: Ինձ Քո սեփականն ես համարում: Դա ոչ թե իմ շնորհքն է, այլ Քո: Ամեն:

Հիշի՛ր, որ դու արժեքավոր ես Աստծու համար և իր սեփականությունն ես:

Կարդա՛ր
Ա Պետրոս 2.4-11

Դուք ընտիր սերունդ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ:
Ա Պետ. 2.9

Մշտական կարիք

Հովիվ Վաթսոն Ջոնսը հիշում է, թե ինչպես էր հոր օգնու-
թյամբ հեծանիվ վարել սովորում: Երբ փոքրիկ Վաթսոնը տե-
սավ, որ պատշգամբում մի քանի աղջիկներ են նստած, հորն
ասաց. «Հայրի՛կ, թո՛ղ, ես կարող եմ»: Իրականում չէր կարող,
որովհետև նա դեռ պատրաստ չէր առանց հավասարակշռու-
թյունը պահելու մնալ հեծանիվի վրա: Այդ
գործում հայրն էր օգնում: Տղան իր
մտածածի չափ դեռ չէր մեծացել: Մեր
երկնավոր հայրը փափագում է, որ մենք
մեծանանք ու «Քրիստոսի կատարյալ
հասակի չափով կատարյալ մարդ լի-
նենք» (Եփ. 4:13): Սակայն հոգևոր հա-
սունությունը տարբեր է ֆիզիկական
հասունությունից: Ծնողներն իրենց երեխաներին մեծացնում են,
որպեսզի նրանք անկախ լինեն ու իրենց կարիքը չունենան: Իսկ
մեր երկնավոր Հայրը մեզ մեծացնում է, որ ամեն օր Իրենից կա-
խում ունենանք: Պետրոսն իր նամակն սկսում է խոստանալով,
որ «չնորհն ու խաղաղությունը շատանան ձեզ վրա Աստծո և
մեր Տեր Հիսուսի գիտությունը» և վերջացնում է հորդորելով.
«Աձեցե՛ք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհով և գի-
տությունը» (Բ. Պետ. 1. 2, 3.18): Հասուն քրիստոնյաները մշտա-
պես կունենան Հիսուսի կարիքը: Վաթսոնն ազդարարում է.
«Մեզանից ոմանք զբաղված են Հիսուսի ձեռքերին խփելով, որ
թողնի մեր կյանքի դեկը»: Կարծես թե չունենք Իր ուժեղ ձեռքե-
րի կարիքը, որ ընկնելու վտանգների ժամանակ մեզ բռնի, բարձ-
րացնի ու գրկի: Մենք չենք կարող դադարել Քրիստոսից կա-
խում ունենալուց: Մենք կաճենք միայն մեր արմատները ավելի
խորասուզելով Իր շնորհքի ու գիտություն մեջ:

Աղոթք - Տեր Հիսուս, շնորհակալ եմ, որ քայլում ես իմ կող-
քին, քանի դեռ ես աճում եմ Քեզ հետ ունեցած իմ հարաբե-
րություններում: Ամեն:

**Ուզու՞մ եմք աճել: Կառչենք Հիսուսին և Իրենով
աճենք ու զարգանանք:**

**Կարդա՛ր
Ա Պետրոս 3. 14-18**

Աձեցե՛ք մեր Տեր և
Փրկիչ Հիսուս Քրիս-
տոսի շնորհով և գի-
տությամբ:

Ա Պետ. 3.18

Ագահության գրգռում

«Տղան և ընկույզները» հին առակում մի տղա ձեռքը մտցնում է ընկույզով լի սափորի մեջ և վերցնում է մի ամբողջ բուռ ընկույզ: Բայց ձեռքն այնքան էր լցրել, որ չէր կարողանում դուրս բերել սափորից: Չկամենալով նույնիսկ մեկ ընկույզ բաց թողնել, տղան սկսում է լաց լինել: Վերջապես նրան համոզում են, որ ձեռքն ազատելու համար ինքը ստիպված է մի քանի ընկույզից հրաժարվել: Ազահույթյունը կյանքի շատ սխալ ղեկավար կարող է լինել:

Ժողովողի իմաստուն ուսուցիչը բարոյական այս չափանիշը նկարագրում է ձեռքերի մասին մի դասով: Նա համեմատում ու հակադրում է ծուլին ու ազահին՝ գրելով. «Հիմարը ձեռնածալ նստում է և ինքն իրեն է ուտում: Լավ է հանգիստ վաստակել մի բուռ, քան չարչարանքով ու տանջանքով՝ երկու բուռ: Ժող. 4-6):

Մինչ ծուլը ձգձգում է ու ոչինչ չի անում, հարստություն հետապնդողներն էլ չեն ասում, թե՛ «Ու՞մ համար եմ ջանք թափում և ինչու՞ եմ հոգիս զրկում բարիքից. սա ևս ունայնություն է, դաժան զբաղմունք» (Հմ.8):

Ուսուցչի համաձայն՝ երանելի վիճակը ազահույթյունը գրգռելու տանջանքից ազատվելն է, ունեցածով բավարարվելը: Ինչը որ մերն է, մերն էլ կմնա: Ինչպես որ Հիսուսն ասաց. «Մարդու համար ի՞նչ օգուտ է, որ այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի» (Մարկ. 8. 36):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Քո նախատեսության և իմ կյանքում հավատարիմ ներկայությանդ համար: Օգնի՛ր, որ ապրեմ բավարարվելով և Քեզ երախտապարտ հոգի ցույց տալով: Ամեն:

**Շատ բաների բաղձանքը մեզ ագահության է տանում:
Ավելի լավ է՝ բավարարվենք մեր ունեցածով:**

Կարդա՛ ժողովող 4.4-8

Լավ է հանգիստ վաստակել մի բուռ, քան չարչարանքով ու տանջանքով՝ երկու բուռ: Ժող. 4-6

Անկեղծ շնորհակալություն

Երբ որդիս՝ Քսավիերը, առաջին անգամ աշխատանքի էր անցնելու և հարցազրույցների էր պատրաստվում, ամուսինս՝ Ալլընը, մի տրցակ շնորհակալական քարտեր պատրաստեց և տվեց մեր որդուն, որ ուղարկի բոլոր հնարավոր գործատուներին: Ապա, գործածելով որպես տնօրեն աշխատած տարիների իր փորձառությունը, սկսեց հարցեր տալ Քսավիերին: Նա ժպտաց, երբ Ալլընը հիշեցրեց քարտերի մասին: «Գիտե՞մ,-ասաց,- անկեղծ շնորհակալական խոսքը ինձ պետք է առանձնացնի մյուս դիմողներից»:

Երբ իրականում տնօրենը զանգեց Քսավիերին՝ աշխատանքի հրավիրելու համար, շնորհակալություն հայտնեց ուղարկած շնորհակալական քարտի համար:

Սաղմոսերգուի սրտագին ջերմ աղոթքն ու երախտապարտ փառաբանությունը պահպանված է Սաղմոսների գրքում: 150 սաղմոսներից այս երկուսն են արտացոլում շնորհակալության պատգամը: «Իմ ամբողջ սրտով գոհություն կմատուցեմ քեզ, Տե՛ր, կպատմեմ բոլոր հրաշագործություններդ: Կուրախանամ ու կցնծամ քեզնով, սաղմոս կերգեմ քո անվանը, ո՛վ Բարձր-յալ» (Սաղմ. 9.1-2):

Աստծո կատարած բոլոր սքանչելի բաների համար մենք չենք կարողանա ավարտել շնորհակալություն հայտնելը: Սակայն կարող ենք սկսել անկեղծ շնորհակալությամբ, կարող ենք երախտագիտության պաշտամունքի կենսածեղ զարգացնել՝ փառավորելով Աստծուն, շնորհակալ լինելով իր բոլոր արածների և խոստումների համար:

Աղոթք - Առատաձեռն ու սիրող Աստված, խնդրում եմք՝ օգնի՛ր մեզ, որ շնորհակալ լինենք Քո անթիվ սքանչելի գործերի համար: Ամեն:

Աստված շատ բան է արել ու կշարունակի անել: Երախտապարտ լինենք իրեն ու փառավորենք իր սուրբ անունը:

Կարդա՛ր
Սաղմոս 9. 1-2, 7-10

Իմ ամբողջ սրտով գոհություն կմատուցեմ քեզ, Տե՛ր, կպատմեմ բոլոր հրաշագործություններդ: Սաղմ. 9.1

Վտանգավոր նյութեր

Շտապօգնություն մեքենայի ականջ ծակող ձայնը մոտեցավ, երբ այն սուրալով անցավ իմ մեքենայի կողքով: Լուսարձակները լույսի ներքո ես հասցրի մեքենայի վրա կարգալ «վտանգավոր նյութեր» բառերը: Հետո իմացա, որ այդ մեքենան սլանում էր դեպի գիտական մի լաբորատորիա, որտեղ ծծմբաթթվի արտահոսք էր սկսվել: Հարկավոր էր անհապաղ կասեցնել այդ վտանգավոր նյութի տարածումը, որովհետև այն շատ վնասակար կարող էր լինել:

Այս դեպքի առիթով սկսեցի մտածել, թե ինչ կպատահեր, եթե նման ահազանգ հնչեր ամեն անգամ, երբ ես կարտասանեի որևէ քննադատական կամ կոպիտ բառ: Դժբախտաբար, այդ դեպքում մեր տունը միշտ աղմկոտ կլիներ:

Ես այի մարզարեն նման գիտակցումով է խոսել իր մեղքի մասին: Տեսնելով Աստծո փառքը՝ նա նկատեց իր անարժան լինելը: Անդրադարձավ, որ ինքը «պիղծ շուրթեր ունեցող մարդ է և պղծաշուրթ ժողովրդի մեջ է ապրում» (Հմ. 6.5): Այս խոսքերից հետո պատահածը ինձ հույս է ներշնչում: «Սերովբեններից մեկը՝ ձեռքին կայծ բռնած, որ ունելիով վերցրել էր զոհասեղանից, բերեց, մոտեցրեց իմ բերանին և ասաց. «Ահա մոտեցրի քո շուրթերին, դա կհանի քո անօրենությունները, և մեղքերը կարբի քեզնից» (Հմ.6-7):

Ամեն անգամ մեր ասած կամ գրած խոսքերը ուշադրությունը ընտրենք՝ մեր ամեն ասածներով Աստծոն պատվելու համար:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր, որ կարողանամ տեսնել, թե ինչպե՞ս են իմ խոսքերն ազդում ուրիշների վրա: Ցույց տուր ինձ, թե ինչպես կարող եմ քաջալերել նրանց: Ամեն:

Մեր խոսքերը զորավոր ազդեցություն ունեն ուրիշների վրա:
Ուստի դրանք ասելուց առաջ հարկավոր է մտածել:

Կարդա՛
Եսայի 6. 1-10

Ահա մոտեցրի քո շուրթերին, դա կհանի քո անօրենությունները, և մեղքերը կարբի քեզնից: Ես 6.7

Ուշադիր մշակված

Նյու Յորքում ապրող Ալան Կլաստոֆ անունով մի պանրա-
գործ Յուլիոսը տեղադրել էր հնացող պանիր պատրաս-
տելու գործընթացը: Նախքան շուկա ուղարկվելը այդ պանրի
յուրաքանչյուր կտորը 6-12 ամիս մնում է ներքնահարկ-քա-
րայրում՝ տուփի մեջ: Այդ խոնավ միջավայրում պանիրը ուշա-
դիր խնամվում է ու մշակվում: «Մենք
անում ենք առավելագույնը՝ ապահովել-
լու պանրի ստեղծման համար անհրա-
ժեշտ ճիշտ միջավայր, որպեսզի այն
հասնի իր լավագույն վիճակին», - բա-
ցատրում է Կլաստոֆը:

Եփեսացիներին ուղղված նամակում
Պողոս առաքյալը նկարագրում է հա-
սունացման այդ ընթացքի մեջ եղող զա-
նազան մարդկանց՝ առաքյալների, մար-
գարենների, ավետարանիչների, հովիվ-
ների: Նման պարզեցումով մարդիկ օգ-
նում են, որ յուրաքանչյուր հավատաց-
յալի աճը խթանվի և քաջալերվեն
ներանց այն ծառայությունները, որոնք

նշված են 4.12-ում: Նպատակն այն է, որ մենք «հասնենք հա-
վատի միությունը և Աստծո Որդուն ճանաչելուն ու Քրիստոսի
կատարյալ հասակի չափով կատարյալ մարդ լինենք» (Հմ.13):

Հոգևոր աճը գալիս է Սուրբ Հոգու գործընթացից, երբ հանձն-
վում ենք Նրա տված աճման ընթացքին: Երբ հետևում ենք
մեր կյանքում իր դրած մարդկանց, մենք ավելի ազդեցիկ ու
օգտակար ենք դառնում ծառայելու ուղարկվելիս:

Աղոթք - Սիրո՛ Աստված, շնորհակալ եմ, որ քաղցրությամբ
իմն օգնում ես, որ աճեմ ու մեծանամ: Ամեն:

**Որպես քրիստոնյաներ՝ մենք էլ կարիք ունենք աճելու
և հասունանալու Տեր Դիսուսի ձեռքով:**

Կարդա՛ Եփես. 4. 11-14

Նա մի քանիսին
տվեց առաքյալներ
լինելու, մի քանի-
սին՝ մարգարեներ,
մի քանիսին՝ ավե-
տարանիչներ, մի
քանիսին՝ հո-
վիվներ ու վար-
դապետներ՝
Սրբերի կատա-
րելության համար:
Եփես. 4.11-12

Յուլյա կա՞

Էդուարդ Փեյսընը շատ դժվար կյանք ունեցավ: Կրտսեր եղբոր մահը ցնցեց նրա ողջ ներաշխարհը: Նրա մոտ սկսեցին ի հայտ գալ դեպրեսիայի նշաններ, օրեր շարունակ նրան տանջում էր միգրենի գլխացավը: Զիուց ընկնելու պատճառով անդամալույծ դարձավ և հյուժախտը նրան մահվան դուռն էր հասցրել: Սակայն զարմանալիորեն նա չէր վհատվում ու չէր հուսահատվում: Մահից առաջ նրա բարեկամներն ասում էին, թե էդուարդի ուրախությունը բուռն էր: Ինչպե՞ս էր հնարավոր այդ վիճակում բուռն ուրախություն ունենալ: Հոռմի հավատացյալներին գրված իր նամակում Պողոս առաքյալը Աստծո հանդեպ իր ունեցած կատարյալ վստահությունը հայտնեց՝ անկախ իր դիմագրաված հանգամանքներից: Նա համարձակորեն հարցրեց. «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ» (Հռոմ.8. 31): Եթե Աստված մեզ փրկելու համար տվեց իր Որդուն՝ Հիսուսին, Նա մեզ կտա նաև անհրաժեշտ ամեն բան՝ այս կյանքն ավարտելու համար: Պողոսը թվարկում է յոթ անտանելի վիճակներ, որ ինքը դիմագրավել է. տառապանք, նեղություն, հալածանք, սով, մերկություն, վտանգ և սուրբ (Հմ.35): Նա չէր ենթադրում, որ Քրիստոսի սերը պիտի կասեցնի չար բաները, բայց ասում էր, որ «այս բոլոր բաներում առավել ևս հաղթում ենք նրա միջոցով, ով մեզ սիրեց» (Հմ.37): Այս աշխարհի անորոշությունների մեջ կարելի է ամբողջովին վստահել Աստծուն, իմանալով, որ բացարձակապես ոչ մեկը «չի կարող մեզ բաժանել Աստծո սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեջ է» (Հմ.39):

Կարդա՛

Յոռմ. 8.31-39

Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ: Գռ. 8.31

Աղոթք - Գավատարի՛մ Յայր, շնորհակալ եմ իմ հանդեպ ունեցածդ սիրո համար: Շնորհակալ եմ, որ Քո Որդուն զոհաբերեցիր իմ հավիտենական կյանքի համար: Ամեն:

Յուսահատ վիճակներում կհայտնվենք, բայց պետք է Աստծո հավատարմությանն ու խոստումներին վստահել:

Սիրո մյուս կողմը

Քրիստոսի ժամանակ հռոմեական պանդոկներն այնքան վատ համբավ ունեին, որ բաբբիները նույնիսկ իրենց արձառներին չէին թողնում այնտեղ: Այդպիսի վատ պայմանների պատճառով ճամփորդող քրիստոնյաները այլ հավատացյալների հյուրասիրությունից էին օգտվում: Այդ օրերի ճամփորդների մեջ կային նաև սուտ վարդապետներ, որոնք չէին ընդունում, որ Հիսուսը Մեսիան էր: Այդ պատճառով Հովհաննես առաքյալի Բ նամակն իր ընթերցողներին ասում է, որ կա՛ հյուրասիրությունը մերժելու ժամանակ: Իր նախորդ նամակում Հովհաննեսն ասել էր, որ սուտ վարդապետները «նեո» են, «որ ուրանում են Հորը և Որդուն» (Ա. Հովհ. 2:22): Երկրորդ նամակում Հովհաննեսն այս միտքը մշակում է՝ իր ընթերցողներին ասելով. «Ով որ մնում է Քրիստոսի վարդապետության մեջ, նա Որդուն էլ ունի, Հորն էլ» (Բ. Հովհ. 9): Ապա զգուշացնում է. «Եթե մեկը ձեզ մոտ գա և այս վարդապետությունը չբերի, նրան ձեր տուն մի՛ ընդունեք ու նրան բարև մի՛ տվեք» (Հմ. 10): Հյուրասիրել նրան, ով սուտ ավետարան է քարոզում, իրականում կարող է պատճառ դառնալ, որ մարդիկ Աստծուց հեռանան: Հովհաննեսի երկրորդ նամակը մեզ ցույց է տալիս սիրո «մյուս կողմը»: Մենք ծառայում ենք մի Աստծու, որը մեզ գրկաբաց է ընդունում: Սակայն հարազատ սերը չպիտի գորացնի նրանց, ովքեր խաբեությամբ վնասում են իրենց և ուրիշներին: Աստված գրկում է նրանց, ովքեր իրեն են մոտենում զղջումով: Նա բնավ չի ընդունում սուտը:

Կարդա՛ Բ Յովի. 1. 1-11

Ձեզ հետ լինեն շնորհ, ողորմություն, խաղաղություն՝ Յայր Աստծուց և մեր Տեր Յիսուս Քրիստոսից՝ Յոր Որդուց, ճշմարտությամբ ու սիրով: Բ Յովի. 1.3

Աղոթք - Յայր, մեզ սիրում ես Քո ճշմարտությամբ: Օգնի՛ր, որ կարողանանք այդ սերը ուրիշներին հասցնել անսասան շնորհքով, որ միայն Քո Յոգուց է գալիս: Ամեն:

Աստծո սերը ուրիշներին ցույց տալու պարտականությունը մերն է:

Կորցրած ծրարը

Ընտանիքիս հետ տուն էի վերադառնում: Մեքենան վառելիքով լիցքավորելիս գետնին մի մեծ ու կեղտոտ ծրար նկատեցի: Վերցրի, մեջը մի հարյուր դոլարանոց էր: Մեկը կորցրել էր և հավանաբար այս պահին խելահեղորեն փնտրում էր: Մեր հեռախոսահամարը թողեցի այդտեղ աշխատողի մոտ, որ, հանձնի ծրարի մասին հարցնողներին; Բայց ոչ մեկը չգանգեց:

Այդ փողը մեկը կորցրել էր: Երկրային գանձերը միշտ էլ այդպես են: Կարելի է կորցնել, վատնել: Փողը կարելի է կորցնել ոչ շահավետ շրջանառություն դնելու, դրամի արժեզրկման հետևանքով, որի դեմ որևէ միջոց չկա: Բայց Տեր Հիսուսի մեջ մեր ունեցած երկնային գանձը, որը Աստծո հետ նորոգված հարաբերությունն է և հավիտենական կյանքի խոստումը, չի կորչում: Այն չենք կարող որևէ տեղ կորցնել:

Դրա համար Քրիստոսը մեզ ասաց. «Ձեզ համար երկնք՝ ո՛ւմ գանձեր դիզեցե՛ք» (Մատթ. 6. 20): Այդ բանը կանենք, երբ «բարի գործերով հարստանանք» (Ա.Տիմ.6.18) կամ «հավատով հարստանանք» (Հակ.2.5) և սիրով օգնենք ուրիշներին ու Հիսուսի մասին պատմենք նրանց: Մինչ Աստված մեզ առաջնորդում է ու գորացնում, թող որ հավիտենական գանձեր դիզենք՝ կանխատեսելով մեր հավիտենականությունը Իր հետ:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմք այն ամենի համար, որ տվել ես մեզ այս աշխարհում. դրամ, տուն և շատ այլ բաներ: Օգնի՛ր, որ չկառչենք միայն դրանց, այլ խնդրենք հավիտենական գանձեր: Ամեն:

Աստված մեզ հավիտենական գանձեր է տվել: Ինչպե՞ս կարող ենք դրանք ավելի լավ ձևով գործածել:

Կարդա՛ Մատթեոս 6.19-21

Բայց ձեզ համար երկնքում գանձեր դիզեցեք, ուր ո՛չ ցեցը, ո՛չ ժանգը չեն ապականում, և ուր գողերը պատը չեն ծակում ու գողանում: Մատթ. 6.20

Դատապարտումից ազատված

Ամուսիները մեքենայով անցնում էին Հյուսիսային Կարոլինայով, երբ հանկարծ անիվներից մեկը պայթեց ու կոտրված մետաղի կտորները խփվեցին մայթին: Պայթյունից առաջացած կայծերը պատճառ դարձան 2018-ի մեծ ու կատաղի հրդեհի, որի հետևանքով հսկայական տարածքներ այրվեցին, մոտ 1000 տուն քանդվեց, մարդկային զոհեր եղան:

Երբ աղետից փրկվողները լսեցին, որ այս զոլյզը շատ մեծ ցավ է ապրել պատահածի համար, Ֆեյսբուքում մի էջ պատրաստեցին՝ ի կարեկցություն այդ մարդկանց: Մի կին գրում էր. «Որպես այդ հրդեհից իր տունը կորցրած մեկը՝ ուզում եմ իմանաք, որ ո՛չ իմ ընտանիքը, ո՛չ էլ մյուսները ձեզ չեն մեղադրում: Դեպքեր միշտ էլ կարող են պատահել, ու ես իսկապես հույս ունեմ, որ մեր այս զբաժները ձեր բեռը կթեթևացնեն: Բոլորս միասին պետք է անցնենք այս ցավի միջով»:

**Կարդա՛ր
Ա Յովհ. 3. 19-24**

Քանզի եթե մեր սիրտը մեղադրի մեզ, ապա Աստված մեր սրտից ավելի մեծ է և ամեն բան գիտե: Ա Յովհ. 3.20

Դատապարտումը, որ մեր վատ արարքների համար վախն է, կարող է ծվատել մարդու հոգին: Բարեբախտաբար Աստվածաշունչը հայտնում է. «Եթե մեր սիրտը մեղադրի մեզ, ապա Աստված մեր սրտից ավելի մեծ է և ամեն բան գիտե» (Ա. Հովհ. 3.20): Ինչ էլ լինի մեր թաքցրած ամոթալի բանը, Աստված այդ բոլորից շատ ավելի մեծ է: Հիսուսը մեզ կանչում է փրկություն բուժիչ գործողության, կամ ուղղակի հանում է մեզ տանջող ամոթի դիմակը:

Աղոթք - Հայր, շատ բաների համար եմ զղջում, ցանկանում ջնջել այդ ցավալի հիշողությունները, բայց հետո դարձյալ ուզում եմ անել: Շնորհակալ եմ, որ ինձ սովորելու և առաջ գնալու շնորհք ես պարգևում: Ամեն:

Միշտ էլ կունենանք ամոթի ու դատապարտումի զգացում:
Վստահ լինենք, որ Հիսուսը մեզ այդ բոլորից կազատի:

Նպատակադրված կարեկցություն

Մի երիտասարդ կին օղանավ բարձրանալիս փորձում էր հանգստացնել իր երեք տարեկան դստրիկին, որը ոտքերը գետնին խփելով լալիս էր: Հետո չորս ամսական մանչուկն սկսեց ճչալ, որովհետև քաղցած էր:

Կողքի ուղևորն առաջարկեց գրկել մանկանը, մինչ կինը կնստեցներ աղջնակին ու կկապեր ամրագոտին: Ապա, հիշելով իր երիտասարդ տարիները, սկսեց փոքրիկի հետ ներկել գրքի մեջ, մինչև Ջեսիկան կերակրեց երեխային ու վերջացնելով՝ ասաց. «Ես հիացած եմ Աստծո այս արարքով: Մենք կարող էինք նստած լինել մեկ այլ տեղ, սակայն հայտնվել ենք իմ կյանքում հանդիպած ազնվագույն մարդկանցից մեկի կողքին»:

Բ Թագավորաց 9-ում կարդում ենք կանխամտածված կարեկցության մեկ այլ օրինակի մասին: Սավուղ Թագավորի ու նրա որդու՝ Հովնաթանի սպանությունից հետո Դավիթը, փոխանակ իր գահի համար հնարավոր որևէ սպառնալիք վերացներ, հարցրեց. «Սավուղի տնից մնացած մարդ կա՞, որ նրան Աստծո ողորմածությունը ցույց տամ» (Հմ.3): Դավթի մոտ բերեցին Հովնաթանի որդի Մեմփիբոսթեին, և Դավիթը նրան վերադարձրեց իր հոր ու պապի ամբողջ ունեցվածքը, իսկ իրեն ջերմորեն հրավիրեց, որ այդուհետ «իր սեղանից հաց ուտի, որպես թե արքայի որդիներից մեկը լինեիր» (Հմ.11):

Որպես Աստծո մեծ կարեկցության շահառուները՝ մենք էլ առիթներ գտնենք ցուցաբերելու նման կարեկցություն:

Աղոթք - Երկնավոր Յայր, շնորհակալ եմ իմ հանդեպ ցուցաբերած կարեկցությանդ համար: Օգնիր, որ կարողանամ այն ուրիշներին փոխանցել: Ամեն:

Աստված միշտ մեզ կարեկից է, եկե՛ք մենք էլ նման կարեկցություն ցուցաբերենք ուրիշներին:

Կարդա՛
Բ Թագ. 9. 3-11

Սավուղի տնից մնացած մարդ կա՞, որ նրան Աստծո ողորմածությունը ցույց տամ:
Բ Թագ. 9.3

Պարզևներ վերևից

Հին պատմության համաձայն՝ Նիկոլաս անունով մի մարդ (ծնված 270 թ.) լսել էր, որ մի աղքատ մարդ չի կարողանում հոգալ իր երեք աղջիկների սննդի ու ապագայի հարցերը: Այդ մարդուն օգնելու ազնիվ մղումով, միաժամանակ իր օգնությունը գաղտնի պահելով՝ Նիկոլասը նրանց բաց պատահանից մի տոպրակ ոսկի է նետում, որն ընկնում է գուլպայի մեջ: Այդ մարդը հայտնի է որպես Սուրբ Նիկոլաս, որն էլ հետագայում դարձավ Կաղանդ պապի նախատիպը:

Վերևից եկող նվերի այս պատմությունը լսելով՝ ես մտածեցի Հայր Աստծո մասին, որը սիրով ու ողորմածությամբ, հրաշալի ծնունդով աշխարհ ուղարկեց իր մեծագույն նվերը՝ իր Որդուն: Մատթեոսի Ավետարանի համաձայն՝ Հիսուսը իրականացրեց Հին Կտակարանի այն մարգարեությունը, թե «Ահա կույսը կհզդի անա և որդի կծնի, և նրա անունը էմմանուել կընեն, որ թարգմանվում է «Աստված մեզ հետ» (1.23):

Որքան էլ Նիկոլասի նվերը գեղեցիկ լինի, Հիսուսի պարզևը շատ ավելի հիասքանչ է: Նա թողեց երկինքը, որ մարդեղանա, մեռավ և հարություն առավ և եղավ մեզ հետ ապրող Աստվածը: Նա մեզ խաղաղություն է բերում, երբ ցավի մեջ ենք ու տխուր: Քաջալերում է մեզ, երբ անհանգիստ ենք, և ճշմարտությունն է մեզ հայտնում լքված ու մերժված պահերին:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ թողեցիր Յորը ու եկար մեզ մոտ՝ ծնվելու ավելի համեստ պայմաններում: Քո ներկայությունն իմ կյանքում բնավ սովորական բան չեմ համարում: Ամեն:

**Հիսուսը մեզ տրված մեծագույն ընծան է:
Երախտապարտ սիրով ընդունենք Նրան:**

Կարդա՛
Մատթեոս 1. 18-25

Ահա կույսը կհզդի անա և որդի կծնի, և նրա անունը էմմանուել կընեն, որ թարգմանվում է «Աստված մեզ հետ»: Մատթ. 1.23

Մի՛ մոռանա տվողին

ՄԻ՛րը Ծննդյան տոներին առաջ էր, և գավակները դժվարանում էին շնորհակալություն հայտնել: Խտեր, թե որքան հեշտ էր նման մտածմունքների մեջ ընկնելը, բայց նաև գիտեր, որ իր գավակների սրտի համար ավելի լավ բան էր ցանկանում: Եվ նա տան բոլոր շատ գործածվող տեղերում՝ լույսի անջատիչների, պահարանի ու սառնարանի դռների, լվացքի մեքենայի ու ծորակների վրա կարմիր աղեղներ գծեց: Յուրաքանչյուր աղեղի հետ էլ ձեռագիր գրություն կար, որն ասում էր. «Դյուրին է Աստծո տված որոշ պարգևներ անտեսելը, հետևաբար աղեղներ եմ գծել դրանց վրա: Նա բարի է մեր ընտանիքի հանդեպ: Չմոռանանք, թե որտեղից են գալիս այդ պարգևները»:

Կարդա՛
Բ Օրենք 6.4-13

Զգու՛յշ եղիր, որ չմոռանաս ստրկության տնից քեզ դուրս բերած քո Տեր աստծուն: Բ. Օր. 6.13

Բ Օրինաց 6-ում տեսնում ենք, որ Իսրայելի ժողովրդի ապագան կապված էր որոշ տեղեր գրավելու հետ: Նրանք պետք է մտնեին նաև այն քաղաքները, որ իրենք չէին կառուցել (Հմ.10), գրավեին ամեն տեսակի բարիքներով լցված տներ, որ իրենք չէին ստեղծել և օգտվեին ուրիշների ջրհորերից, այգիներից ու ձիթաստաններից (Հմ.11): Այդ բոլոր օրհնությունների աղբյուրը մեկն է՝ «Բո Տեր Աստվածը» (Հմ.10): Մինչ Աստված սիրով հայթայթում է այս և նման բոլոր բարիքները, Մովսեսը պատվիրում է. «Զգու՛յշ եղիր, որ չմոռանաս ստրկության տնից քեզ դուրս բերած քո Տեր աստծուն» (Հմ.13):

Կյանքի որոշ պարագաներում դյուրին է մոռանալը, բայց ուշադիր լինենք Աստծո բարությունների հանդեպ, որ աղբյուրն է բոլոր օրհնությունների:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, շնորհակալ եմք, որ Դու ես աղբյուրը մեր կյանքի բոլոր օրհնությունների: Մեր հպարտության մեջ հաճախ մոռանում ենք Քեզ: Ների՛ր մեզ: Ամեն:

Մտաբերի՛ր հինգ բան, որ Աստված է քեզ պարգևել և փառք տուր Աստծուն դրանց համար:

Շնորհակալական կեցվածք

Որտեղ ես ապրում եմ, շատ սաստիկ ձմեռ է լինում, միշտ զրո-
յից ցածր ջերմաստիճանով ու առատ ձյունով: Սարսափելի
ցուրտ մի օր, երբ մուտքի մոտի ձյունն էի մաքրում, այդտեղով
անցնող փոստատարը կանգնեց՝ որպիսությունս իմանալու:
Ասացի, որ ձմեռը չեմ սիրում ու արդեն հոգնել եմ ձյուն մաք-
րելուց: Նաև նկատեցի, որ հավանաբար
իր գործն էլ է դժվար այս ցուրտ եղանա-
կին: Նա պատասխանեց. «Այո՛, դժվար է,
բայց ես աշխատանք ունեմ, և դրա հա-
մար շնորհակալ եմ»: Պետք է խոստովա-
նեմ, որ ես մեղավոր զգացի այդ մարդու
շնորհակալական կեցվածքից: Որքա՛ն հեշտ
է կյանքի դժվարությունների մեջ մոռանալ մեր բոլոր ունեցած-
ները՝ շնորհակալ հոգի ունենալու համար:

Պողոսը Քրիստոսի կողոսացի հետևորդներին ասաց. «Եվ
Աստծու խաղաղությունը իշխի ձեր սրտերում, որի մեջ և
կանչվեցիք մեկ մարմնով, ու գոհացող եղեք» (Կող. 3.15): Իսկ
թեսաղոնիկեցիներին ուղղված նամակում նա գրում է. «Ամեն
բանով գոհացե՛ք, որովհետև սա է հանդեպ Աստծո կամքը
Քրիստոս Հիսուսով» (Թես.5.18):

Նույնիսկ մեր ցավի ու նեղության պահին կարող ենք Աստ-
ծո ներկայության գիտակցումն ունենալ և արտոնել, որ Նա
մեր սրտերին տիրի: Ու այդ խաղաղության մեջ մենք կհիշենք
այն բոլոր բաները, որ Քրիստոսով ենք ստացել: Այդ դեպքում
մենք իրապես երախտապարտ կլինենք:

Աղոթք - Հայր, որքան հաճախ եմ գանգատվում տարբեր
անհարմարություններից: Օգնի՛ր, որ ուշադրությունիցս չվ-
րիպեն Քո սված բոլոր բարիքները: Ինձ երախտապարտ
սիրտ տուր: Ամեն:

**Դադարի՛ր գանգատվել ու սովորի՛ր շնորհակալություն
հայտնել Աստծուն:**

Կարդա՛
Կողոս. 3. 12-25

Եվ Աստծու խաղաղու-
թյունը իշխի ձեր սր-
տերում: Կող. 3. 15

Մեզ առաջնորդող լույսը

Թանգարանում երկար կանգնեցի ցուցադրված հին լապտերների մոտ: Ցուցատախտակը ծանուցում էր, որ դրանք Իսրայելից են բերված: Փորագիր պատկերներով զարդարված այդ ձվաձև կավե լապտերները երկու բացվածք ունեին. մեկը նավթի, մյուսը պատրույզի համար: Իսրայելցիները այդ լապտերները դնում էին պատերի խորշերում, բայց դրանք այնքան փոքր էին, որ տեղավորվում էին ձեռքի ափի մեջ:

Թերևս այս փոքրիկ լույսի նման մի բան է ներշնչել Դավիթ թագավորին՝ գրելու փառաբանություն մի երգ, որում ասում է. «Դու՛ ես իմ ճրագը, Տեր, և դու՛ ես լուսավորելու իմ խավարը» (Բ. Թագ. 22. 29): Դավիթն այսպես երգեց պատերազմում Աստծո տված հաղթանակից հետո: Երբ իր ազգակից և օտար մրցակիցները հետապնդում էին և ուզում էին սպանել նրան: Աստծո հետ հարաբերվելու համար Դավիթը չթաքնվեց ստվերում: Ընդհակառակը, առաջ դնաց և Աստծո ներկայությունից ստացած վստահությունը դիմադրավեց թշնամուն: Աստծո օգնությունը նա կարողացավ հստակ տեսնել ամեն բան և կարողացավ ճիշտ որոշումներ ընդունել իր, իր ազգի ու իր գործերի համար:

Երգի մեջ Դավիթի հիշած խավարը վստահաբար իր մեջ ուներ տկարություն, պարտություն ու մահ: Մեզանից շատերն են ապրում նման մտահոգություններով, որովհետև գիտենք, որ Աստված մեզ հետ է: Սուրբ Հոգու երկնային կրակը ապրում է մեր ճամփան լուսավորելու համար, մինչև որ դեմ առ դեմ հանդիպենք Հիսուսին:

Աղոթք - Հայր, խնդրում եմ, Քո ներկայության վստահությունը տու՛ր, երբ վախի մեջ եմ: Օգնի՛ր հիշել, որ Դու Քո մահով ու Հարությանը հաղթեցի՛ր հոգևոր խավարին: Ամեն:

**Վախե՞ր կան քո կյանքում:
Վստահի՛ր Աստծուն ու մի՛ վախենա:**

Կարդա՛
Բ Թագ. 22. 26-30

Դու՛ ես իմ ճրագը,
Տեր, և դու՛ ես լուսավորելու իմ խավարը:
Բ Թագ. 22.29

Վերջում՝ շնորհք

Արվեստագետ Դագ Մըրգիի գլուխգործոց պղնձաձուլլ քանդակը՝ հայտնի «Անողորմ վստահություն» անունով, պատկերում է հուսահատ մի մարդու, որը կախված է ընկուզենու փայտից պատրաստված խաչի վրա: Որպես բացատրություն՝ հեղինակը գրում է. «Մեր հարատև կյանքի կեցվածքը Քրիստոսից ու Ավետարանից ամբողջությամբ կախյալ լինելու և անվերապահորեն վստահելու մեջ է»:

Այդպիսի վստահության ենք հանդիպում Մարկոսի Ավետարանում հիշատակված անձանոթ կնոջ արարքի ու խոսքերի մեջ (Մարկ.5.25-34): Իր կյանքի տասներկու տարին «արյունահոսության մեջ էր: Շատ բժիշկների ձեռքից շատ էր չարչարվել, իր ամբողջ ունեցածը վատնել ու ոչ մի օգուտ չէր ստացել, այլ էլ ավելի դեպի վատն էր գնացել» (Հմ.25.26): Լսելով Հիսուսի մասին՝ գնաց նրա մոտ, դիպավ նրա հագուստին և «այդ տանջանքներից բժշկվեց» (Հմ. 27-29):

Դու էլ ունեցե՞լ ես նման զգացումներ, երբ քո վիճակը բարելավելու բոլոր հնարավոր միջոցները սպառվել են: Կորսված, վհատված ու ընկճված մարդիկ չպետք է հուսահատվեն: Տեր Հիսուսը պատասխանում է մեր հավատին, որն արտահայտված է Չարլզ Ուեսլիի երգի բառերում. «Հա՛յր, ձեռքս մեկնում եմ Քեզ, ուրիշ բարիք չունեմ»: Եթե այդպիսի հավատք չունես, խնդրի՛ր Աստծո օգնությունը, որ վստահես իրեն:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ ինձ ազատող զորությանդ համար: Օգնի՛ր՝ վստահեմ Քեզ, որ բոլոր կարիքներս Դու հոգաս: Ամեն:

Կարիքներ ունե՞ս, վստահի՛ր Աստծուն, որովհետև նրա շնորհքն անսպառ է:

Կարդա՛ր Մարկոս 5. 25-34

Դու՛ստր, քո հավատը քեզ բժշկեց. գնա՛ խաղաղությամբ ու քո տանջանքից ազա՛տ եղի՛ր: Մարկ. 5.34

Ջնջված պարտքեր

2009-ին Լոս Անջելեսի շրջանում դադարեցրին գումարներ զբանձել կալանավորված զավակների ծախսերի համար: Բայց անցյալից մնացած պարտքերը մարդիկ պարտավոր էին վճարել: Իսկ 2018-ին շրջանում առկախ մնացած բոլոր նյութական պարտավորությունները ջնջվեցին: Նյութական վատ պայմաններում ապրող շատ ընտանիքների համար այդ պարտքերի ներումը մեծ օգնություն եղավ: Տուգանքներ չունենալով՝ նրանք գոնե ուտելիք էին գնում: Ժողովրդի դժվարությունները նկատի ունենալով՝ Աստված կոչ արեց. «Ամեն յոթ տարին մեկ թողություն կանես» (Բ.Օր. 15.2): Նա չկամեցավ, որ մարդիկ հավիտյան պարտքերով ծանրաբեռնված լինեն:

Կարդա՛
Բ Օրենք 15. 1-8
 Ամեն յոթ տարին մեկ թողություն կանես:
Բ Օրենք 15.2

Որովհետև իսրայելցիներին արգելված էր տոկոս պահանջել իրենց պարտապան մեկ այլ իսրայելցուց (Ելք 22.25), հարևանին պարտքով փող տալը շահ չպետք է հետապնդեր, այլ օգնություն էր լինելու նրանց, ովքեր վատ վիճակում էին հայտնվել ասենք վատ բերքի պատճառով:

Եվ յոթ տարին մեկ բոլոր պարտավորությունները պետք է ներվեին: Արդյունքում ժողովրդի մեջ կարիքավորներ չէին լինելու (Բ.Օրին. 15.4):

Այսօր Հիսուսին հավատացողները այս կանոններին կապված չեն: Բայց Աստված կարող է տարբեր առիթներով մեզ հիշեցնել, որ ներենք որոշ պարտքեր: Ուրիշների հանդեպ նման ողորմություն ու առատաձեռնություն ցուցաբերելով՝ մենք կբարձրացնենք Աստծո նկարագիրը և հույս կներշնչենք մարդկանց:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ հոգում ես մեր նյութական պարտավորությունների մասին: Ամեն:

**Աստված ներում է մեր պարտքերը:
 Իսկ մե՞նք:**

Հաղթահարել վախը

Մի մարդ երեսուներկու տարի վախի մեջ էր ապրում: Սարսափելուով, որ իր գործած ոճիւրի համար կպատժվի, նա թաքնվել էր քրոջ ագարակում: Որևէ տեղ չէր գնում, մարդկանց չէր հանդիպում, նույնիսկ իր մոր հուղարկավորությանը չմասնակցեց: Վախու՛նչորս տարեկանում իմացավ, որ իր դեմ որևէ մեղադրանք չի եղել ու ինքն այլևս ազատ էր իր բնականոն կյանքը շարունակելու: Այո՛, պատժի սպառնալիքն իրական էր, սակայն նա թույլ տվեց, որ վախը իշխեր իրեն: Նույն կերպ էլ վախը իշխում էր իսրայելցիներին, երբ փղշտացիները նրանց մարտահրավեր նետեցին Էլայի հովտում: Սպառնալիքը լուրջ էր: Իրենց թշնամի Գողիաթի «հասակի բարձրությունը վեց կանգուն և մեկ թիզ էր, գլխին սաղավարտ կար, հագել էր պղնձից ու երկաթից լանջապանակ, մի զրահ, որի քաշը հինգ հազար սիկլ էր՝ շուրջ 60 կգ» (Ա.Թագ. 17.4-5): Քառասուն օր ամեն առավոտ և երեկո Գողիաթը կռվի ասպարեզ էր հրավիրում իսրայելցիներին: Բայց ոչ մեկը չէր համարձակվում կռվի մեջ մտնել, մինչև որ մարտադաշտ եկավ Դավիթը: Նա լսեց ու տեսավ Իսրայելի զորքի տառապանքը և կամովին ուզեց կռվել ողիաթի հետ: Իսրայելում մտածում էին, որ ուժերը անհավասար են, Գողիաթը հմուտ պատերազմող է, իսկ Դավիթը՝ պատանի հովիվ, սակայն Դավիթը ընդդիմացավ, ասելով. «Եթե Տեր Աստված ինձ փրկել է առյուծի ու արջի ճանկերից ինձ կփրկի նաև այդ անթլպատ այլազգու ձեռքից» (Հմ.37): Նա հասկացավ, որ Գողիաթը Աստծո համար շատ մեծ մեկը չէր և ասաց. «Սա Տիրոջ պատերազմն է, և Տերը ձեզ մեր ձեռքը պիտի մատնի» (Հմ.47): Սպառնալիքը կարող է իրական լինել, սակայն Նա, որ մեզ հետ և մեզ համար է, ավելի մեծ է, քան մեր դեմ եղողը:

Կարդա՛ր
Ա Թագ. 17.4-7, 45-50

Ոմանց աչքը ռազմակառքերին է, ուրիշներինը՝ երկարներին: Իսկ մենք մեր Աստծու ամու՛նն ենք կանչում: Սաղմ. 19.8:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ Դու ավելի մեծ ես, քան որևէ այլ հսկա իմ կյանքում: Ես վստահում եմ Քեզ: Ամեն:

Մեր դիմագրաված ահեղ պատերազմները մեզ կարող են վախի մեջ պահել, սակայն Աստծուն դառնալով, մենք կկարողանանք այն հաղթահարել:

Չարցնել Աստծուն

Երբ ամուսինս՝ Դենը, հիվանդացավ քաղցկեղով, չէի կարողանում գտնել այն ճիշտ ձևը, որով խնդրեի Աստծուն, որ բուժեր նրան: Ես կարծում էի, որ ուրիշներն էլ ունենան նման լուրջ հարցեր, ինչպիսիք են պատերազմները, սովը, չքավորությունը, բնական աղետները և այլն: Հետո մի օր առավոտյան աղոթքի պահին լսեցի, որ ամուսինս խոնարհաբար խնդրում է. «Սիրելի՛ Տեր, խնդրում եմ՝ բուժի՛ր հիվանդությունս»: Այս պարզ, բայց սրտազին աղերսը ինձ սովորեցրեց չբարդացնել յուրաքանչյուր աղոթքի խնդրանք, որովհետև Աստված լսում է մեր օգնության արդար խնդրանքները: Ինչպես որ Դավիթը պարզ կերպով հարցրեց. «Դարձի՛ր, Տեր, փրկի՛ր ինձ, ազատի՛ր ինձ, Տեր, քո ողորմությամբ» (Սաղմ.6:5): Իր հուսահատության ու հոգեկան շփոթության պահին Դավիթը այդ բանը կարևորեց: Նրա իրական վիճակը նկարագրված չէ սաղմոսում, բայց իր աղերաների անկեղծությունը ցույց է տալիս աստվածային օգնության ու բարեփոխման մեծ ցանկությունը: Նա գրեց. «Ես հոգնեցի իմ հառաչանքներից, ամեն գիշեր հեծեծանքով լվացի մահիճն իմ և արտասուքով անկողինս թրջեցի» (Հմ.7): Դավիթը թույլ չտվեց, որ իր սահմանափակումները, ներառյալ նաև իր մեղքը, դրդեն սեփական կարիքների համար դիմել Աստծուն: Ուստի Աստծո պատասխանից էլ առաջ նա կարողացավ ցնձալ, ասելով. «Տերը լսեց իմ լացի ձայնը, Տերն ականջ դրեց իմ աղոթքներին, Տերն ընդունեց իմ խնդրանքները» (Հմ.10): Հակառակ մեր շփոթության ու անվստահության՝ Աստված լսում ու ընդունում է իր զավակների անկեղծ խնդրանքները: Նա պատրաստ է լսելու մեզ, հատկապես երբ մենք ամենից ավելի ունենք իր կարիքը:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, ինչպես ու մեր սրտերն են մաքրում, մեզ քաջություն տուր՝ խնդրելու Քո երկնային օգնությունը և հավատալու, որ լսում ես ու կպատասխանես մեզ: Ամեն:

Ցավե՞ր ունես: Դիմի՛ր Աստծուն և նա կլսի ու կազատի քեզ:

Կարդա՛
Սաղմոս 6. 4-9

Տերը լսեց իմ լացի ձայնը, Տերն ականջ դրեց իմ աղոթքներին, Տերն ընդունեց իմ խնդրանքները:
Սաղմոս 6. 10

Հիսուսը և ավելի մեծ պատմությունը

Բարեկամներիցս մեկը առաջարկեց մնալ մեր փոքրիկների մոտ, որպեսզի ես ու տիկինս դուրս գանք ու հաճելի ժամանակ անցկացնենք: «Մի շքեղ տեղ կգնաք», -ասաց նա: Բայց մենք, լինելով գործնական մարդիկ, որոշեցինք զնալ միթերք գնելու: Երբ միթերքի տուպրակներով տուն վերադարձանք, մեր բարեկամը հարցրեց, թե ինչու՞ որևէ հատուկ բան չարեցինք: Բացատրեցինք, որ կարևորը ոչ թե ժամանցի ձևն է, այլ այն, թե ում հետ ես անցկացնում ժամանակդ: Աստվածաշնչի հազվագյուտ գրքերից մեկը, որում Հիսուսի արածների ու ասածների մասին որևէ հիշատակություն չկա, Հռութի գիրքն է: Շատերն այն ընթերցում են որպես մարդկային պարզ զգացմունքների մասին մի պատմություն: Սակայն իրականում դրա մեջ գերբնական բան կա: Հռութի և Բոոսի միացումով ծնվում է նրանց զավակ Օբեդը, որը Դավթի հոր՝ Հեսսեի հայրն է (4.17):

Կարդա՛ր 3ուրք 4. 13-17

Որովիետև Արաստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնք Աստված առաջուց պատրաստեց մեզ համար, որպեսզի դրանցով ընթացանք: Եփես. 2.10

Մատթեոսի Ավետարանում կարդում ենք, որ Հիսուսը ծնվել է Դավթի տոհմից (Հմ.1.1): Հիսուսը քողագերծում է Հռութի ու Բոոսի սովորական պատմությունը և հայտնում Աստծո հիասքանչ ծրագրերի ու նպատակների մասին:

Երբ մեր կյանքերին նայենք Քրիստոսի միջոցով, կտեսնենք, որ Նա հավիտենական նշանակություն է տալիս նույնիսկ ամենասովորական հանգամանքներին ու հարաբերություններին:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, հավիտենական նպատակ և իմաստ ես տալիս ամենասովորական հանգամանքներին: Օգնի՛ր, որ իմ բոլոր հարաբերությունները տեսնեմ Քո՛ միջոցով: Ամեն:

Եթե մտածում ես, որ քո կյանքը շատ սովորական է, թու՛յլ տուր, որ Աստված այն դարձնի արտասովոր ու առանձնահատուկ:

Յուսի վերածված ջուրը

Թոմի և Մարկի միսիոներությունը կյանքեր է թարմացնում: Այս գաղափարը հատակ երևում է նրանց թողարկած տեսաերիզում, որը պատկերում է մի խումբ երեխաների, որոնք առաջին անգամ հայտնվելով ջրի թարմացնող ցնցուղի տակ, ծիծաղում են ու պարում: Միսիոներները նաև համագործակցում են տեղի եկեղեցիների հետ՝ Հայթիի ջրհորերի վրա ջրագտման ցանց տեղադրելու համար, որպեսզի կեղտոտ ջրից առաջացող հիվանդությունները կանխվեն: Մաքուր ու թարմ ջուր ունենալու հույսը ապագայի հանդեպ հավատով է լցնում մարդկանց հոգիները:

Հովհաննու 4-ում Հիսուսը ակնարկում է «կենդանի ջրի» շարունակական թարմացնող էություն մասին: Հոգնած ու ծարավ Հիսուսը ջուր է խնդրում սամարացի մի կնոջից (Հմ. 4-8): Այդ խնդրանքին հետևում է խոսակցություն, որի ընթացքում Հիսուսը կնոջն առաջարկում է «կենդանի ջուր» (Հմ. 9-15), «այն ջուրը, որ ես նրան կտամ, նրա մեջ ջրի աղբյուր կլինի, որ հավիտենական կյանքի համար կբխի» (Հմ. 14): Կենարար ջուրը տեսնում ենք նաև հետագա գլուխներում, երբ Հիսուսն ասում է. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա և խմի: Ինձ հավատացողի փորից կենդանի ջրերի գետեր կբխեն»: Այստեղ Հովհաննեսը բացատրում է. «Սա ասաց այն Հոգու մասին, որին ընդունելու էին նրան հավատացողները» (7. 37-39): Հոգին կենարար ջրի նման բնակվում է հավատացյալի ներսում՝ թարմացնելով ու բարեփոխելով նրան:

Աղոթք - Սիրելի՛ Դայր, շնորհակալ եմ, որ տալիս ես Դոգին: որժի՛ր մեր մեջ, որպեսզի մեր կյանքերով ուրիշներին առաջնորդենք դեպի Քեզ: Ամեն:

Կարդա՛
Յուսի. 4. 4-17

Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա և խմի: Ինձ հավատացողի փորից կենդանի ջրերի գետեր կբխեն»: Այստեղ Հովհաննեսը բացատրում է. «Սա ասաց այն Հոգու մասին, որին ընդունելու էին նրան հավատացողները» (7. 37-39): Հոգին կենարար ջրի նման բնակվում է հավատացյալի ներսում՝ թարմացնելով ու բարեփոխելով նրան:

**Յիսուսը հագեցնում է մեր ծարավը: Մնում է, որ Յիսուսի՝
մեզ արածով կիսվենք ուրիշների հետ:**

Ո՞րն է քո արժեքը

Ճանաչված գրող Քեյթլինը նկարագրում է այն հուսահատությունը, որ պատել էր իրեն և որի դեմ ինքը պայքարում էր: Դառն զգացմունքները այնքան խորն էին խոցել նրա հոգին, որ նա ասում էր. «Ես որքա՛ն անցանկալի էի: Ես այն չէի, ում դու երազում էիր ճանաչել»: Նա իրեն սիրո համար անարժան էր համարում, այնպիսի մեկը, որին օգտագործում ու դեն են նետում:

Սա Աստծո համար հասկանալի է: Նա սիրով հովվում էր Իսրայելի ժողովրդին, և երբ նրանց ասաց. «Եթե ձեր աչքին հաճելի է թվում, ապա տվե՛ք իմ վարձը, իսկ եթե ոչ՝ ասացե՛ք: Եվ նրանք կշռեցին իմ վարձը՝ երեսուն արծաթ»

(Ձաք.11.12): Երեսուն արծաթը մի ստրուկի արժեք էր, որ տերերը ստանալու էին, եթե նրան ցուլը հարվածեր (Ել. 21.32): Աստված վիրավորվեց, երբ նրա աշխատանքը նվազագույն արժեքով գնահատվեց և թողեց, որ Ձաքարիան այդ դրամը նետի բովի մեջ (Ձաք. 11.13):

Հիսուսը հասկանում է, որ դա պարզապես բարեկամի դավաճանությունն էր: Իրեն արհամարհել էին: Հրեա առաջնորդները արհամարհեցին Քրիստոսին և Հուդային երեսուն արծաթ առաջարկեցին Հիսուսի մատնություն համար (Մատթ. 26.14-15, 27.9): Հուդան Հիսուսին այնքան անարժեք նկատեց, որ Նրան ծախեց գրեթե ոչնչով: Եթե մարդիկ արժեզրկեցին Հիսուսին, զարմանալի չէ, որ քեզ էլ արժեզրկեն: Քո արժեքը քո կամ ուրիշների ասածը չէ, այլ այն, ինչ Աստված է տեսնում: Իսկ Նա քո արժեքը այնքան մեծ է գնահատում, որ մեռնում է քեզ համար:

Աղոթք - Երկնավոր Յայր, շնորհակալ եմ, որ Դու արժևորում ես ինձ: Ամեն:

Աստված է ճշտում քո արժեքը: Դու ուրիշների տված արժեքն անտեսի՛ր:

Կարդա՛
Ձաքարիա 1. 16-27

Տերն ասաց ինձ
«Դու բովի մեջ
գցիր դա»:
Ձաք, 11.13

Մեխերի տերը

Նստում էի մեքենաս, երբ հետևի անիվի վրա մի փայլուն քան նկատեցի. մեխ էր մտել անիվի մեջ ու օդը սուղոցով դուրս էր գալիս: Բարեբախտաբար մեխը նաև փակած էր պահում անցքը, գոնե որոշ ժամանակի համար:

Նորոգման արհեստանոց գնալիս մտածում էի, թե արդյոք որքան ժամանակ է այդ մեխը մտած եղել անիվի մեջ: Օրե՞ր, շաբաթնե՞ր: Ուրքա՞ն ժամանակ է պաշտպանված եմ եղել մի վտանգից, որի մասին չեմ էլ իմացել: Մենք երբեմն կարող ենք այդպիսի պատրանք ունենալ, թե ղեկը մեր ձեռքին է: Բայց մեխի պատմությունը ինձ հուշեց, որ դա չէ իրականությունը:

Երբ կյանքը անկայուն ու անվերահսկելի է թվում, մեր Աստծուն կարող ենք վստահել: 17-րդ Սաղմոսում Դավիթը փառաբանում է Աստծուն իրեն պաշտպանելու և զորավիգ լինելու համար (Հմ.30, 36): Նա խոստովանում է. «Աստված, դու ինձ ուժ պարգևեցիր...Ընդարձակեցիր ուղիս իմ ոտքերի տակ, և ընթացքն իմ չտկարացավ» (Հմ.33, 37): Այս փառաբանությունը մեջ Դավիթը հուշակում է Աստծո մնայուն ներկայությունը:

Ես Դավիթի նման չեմ գնացել պատերազմի դաշտ, նույնիսկ իմ շավիղներից դուրս չեմ եկել՝ կյանքս քառսի չվերածելու և ավելորդ վտանգներից խուսափելու համար:

Բայց կարող եմ հանգստանալ այն գիտակցումով, որ թեև Աստված չի խոստանում ինձ հեռու պահել կյանքի բոլոր դժվարություններից, բայց գիտեմ, թե ես որտե՞ղ եմ, ու՞ր եմ գնալու և ի՞նչ դժվարություններ պիտի հաղթահարեմ:

Աղոթք - Հայր, օգնիր միշտ հիշել, որ Դու գիտես մեր արած յուրաքանչյուր քայլը, և դժվարությունների ժամանակ վստահել Քո նախատեսմանն ու պաշտպանությանը: Ամեն:

Կյանքը լի է դժվարություններով ու նեղություններով, բայց Աստված խոստացել է պաշտպանել մեզ:

Կարդա՛ր
Սաղմոս 17. 30-36

Աստուած, դու ինձ
ուժ պարգևեցիր և
իմ ճանապարհն
անբիծ դարձրիր:
Սաղմ. 17.32

Աստծո հետ քայլի՛ր

ՄԼյուիսը «Միայն քրիստոնեությունը» գրքում գրում է. «Վստահ ենք, որ Աստված չի սահմանափակվում որևէ ժամանակի մեջ: Նրա կյանքը իրար հաջորդող պահերից չի բաղկացած. տասը, քսան, երեսուն կամ աշխարհի ստեղծումից ի վեր: Աստծո համար ամեն ինչ ներկա է»: Եվ սպասվող եղանակներն էլ անվերջ են թվում: Սովորելով վստահել ժամանակի հավիտենական արարիչ Աստծուն՝ կարող ենք ընդունել, որ մեր դյուրաբեկ գոյությունը ապահով է Իր ձեռքերի մեջ:

Սաղմոսերգուն, հոգնած իր կրած տառապանքներից, ողբալով հայտարարում է. «Օրերս անցան ստվերի պես, և ես ցամաքեցի ինչպես խոտ: Դու, Տե՛ր, հավերժ ես, և սերնդից սերունդ է հիշատակը Քո» (Սաղմ.101. 11-12): Նա հաստատում է, որ Աստծո գործությունն ու հետևողական կարեկցությունը պիտի հասնի Իր անձնական տիրույթից այն կողմ (Հմ. 13-18): Սաղմոսերգուն նույնիսկ հուսահատություն մեջ (Հմ.19-24) կենտրոնանում է Արարիչ Աստծո գործության վրա (Հմ.25): Նրա ստեղծածները կանցնեն (Հմ. 26), «Բայց Դու նույնը կմնաս, և քո տարիները չեն անցնի» (Հմ.27):

Որևէ պարագայում Աստված բնավ չի թողնում, որ մե՛նք մեկ պաշտպանենք: Հավատքով ապրելով Աստծո ներկայությամբ՝ կարող ենք քայլել Աստծո հետ:

Աղոթք - Սիրո՛ղ Չայր, խնդրում եմք՝ սովորեցրու՛ մեզ կյանքում ապրել ներկայով՝ մերժելով վաղվա համար մտահոգվելը: Որովիետև Դու հաստատում ես Քո մշտական ներկայությունը մեզ հետ: Ամեն:

Աստված է ժամանակի հեղինակն ու Տերը: Գետևաբար ապրենք ներկայի մեջ ու վայելենք Նրա տված խաղաղությունը:

Կարդա՛ Սաղմոս
101. 11 -13, 18-28

Քո ծառաների որդիները կբնակվեն այնտեղ, և նրանց սերնդին հավիտյան հաջողությունը կուղեկցի: Սաղմ. 101.28

Գրված սրտի վրա

Որպես դասախոս՝ հաճախ եմ առիթ ունենում աշակերտների համար հանձնարարական նամակներ գրելու, երբ նրանք դիմում են առաջնորդի պաշտոնի, արտասահմանում ուսանելու կամ մեկ այլ գործի համար: Եվ յուրաքանչյուր նամակում ես գովասանքի խոսքեր եմ գրում աշակերտի նկարագրի ու հատկանիշների մասին: Անցյալում, երբ քրիստոնյաները ճամփորդում էին, իրենց հետ ունենում էին եկեղեցու տված նման «հանձնարարական նամակներ»: Այդ նամակները երաշխավորում էին, որ ճամփորդող եղբայրը կամ քույրը համապատասխան ընդունելություն ու հյուրասիրություն կարժանանար: Պողոս առաքյալը նման նամակի կարիք չուներ, երբ խոսեց կորնթացիների հետ: Նրանք իրեն ճանաչում էին: Նրանց ուղղված իր երկրորդ նամակում Պողոսն ասաց. «Շատերի նման չենք, որոնք Աստծո խոսքը խեղաթյուրում են, այլ պարզությունը, ինչպես Աստծու կողմից՝ Աստծու առաջ խոսում ենք Քրիստոսով» (Բ.Կորնթ. 2.17): Հետո հարցրեց, թե գուցե իր ընթերցողները մտածեն, որ ինքը հանձնարարական նամակ է գրում իր քարոզչու զբոսապատճառների մասին: Պողոսն ասաց, որ ինքը կարիք չունի նման նամակի, որովհետև Կորնթոսում ապրող ժողովուրդը նման էր հանձնարարական նամակի: «Դուք Քրիստոսի թուղթն եք՝ մեր ծառայությանը եղած և գրված ոչ թե թանաքով, այլ կենդանի Աստծո Հոգով, ոչ թե քարե տախտակների վրա, այլ սրտի մարմնեղեն տախտակների վրա» (Հմ.3.3): Նրանց կյանքերը վկայեցին Պողոսի քարոզած ճշմարիտ Ավետարանը «բոլոր մարդկանց կողմից կարդացված ու իմացված» (Հմ.3.2): Երբ հետևում ենք Հիսուսին, մեր կյանքը դառնում է Ավետարանի բարություն պատմություն:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, ուզում եմ, որ ուրիշները Քե՛զ տեսնեն իմ կյանքում: Թող որ ես փոքրանամ, իսկ Դու մեծանաս: Ամեն:

**Երբ մարդիկ կարդան մեր կյանքի «նամակները»,
դրանց մեջ մե՞զ կտեսնեն, թե Դիսուսին:**

**Կարդա՛ր
Բ Կորնթ. 2.17 - 3.6**

Մեր թուղթը դուք եք՝
մեր սրտում գրված
և բոլոր մարդկանց
կողմից իմացված ու
կարդացված:
Բ Կորնթ. 3.2

Անհնար է ձախողվելը

«Անհնար է ձախողվելը»-այս բառերի հեղինակը Սյուզան Էնթրենին է՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում կանանց իրավունքների պաշտպանության հայտնի գործիչներից մեկը: Թեև նա հաճախ է քննադատվել ու ձերբակալվել, մեղավոր ճանաչվել ապօրինի քվեարկելու համար, սակայն նա ուխտել էր չնահանջել, շարունակել իր պայքարը կանանց ընտրելու իրավունքի համար՝ հավատալով, որ իր բարձրացրած հարցն արդար է: Նա իր աշխատանքի արդյունքը չտեսավ, բայց նրա հայտարարությունը որպես ճշմարտություն հաստատվեց: 1920-ին սահմանադրական փոփոխության 19-րդ առաջարկը կանանց ընտրելու իրավունք տվեց: Նեեմիի համար ևս ձախողումը տարբերակ չէր, հատկապես, որ նա հզոր օգնական ուներ: Խնդրելով, որ Նա օրհնի Երուսաղեմը վերակառուցելու իր նպատակը, Նեեմին ու Բաբելոնի աքսորից վերադարձածները ձգտում էին դրա իրագործմանը: Պարիսպը անհրաժեշտ էր ժողովրդին թշնամիներից պաշտպանելու համար: Սակայն թշնամիները ուզում են խափանել այդ աշխատանքները և նենգորեն նրան կանչում են մի գյուղում հանդիպման: Նեեմին թույլ չտվեց, որ հակառակորդները խանգարեն իրեն և պատասխանեց. «Այս գործը, որ ես անում եմ, մեծ գործ է: Որպեսզի գործս չընդհատվի, ձեզ մոտ կիջնեմ, երբ ավարտեմ» (Նեեմ. 6.3): Դրանից հետո նա ազոթեց՝ ասելով. «Արդ, ես գորացրի իմ ձեռքերը և գործը գլխովի՛ն պլտի ավարտեմ» (Հմ.9): Նեեմիի հաստատակամությունը շնորհիվ պարիսպն ավարտվեց (Հմ.15): Կա՞ արդյոք մի պարտականություն, որից փորձում ես խուսափել: Խնդրի՛ր Աստծուց, որ քեզ անհրաժեշտ ուժը տա, որպեսզի կարողանաս գործդ անել:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնությանդ կարիքն ունեմ՝ շարունակելու ինձ հանձնարարված գործը, որքան էլ մեծ լինի հակառակությունը: Ամեն:

Հակառակություն և հակառակորդներ միշտ էլ կլինեն, բայց կարևորը Աստծո օգնությամբ հարատևելն է:

Կարդա՛
Նեեմիա 6. 1-9

Մեր գործի կատարումն Աստծուց էր:
Նե. 6.16

Նվիրելու հաճույքը

Ծննդյան տոներին մանուկները նվերներ են ստանում, հատկապես խաղալիքներ: Հիշում ենք մեր ստացած ու տված նվերները: Հաճելի է նվերներ տալը: Բայց երբ դա համեմատում ենք առաջին նվերի հետ, որ ստացել ենք Աստծուց՝ մանկան կերպարանքով, մեր զգացումները ոչինչ են թվում: Նվերը եկավ մի մանկան տեսքով, որը ծնվեց Բեթլեհեմի մսուրում (Ղուկ. 2.7):

Հակառակ իր խոնարհ ծնունդին, Մանկան աշխարհ գալը հայտարարվեց հրեշտակի կողմից, որն ասաց. «Ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որ ամբողջ ժողովրդինն է լինելու: Այսօր ձեր Դավթի քաղաքում Փրկիչ ծնվեց, որ է Օծյալ Տերը» (Հմ.10-11):

Այս հրաշալի լուրից հետո «երկնավոր զորքի մի բազմություն հայտնվեց, որը Աստծուն օրհնում էր և ասում. «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, երկրի վրա՝ խաղաղություն ու մարդկանց մեջ՝ հաճություն» (Հմ.13-14):

Այս տարի Ծննդյան տոների առիթով հաճույքով նվերներ բաշխենք մեր սիրելիներին՝ բնավ չմոռանալով նվերներ տալու իսկական պատճառը: Աստծո կատարած հրաշալի բարիքը, որ արեց իր ստեղծած մարդկությանը և բյուրեղացրեց՝ մեզ մեզից ազատելու համար նվիրելով իր Որդուն: Մ

ենք տալիս ենք, որովհետև ինքը տվել է:

Պաշտենք Նրան երախտագիտությունով:

Աղոթք - Երկնավոր Դայր, շնորհակալ ենք Դիսուսի՝ մեծագույն պարգևի համար: Ամեն:

Դիսուսը Աստծո տված մեծագույն պարգևն է:

Արժե նրա մասին ավելի լավ ձևով խոսել ուրիշների հետ:

Կարդա՛ր
Ղուկաս 2. 4-14

Այսօր ձեր Դավթի քաղաքում Փրկիչ ծնվեց, որ է Օծյալ Տերը:
Ղուկաս 2.11

Հոր օրհնությունը

Վերջերս մեր եկեղեցու անդամներից շատերը, որոնք իրենց հայրերի հետ աղքատիկ հարաբերություններ ունեն, խնդրեցին, որ որպես սիրող հոր մարմնացում, օրհնեմ իրենց: Իմ օրհնությունն մեջ ներման խնդրանք կար հայրերի այն վերաբերմունքի համար, որ նրանք ցուցաբերում են զավակների հանդեպ. վիրավորում են նրանց, անհասանելի ցանկություններ են արտահայտում կամ հեռու են մնում: Բայց նաև առատ սեր կար, հաճույք ու հիացմունք: Օրհնությունն սալով՝ արտասվեցի: Անդրադարձա, որ ե՛ս էլ կարիք ունեի նման խոսքեր լսելու, նաև իմ զավակները ունեն դրանց կարիքը: Աստծո խոսքը հաճախ է նշում, որ Աստված մեր Հայրն է: Այս իրականությունը վերահաստատում է հոր մասին մեր ունեցած խեղաթյուրված պատկերը: Աստված՝ մեր հավիտենական Հայրը, մեծ սիրով է մոտենում մեզ և մեզ «Աստծո որդիներ» է կոչում (Ա.Հովհ. 3.1): Մեր ինքնությունը, որպես Աստծո որդիներ ու զուստրեր, տեսնում է անվստահ, վախ առաջացնող աշխարհում: Հովհաննեսն ասում է. «Հիմա Աստծո որդիներն ենք, և տակավին հայտնված չէ, թե ինչ պիտի լինենք» (Հմ.2): Հաղթահարելով գոյություն ունեցող մարտահրավերները՝ ամենից ավելի կարող ենք վստահել այն բանին, որ մեր Հայրը սիրում է մեզ, ամեն ինչ անում է մեզ համար ու բնավ չի հոգնում: Երբ ամեն բան ասված ու արված է, Աստված Հովհաննեսին ներշնչած խոսքում ասում է. «Գիտենք, որ նրա նման կլինենք» (Հմ.2): Մեր վերքերի, ցավերի ու ճախորդությունների մեջ մեր բարի Աստվածը անսպառ սիրո օրհնություն է տալիս:

Կարդա՛ր
Ա Յովհ. 3. 1-3

Տեսեք, թե Հայրն
ինչպիսի՞ սեր
շնորհեց մեզ:
Ա Յովհ. 3.1

Աղոթք - Հայր, ինձ սովորեցրու՛, որ Դու իմ Հայրն ես: Թող որ շրջահայեցություն ունենամ և իմանամ, որ Դու սիրում ես ինձ: Ամեն:

Մտածի՛ր հայր բառի մասին ու տես, որ Աստված Իր սիրով վերահաստատում է հայր լինելու քո կերպարը:

«Այո»-ների շարան

Տարեդարձիս առիթով տատիկս ինձ մարգարտյա մի վզնոց էր նվիրել, որի գեղեցիկ ուլունքները փայլում էին վզիս վրա: Բայց մի օր վզնոցի թելը կտրվեց, և մարգարտյա հատիկները թափվեցին: Գետնի վրայից հավաքեցի բոլոր փոքրիկ հատիկները, և վզնոցը կրկին դարձավ ամբողջական ու տպավորիչ:

Այդ մարգարիտների նման երբեմն Աստծուն իմ ասած «այո»-ներն են փոքր թվում: Ինձ համեմատում եմ Հիսուսի մոր՝ Մարիամի հետ, որ հրաշալիորեն հնազանդ էր: Նա «այո» ասաց, երբ լսեց Աստծո՝ իրեն արված կոչը Մեսիային իր որովայնում կրելու մասին: Մարիամը պատասխանեց. «Ահա Տիրոջ աղախինն եմ. թող ինձ քո խոսքի պես լինի» (Ղուկ. 1.38): Նա հասկացավ ամեն բան, որ ակնկալվում էր իրենից: Ավելի մեծ «այո» էր, երբ նա համակերպվեց իր որդու խաչելու թյան, հանուն մարդկանց իր կյանքը տալու հետ:

Հրեշտակի ու հովիվների այցելությունից հետո «Մարիամն այդ բոլոր բաները պահում էր և իր սրտում մտորում» (Ղուկ. 2.19): «Պահում էր» նշանակում է «հավաքել», «մտորել» նշանակում է իրար կապել: Այս նախադասությունը կրկնվում է նաև Ղուկաս 2. 51-ում: Նա շատ «այո»-ներ էր ասելու իր կյանքում:

Մարիամի նման մեր հնազանդությունից բանալին էլ կարող է լինել Աստծո հրավերներին մեր ասած «այո»-ները թելով իրար կապելու մեջ: Հատիկ-հատիկ, մինչև որ դրանք դառնան կյանքի գանձը:

Աղոթք - Սիրելի՛ Գայր, օգնի՛ր, որ մեր կյանքում Քո արած գործերին կարողանանք պատասխանել «այո» ասելով: Ամեն:

Շնորհակալություն հայտնելու ի՞նչ առիթներ ունես:
Ինչպե՞ս կարելի է սովորել ավելի հնազանդ լինել:

Կարդա՛ր
Ղուկաս 2. 15-19

Մարիամն այդ բոլոր բաները պահում էր և իր սրտում մտորում:
Ղուկ. 2.19

Ծննդյան տոնի այցելում

1944-ի Ծննդյան տոնի երեկոյան Օլգ Բրինքերը բանտում մահամերձ սպասում էր Ծննդյան պաշտամունքին: Իրեն ուղեկցելու էր մեկ այլ բանտարկյալ՝ Ուիլյամ Մըքդուգըլը:

-Երաժշտությունը ե՞րբ է սկսվելու,-հարցրեց մահամերձը:

-Շուտով,- եղավ պատասխանը:

-Շատ լավ,- ասաց մեռնող մարդն ու շարունակեց.-ուրեմն կկարողանամ համեմատել այն հրեշտակների երգի հետ:

Թեև տարիներ առաջ Բրինքերը հեռացել էր Աստծո հանդեպ ունեցած հավատից, սակայն կյանքի վերջում խոստովանել էր մեղքերը և հաշտվել Աստծո հետ: Նա մահացավ խաղաղ, իր խնդրած «Լուռ գիշեր» երգը բանտի տասնմեկ հոգանոց երգչախմբի կատարումից հետո: Իմանալով, որ Բրինքերը վերստին հավատում է Հիսուսին և երկնքում միանալու էր Աստծուն, Մըքդուգըլն ասաց. «Մահը Ծննդյան առիթով եկած մի բարի այցելու էր»:

Բրինքերի՝ իր մահը կանխատեսելը հիշեցնում է Սիմեոնին, այն սուրբ մարդուն, որը Սուրբ Հոգուց պատգամ էր ստացել, որ «մահ չի տեսնելու, մինչև որ Տիրոջ Օծյալին չտեսնի» (Ղուկ. 2.26): Երբ Սիմեոնը տաճարում տեսավ Հիսուս մանկանը, բացականչեց. «Հիմա, ո՛վ Տեր, քո խոստման համաձայն, խաղաղությամբ արձակում ես քո ծառային: Որովհետև իմ աչքերը տեսան քո փրկությունը» (Հմ.29-30):

Մեծագույն պարգևը, որ մենք էլ կարող ենք ստանալ ու բաժանել, Հիսուսով փրկություն ունենալն է:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք, որ Քո մահով ու հարությանք խաղաղություն ես պարգևում մեզ: Օգնի՛ր, որ կարողանամ փրկության Քո այս պարգևը կիսել մեկ ուրիշի հետ: Ամեն:

Մահվան ստվերը Տեր Հիսուսով կարող է լինել լավագույն այցելուն մեզ համար:

Կարդա՛ր
Ղուկաս 2. 25 - 33

Հիմա, ո՛վ Տեր, քո խոստման համաձայն, խաղաղությամբ արձակում ես քո ծառային: Ղուկ. 2.29

Աճել՝ տալով

Երկու տարեկան թոռնիկս, մի տուփ մեկնելով ինձ, ուրախ- ուրախ ասաց.

-Քեզ նվեր եմ արել:

Տիկինս ժպտալով ավելացրեց, որ երեխան անձամբ է ընտրել նվերը: Տուփը բացեցի ու տեսա թոռնիկիս սիրած մուլտհերոսներից մեկին ներկայացնող Ծնունդի մի զարդարանք: Հետո անհամբեր հարցրեց, թե կարո՞ղ է տեսնել, և օրվա մնացած ժամանակը խաղաց «իմ նվերով»: Դիտելով նրան՝ ժպտում էի, որովհետև հիշում էի անցյալում իմ արած նվերները սիրելիներես: Ես էլ, երբ դպրոցական էի, Ծննդյան տոներին ավագ եղբորս նվիրել էի մի երաժշտական ձայնապնակ, որը ես շատ էի ուզում լսել և լսում էի: Եվ անդրադարձա այն հարցին, որ տարիներ անց Աստված սովորեցրել է տալ առանց անձնապաշտության: Տալը, նվիրելը մի բան է, որով մենք աճում ենք: Պողոսը գրել է. «Ինչպես որ ամեն բանում ավելանում եք..., այդ շնորհում էլ ավելանաք» (Բ.Կորնթ.8.7): Ծնորհն ավելանում է մեր տալով, և մենք հասկանում ենք, որ մեր բոլոր ունեցածը Աստծուց է, և Նա մեզ ցույց է տվել, որ «Ավելի երանելի է տալը, քան առնելը» (Գործք 20.35):

Առատաձեռն Աստված մեզ տվեց Իր լավագույն պարգևը՝ Իր միածին Որդուն, որ մեր մեղքերի համար պիտի մեռներ խաչի վրա ու հարուժյուն առներ: Նա, ով ընդունում է այս գերագույն պարգևը, չափազանց հարուստ է: Երբ մեր սրտերը կենտրոնանան Իր վրա, մեր ձեռքերը բաց կլինեն ուրիշներին սիրելու համար:

Աղոթք - Դայր, շնորհակալ եմ, որ ինձ տվել ես լավագույն նվերը՝ Քո Որդուն: Օգնի՛ր, որ Քո ցուցաբերած շնորհը բաժանեմ ուրիշներին: Ամեն:

Ընդունելով Աստծո՝ մեզ տված գերագույն պարգևը՝ Իր շնորհով կարող ենք աճել տալու, նվիրելու գործողության մեջ:

Կարդա՛
Բ Կորնթ. 8.1-9

Չրի ստացել եք,
ծրի էլ տվեք:
Մատթ. 10. 8

Մեծ խառնաշփոթ

Ամերիկյան հայտնի հեղինակ Ռոբերտ Քոլեսը «Ծառայութեան կողջին» խորագրով գրքում ներկայացրել է իր հետազոտությունները ծառայութեան մեր պատճառների շուրջ և պատմել տարեց մի կնոջ մատուցած ծառայութեան մասին: Լինելով ավտոմեքենայի վարորդ՝ նա հետաքրքրվում էր ամեն օր դպրոց փոխադրած մանուկներով, տեղեկանում նրանց տան հոգսերի և դպրոցում ունեցած հաջողությունների մասին: Իր այդ մղումը այսպես էր մեկնաբանում.«Ուզում եմ տեսնել այս մանուկների հաջողությունը կյանքում»: Բայց մեկ այլ պատճառ էլ կար: Երիտասարդ տարիներին նրան մինչև հոգու խորքը ցնցել էին իր հորաքրոջ խոսքերը: Գրողը հիշում է. «Նա մեզ ասում էր, որ Աստված նկատելու է մեր արածները, այլապես կկորչենք մեծ խառնաշփոթի մեջ»: Աստծո ուշադրութեանն արժանանալու համար այդ կինը միշտ եկեղեցի էր գնում, որպեսզի «Նա տեսնի իմ հավատարմությունը» և ուրիշներին էր ծառայում, «որպեսզի Աստված ուրիշներից լսի իմ արածների մասին»: Այս խոսքերը կարգալով՝ շատ տխրեցի: Ինչպե՞ս կարող էր այդ կինը չիմանալ, որ ինքն արդեն՝ Աստծո ուշադրութեանն արժանացել է (Մատթեոս 10.30): Ինչպե՞ս կարող էր նա լսած չլինել, որ Հիսուսն արդեն արել էր հարկավոր ամեն ինչը (Հռոմ. 8.1): Ինչպե՞ս կարող էր նա չիմանալ, որ «չնորհով եք փրկված հավատի միջոցով, և սա ոչ թե ձեզանից է, այլ Աստծո պարգևն է: Ոչ թե գործերից, որպեսզի մեկը չպարծենա» (Եփես. 2. 8-9): Հիսուսի կյանքը, մահն ու հարությունը լուծել են Աստծո հետ մեր ունենալիք հարաբերութեան հարցը և մեզ արտոնել, որ ծառայենք ուրիշներին:

Կարդա՛
Եփես. 2. 4-10

Շնորհով եք փրկված հավատի միջոցով, և սա ոչ թե ձեզանից է, այլ Աստծո պարգևն է: Եփես. 2.8

Աղոթք - Հայր, օգնի՛ր՝ վստահելու, որ Դու արդեն արել ես անհրաժեշտ ամեն բան, որպեսզի ընդունելի լինեն Քեզ համար: Ամեն:

Բարի գործեր անելով չէ, որ Աստված մեզ ընդունում է, այլ իր հանդեպ ունեցած մեր հավատով:

Իր խոսքով առաջնորդված

Լոնդոնյան BBC ռադիոկայանում Պոլ Առնոլդի հաղորդման գլխավոր պարտականությունը թատերական ներկայացումներում «քայլերի ձայն» հանելն էր: Երբ դերակատարները կարգում էին տեքստերը, Պոլը իր ոտքերով ձայներ էր հանում՝ ուշադիր հետևելով, որ քայլերի ձայները համապատասխան լինեն դերակատարի ձայնին ու խոսքերին: Նա բացատրում է, որ գլխավոր բարդությունը պատմական դերակատարի հետ համահունչ լինելն է «ասես երկուսս միասին ենք աշխատում»:

118-րդ սաղմոսի հեղինակը ևս ձգտում էր ունենալ գործակցություն աստվածային մի տարբերակ, որը կշեռտեր Աստծո խոսքով ապրելու կարևորությունը: Սաղմոսի առաջին համարում ասվում է. «Երանի՛ նրանց, ովքեր անբիժ ուղի են բռնել և ընթանում են Տիրոջ օրենքով»: Աստծով այդ ճամփով առաջնորդվելով ու Իր ցուցումներին հետևելով՝ մենք կարող ենք մաքուր լինել (Հմ.9), անարգանքները հաղթահարել (Հմ.23) և ազահությունից փախչել (Հմ.36): Նա պիտի օգնի մեզ, որ կարողանանք դիմադրվել մեղքին (Հմ.61), աստվածավախ բարեկամներ գտնել (Հմ.63) և ցնծությունք ապրել (Հմ.111): Աստվածաբան Չարլզ Բրիջսը, մեկնաբանելով հիշյալ սաղմոսի 133-րդ համարը, գրում է. «Երբ մի քայլ եմ անում դեպի աշխարհ, թող որ վստահ լինեմ, որ այդ քայլս հրամայված է Աստծո խոսքում և ցույց է տալիս Քրիստոսին՝ որպես կատարյալ օրինակ»: Այս ձևով քայլելով՝ մենք Քրիստոսին ցույց կտանք աշխարհին:

Կարդա՛ Սաղմոս
118. 1, 133-136

Ճանապարհն իմ ուղղի՛ր քո խոսքի համաձայն, որ զանազան մեղքեր չտիրեն ինձ: Սաղմ. 118. 133

Աղոթք - Հայր, հրամայի՛ր, որ քայլերս անեմ քո խոսքի մեջ եղող իմաստնությամբ, որպեսզի դրանք օգնեն ինձ՝ Քեզ նման քայլելու: Ամեն:

**Տիրոջ հետ քայլելով՝ մենք պետք է կարողանանք
Իրեն ավելի նմանվել և բարիքներ վայելել:**

Երբեք չմոռացված

Զավակներին ցույց տալու համար, որ դաշնամուր նվագելու հիմնական սկզբունքները գիտեմ, նստեցի ու սկսեցի Մի մաժոր չափով նվագել: Ինքս էլ զարմացա, որ թեև արդեն քսան տարի դաշնամուր գրեթե չէի նվագել, այնուամենայնիվ հիշում էի: Ոգևորվելով՝ շարունակեցի իրար հետևից նվագել յոթ տարբեր չափեր: Փաստորեն տարիներ առաջ պարապելու ժամանակ նոտաներն ու նվագելու արվեստը դրոշմվել են մատներին «հիշողության» վրա և շուտով ամեն ինչ վերականգնվեց:

Կարդա՛
Եսայի 49. 8-16

Ես քեզ չեմ մոռանա:
Ես. 49.15

Մի շարք բաներ կան, որ չեն մոռացվում: Բայց Աստծո սերը իր զավակների հանդեպ շատ ավելի խորն է դրոշմված, քան որևէ մարդ հիշատակ: Աստված չի կարող մոռանալ նրանց: Այս բանը լսելու կարիք ունեին նաև իսրայելցիները, երբ աքսորի ժամանակ Աստծուց մոռացված լինելու զգացողություն ունեին (Ես. 49.14): Եսայու միջոցով իր տված պատասխանը նշանակալից էր. «Ես քեզ չեմ մոռանա» (Հմ.15): Իր ժողովրդին օգնելու Աստծո խոստումն ավելի վստահելի է, քան մոր խոստումը իր զավակին:

Վստահեցնելու համար իր ունեցած սիրո մասին, Նա իր նվիրումը այսպես պատկերեց. «Ահա իմ ձեռքերի փերի մեջ գծագրեցի քո պարիսպը, և ամեն ժամ դու իմ առաջ ես» (Հմ.16): Հիրավի, իր ժողովրդի հանդեպ Աստծո ունեցած մնայուն գիտակցությունը գեղեցիկ պատկեր է: Այսօր մենք հեշտությամբ կարող ենք մոռանալ կամ անտեսել: Որքա՛ն մխիթարական է հիշել, որ մենք Աստծո ձեռքերի վրա գծագրված ենք, որ մեզ միշտ հիշում, սիրում ու հոգ է տանում մեր Հայրը:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ բնավ մոռացված չեմ: Երբ ուրիշներից լքված զգամ, օգնիր հիշել ու հանգստանալ Քո անվերջ ու մնայուն սիրո մեջ: Ամեն:

Աստծո՝ մեր հանդեպ մնայուն սիրո համար պետք է վստահ լինել, որ Նա մեզ բնավ չի մոռանում:

Սիրով լվացված

Հարավային Կալիֆորնիայի շրջանում գտնվող փոքր եկեղեցիներից մեկը Աստծո սերն ինչ-որ ձևով արտահայտելու մի առիթ ստեղծեց: Հավատացյալները հավաքվեցին տեղական հագուստի լվացման մի սրահում՝ նյութական կարիքի մեջ եղողներին օգնելու համար: Նրանք միասին լվացին ու ծալեցին նրանց հագուստները, երբեմն էլ տաք ճաշ ու տոպրակներով մթերք բաժանեցին նրանց: Հետո կամավորներից մեկը նկատեց, որ մեծագույն պարզեատրում էր «այդ մարդկանց հետ հաղորդակցվելն ու նրանց պատմությունները լսելը»: Հիսուսի հետ իրենց ունեցած հարաբերությունյան շնորհիվ այս կամավորները ցանկացան իրենց հավատը սիրո խոսքերով ու գործերով ավելի գործնական դարձնել: Դա օգնեց նրանց զարգացնելու ուրիշների հետ իսկական հարաբերություններ:

Հակոբոս առաքյալը հաստատում է, որ վկայող հավատացյալի յուրաքանչյուր բարեսիրական արարք իսկական հավատի արդյունք է: «Այդպես էլ հավատը, եթե գործ չունենա, ինքնին մեռած է» (Հակ. 2.17): Հայտարարելով, թե մենք հավատում ենք, դառնում ենք Աստծո որդիներ բայց երբ Իրեն ծառայում ենք ուրիշների՝ ծառայելով, վարվում ենք այն հավատացյալների նման, որոնք վստահում ու հետևում են Հիսուսին (Հմ.24): «Որովհետև ինչպես որ մարմինն առանց հոգու մեռած է, այդպես էլ հավատն առանց գործերի մեռած է» (Հմ.26): Անձամբ ընդունելով, որ Աստծո զոհաբերությունը խաչի վրա մեզ լվանում է կատարյալ սիրով, կարող ենք պատասխանել իսկական հավատով, որը երևում է ուրիշների համար մեր արած ծառայությունների մեջ:

Աղոթք - Տե՛ր, հեղեղի՛ր մեր կյանքերը Քո կատարյալ ու մաքրող սիրով, որպեսզի կարողանանք այն ուրիշների կյանքի մեջ ներարկել: Ամեն:

Եթե անձնապես ճանաչում ես Տիրոջը, ցո՛ւյց տուր այդ հավատը քո սիրո խոսքերով ու գործերով:

Կարդա՛ր Յակոբոս 2. 14-26

Արդ տեսնո՞ւմ եք, որ մարդ գործերով է արդարանում և ոչ միայն հավատով: Յակ. 2.24

Օգտակար թերություն

Երուսաղեմ քաղաքի արևելյան կողմում մի բնական աղբյուր կա: Հին ժամանակներում այն քաղաքի ջրի միակ մատակարարն էր, գտնվում էր քաղաքի պարսպից դուրս և դրանով իսկ Երուսաղեմի ամենախոցելի կետն էր: Որովհետև եթե քաղաքի վրա հարձակվող որևէ թշնամի փոխեր աղբյուրի ջրի ուղղութիւնը, կնշանակեր, որ անխորտակելի քաղաքը հանձնված է:

Եգեկիա թագավորը այս հարցը լուծելու համար 1750 ոտնաչափ ժայռի մեջ ջրատար փորել տվեց, որը աղբյուրը կապում էր քաղաքի ներսում գտնվող ավազանին (տե՛ս Դ. Թագ. 20.20, Բ.

Մնաց. 32.2-4): Սակայն այդ բոլոր գործերի ժամանակ Եգեկիան «չտեսավ այն շինողին, չճանաչեց նրա հիմնադրողին» (Ես. 22.11): Ինչու՞:

Աստված Ի՛նքը այնպես «կազմակերպեց», որ Երուսաղեմ քաղաքի ջրի աղբյուրը պաշտպանված չլինի: Պարսպից դուրս եղող աղբյուրը մշտական հիշեցում էր քաղաքի բնակիչներին, որ իրենց փրկության համար պետք է միշտ կախում ունենան Աստծուց: Հնարավոր է, որ մեր ունեցած թերությունը մեր օգտի համար լինի: Արդարև, Պողոս առաքյալն ասաց. «Ավելի հոժարությունը իմ տկարություններով կպարծենամ, որպեսզի Քրիստոսի գորությունն իմ մեջ բնակվի: ...Որովհետև երբ տկարանում եմ, այն ժամանակ զորանում եմ» (Բ. Կորնթ. 12.9-10): Կարո՞ղ ենք մենք մեր սահմանափակումները նկատի առնել որպես պարգևներ, որոնք Աստծուն բացահայտում են որպես մեր գորություն ու ապավին:

Աղոթք - Չայր, տկար եմ: Աղոթում եմ ուրիշները տեսնեն, որ Դու ես իմ զորությունը: Ամեն:

Թերություններ ու տկարություններ ունենք ու միշտ էլ կուՆենանք: Բայց դրանք վստահություն են ներշնչում, որ Աստծուն կարող ենք վստահել:

Կարդա՛ր
Եսայի 22. 8-11

Չտեսավ այն շինողին,
չճանաչեց նրա հիմ-
նադրողին:
Ես. 22.11

Գեղեցիկ պտուղ

«Ծաղիկների քաղաքի» հիմնադիր Ռեբեկա Լեմոս-Օթերոն առաջարկում է. «Մանուկները պետք է հնարավորություն ունենան սերմեր գցելու պարտեզում և տեսնելու, թե ինչպես են դրանք ծլում»: Թեև սա ճիշտ պարտիզպանության լավագույն օրինակը չէ, բայց ցույց է տալիս այն իրողությունը, որ յուրաքանչյուր սերմ ծլելով կյանք է առաջացնում: 2004-ից ի վեր «Ծաղիկների քաղաքը» դպրոցների և համեստ կարողություն ունեցող մարդկանց համար պարտեզներ է ստեղծել, որոնց միջոցով երեխաները պատկերացում են կազմում սնունդի և աշխատանքի մասին: «Բաղաքում ստեղծված այդ փոքրիկ, կենսունակ, կանաչ միջավայրերը փոքրիկների համար հնարավորություն են դուրս գալու և օգտակար ու գեղեցիկ բաներ ստեղծելու», -ասում է Ռեբեկան: Հիսուսը մի պատմություն էր պատմում սերմանելու մասին և առանձնացնում սերմի այն հատիկը, որը «հարյուրապատիկ բերք էր տալիս» (Ղուկ. 8:8): Սերմը Աստուծո բարի լուրն է՝ ցանված «բարի հողում», «Իսկ այն պարարտ հողի միջինները նրանք են, որ բարի ու հոժար սրտով լսում և ընդունում են խոսքը ու համբերությամբ պտուղ են տալիս» (Հմ. 15): Հիսուսն ասում է, որ պտղատու լինելու միակ ձևը Իրեն կապված լինելն է (Հովհ. 15:4): «Բայց Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն: Այսպիսիների դեմ օրենք չկա» (Գաղ. 5:22-23): Նա մեր մեջ աճած պտուղն օգտագործում է ուրիշների կյանքին դիպչելու համար, որոնք փոխվում են և իրենց կյանքում նոր պտուղներ աճեցնում՝ այսպիսով ստեղծելով մի գեղեցիկ կյանք:

Կարդա՛

Ղուկաս 8. 4-8, 11-15

Սերմն Աստուծո

խոսքն է: Ղուկ. 8. 11

Աղոթք - Դայր, ուզում եմ գեղեցիկ կյանք ունենալ: Խնդրում եմ իմ մեջ ծլեցրու՛ Քո պտուղը, որպեսզի իմ ապրած կյանքով Քե՛զ ցույց տամ: Ամեն:

Եթե ուզում ես քո կյանքով բարի պտուղներ տալ, Նրա մեջ հաստատ մնա և փառք տուր Աստուծուն:

Նյութերի ցանկ

Ազնվություն.....	Դեկ. 5
Աղոթք.....	Հոկ. 15, նոյ. 9,11, դեկ. 13
Աշխարհայացք.....	Նոյ. 18
Աստվածաշունչ.....	Հոկ. 6,17, դեկ. 27
Աստծու հետ հաղորդակցություն.....	Նոյ. 19
Աստծու հոգածությունը.....	Նոյ. 16
Աստծու սերը...Հոկ. 3,10,12,17,14,29,30, նոյ. 7,10,12,13,22, 25, դեկ. 14,16,17,22, 28,29	
Աստծուն սպասել.....	Դեկ. 18
Աստծուն վստահել.....	Հոկ. 4,5,8,9,11,28, նոյ. 7,10,12,13,22,25, դեկ. 14,16,17,22,28,29
Ավետարանչություն.....	Հոկ. 27, նոյ. 15,24 դեկ. 31
Բանավոր չարաշահում.....	Հոկ. 23
Բարեկամություն.....	Նոյ. 13
Գոհաբանություն.....	Նոյ. 28, դեկ. 7,8
Գոհունակություն.....	Հոկ. 1, նոյ. 27
Երջանկություն.....	Դեկ. 1
Ինքնապատկեր.....	Նոյ. 25, դեկ. 16
Ծերություն.....	Հոկ. 20, դեկ. 26, 29
Ծառայություն.....	Հոկ. 20, դեկ. 26,29
Կյանքի պայքարներ.....	Հոկ. 4,8,9,24, նոյ. 2,21, դեկ. 1,8
Հավածանք.....	Հոկ. 28,30, դեկ. 20
Հավատացյալների միաբանություն.....	Նոյ. 14
Հավատքի պատմություններ.....	Դեկ. 10
Հավատք.....	Դեկ. 24
Հարաբերություններ.....	Հոկ. 2,25, դեկ. 22
Հեզություն.....	Հոկ. 11
Հիվանդության դիմադրել.....	Նոյ. 6

Հնագանդուծյուն.....	Հոկ. 6, դեկ. 23
Հոգևոր պարգևներ.....	Հոկ. 5,20,նոյ. 30
Հոգևոր աճում.....	Նոյ. 26,30, դեկ.31
Հոգեկան բարեփոխուծյուն.....	Նոյ. 23, դեկ. 24
Հույս.....	Նոյ. 6, դեկ. 1
Մեղք.....	Հոկ. 2, նոյ. 17,22
Մտահոգուծյուն.....	Հոկ. 14
Նախաձեռնուծյուն.....	Հոկ. 5
Ներել ուրիշներին.....	Դեկ. 11
Պաշտամունք.....	Հոկ. 14,18, դեկ. 7
Սեր ուրիշների հանդեպ.....	Հոկ. 27, նոյ. 3,5,18,29, դեկ. 5
Սխալ ուսուցում.....	Դեկ. 2
Սուրբ Հոգի.....	Նոյ. 5, դեկ. 15
Վախ.....	Հոկ. 14, նոյ. 4, դեկ. 9,12
Տալ.....	Դեկ. 6,25
Փորձուծյուն.....	Նոյ. 17
Փրկուծյուն.....	Հոկ. 21,26,31, Նոյ. 2,25, դեկ. 25,24,26
Քաջակերուծյուն.....	Հոկ. 24, նոյ. 14, դեկ. 6
Քրիստոս Փրկիչ.....	Հոկ. 19,21,22
Քրիստոսի Աստվածուծյունը.....	Դեկ. 2
Քրիստոսի ծնունդը.....	Դեկ. 6,21,23,24,25
Քրիստոսի մահը.....	Դեկ. 31
Քրիստոսի համար ապրել.....	Նոյ. 15
Քրիստոսի հրաչքները.....	Հոկ. 22
Քրիստոսի նման ապրել.....	Հոկ. 7,13,16,23, նոյ. 8,20,23,24, դեկ. 3,19,27
Քրիստոսի վերադարձը.....	Հոկ.10, 13

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքուկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. (374) 94 52 75, 95 02 95

Անուն, ազգանուն

Հասցե.....

Հեռախոս.....



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ
Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի և
Արցախի մասնաճյուղերին

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Էլկայք՝ www.amaa.am

Արցախ
375000 ք. Ստեփանակերտ, Ալեք Մանուկյան 7ա
Հեռ. (+374) 94 52 75, (+374) 95 02 95